



32  
E-53

Տիպարատիպարատի

**ՏԻՏՈՍ  
ԱՆԴՐՈՆԻԿՈՍ**

Պրերգույթուն  
կիմզ արարիսմոյ



Անգղիականիյ թարգմանու  
Հնգիկ Աւանդ



« Առաջնորակամե գրուդ. Երևան 1983 »

Առաջաբանը և ծանոթագրությունները ՆՇԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ

2128գ ԱԿԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՆՆԱԿՈՒԹՅԱՆ  
«ՄՈՒՐԱԴՅԱՆ» ԻՎ ՍՊԱՅԻՆ  
Կրթական և Գրական  
Կենտրոնի Գ. Մ. Գ. Ս. Ս.  
Շեքսպիր, Վ.

С. 537 Տիտոս Անդրոնիկոս: Ողբերգ. 5 արար. /Անգլ. թարգմ.  
Հ. Աևանը: Առաջաբանը և ծանոթագր. Ն. Մուրադյանի:  
Եր.: Մովեստ. գրող, 1983.— 160 էջ:

«Տիտոս Անդրոնիկոս» ողբերգությունը Շեքսպիրի վաղ շրջանի գործերից է: Կրտսեղի հաճար պատմական հիմք է ծառայել նույնանուն կայսրության վրա գրեթե 401 թվականի արշավանքը: Ռիտոսի նրամանապարտությանը նույնական բանակը ջախջախում է գոթական Ռորգաներին ու գերեզարում նրանց թագուհուն, բայց ինքն ու իր հարազատներն էլ զոհ են դառնում պալատական բանտարկությունների, խարդախանքների և արյան վերածի: Չնայած ծանր տեսարաններին՝ ողբերգությունը տողոված է նույնանունի ոգով և բուն բոլոր է պատերազմի ու նախնիքի գին:

Հայերեն թարգմանված է առաջին անգամ:

4700000000  
705 (01) 83 (017) 83 «S» ԳՄԳ. 84. 4 Մբ II (Ա.ճգլ.)

William Shakespeare  
Titus Andronicus

Translated from the English by Henry Sevan  
CO—operative publishing society of foreign workers in the  
USSR, Moscow, 1937.

© «Մովեստական գրող» հրատարակչություն,  
թարգմանված է հայերեն, 1983

ՇԵՔՍՊԻՐԻ «ՏԻՏՈՍ ԱՆԴՐՈՆԻԿՈՍԸ»

Հայ ընթերցողի համար այս ողբերգությունը ոչ միայն նորություն, այլև որոշ իմաստով անսակնկալ է: Շեքսպիրին մենք գիտենք որպես «Համլետի», «Օթելլոյի», «Լիր արքայի», «Մակբեթի» հեղինակ, որպես սկզբնավորողը հոգեբանական դրամայի: Իր ստեղծագործության արշավույսին ստեղծված այս գործը, սակայն, հորինված է գեղագիտական այլ սկզբունքներով, գրեթե այլ ոճով: Ահա թե ինչու հարկ կա երկու խոսք ասելու «Տիտոս Անդրոնիկոսի» մասին:

Ողբերգության գրության թիվն ընդունվում է 1593-ը: Դա հաստատվում է նրանով, որ նույն թվականին «Լորդ Սթրենջերի ծառաներ» խումբը այն բեմադրել և խաղացել է երեք անգամ: Հրատարակության իրավունք ստանալու համար պիեսը արձանագրվել է առևտրականների Պալատում 1594-ին: Նույն թվականին էլ այն հրատարակվել է անոնիմ, ինչը սովորական երևույթ էր այն ժամանակ: Անոնիմ են լույս տեսել նաև 1600 և 1611 թվականների քվարտոները: Շեքսպիրի հեղինակությունը հաստատվում է նրանով, որ բանաստեղծի մրտերիմ ընկերներ Հեմինգը և Կոնդելը այս ողբերգությունը ևս մտցրել են 1623 թվականի հրատարակության մեջ: Սյուժեի աղբյուրը չի հայտնաբերված, թեև որոշ մտոիմներ կարելի է

գտնել Սենեկայի և Օվիդիոսի մտա: Գործողության վայրը Հրոմն է, գործողության ժամանակը՝ 401 թվականը, երբ գոթերի հյոր հարձակումը Հավերժական քաղաքի վրա անցավ անհաջող:

«Տիտոս Աղդոնիկոսը» այն գործերից է, որոնց՝ Շեքսպիրին պատկանելու փաստը կասկածի տակ է առնվել մի առանձին կրթությունը ու համառությունը, և ոչ այն պատճառով, որ պակասել են քանասիրական հավաստի տվյալները, — դա վերաբերում է այդ շրջանում գրված շատ ու շատ դրամատիկական գործերի, — այն, որ այս ողբերգությունը անհարիր է դիտվել նրա ողջ ստեղծագործության ոգուն: Իրավ, եթե մենք Շեքսպիրի 37 գործերը փնջերի կամ ջարբերի բաժանենք, ապա «Տիտոս Աղդոնիկոսը» կմաս առանձին: Դա պատկանում է ողբերգությունների այն տեսակին, որի վրա լրացուցիչ տրբվում է «արքունայի» մակդիրը:

Արթերցողին ու դիտողին Շեքսպիրի ողբերգություններն ստանց այն էլ արյունայի են թվում: «Համետ» ներկայացման վարագույրն իջնում է չորս սպանվածի վրա. «Օթելլո» ներկայացման վարագույրը՝ երեքի վրա. «Ռոմեո և Ջուլիետի» վարտին ընկնում են դարձյալ երեք հոգի և այն: Եվ, սակայն միանգամայն այլ է այս ողբերգությունը: Հենց առաջին տեսարանում հաղթական պատերազմից վերադարձող Տիտոսը բն է մտնում, մի դազաղում քերելով իր քանակին գոհված որդիների դիերի մնացորդները: Գոթերի դեմ նրա տարած հաղթության պատվին ջքահանդես է կապանակերպվում և այն կատարյալ դարձնելու համար դուրս են տանում գերի թագուհու՝ Տամորայի, որդիներից մեկին ու կտոր-կտոր անում: Դրանից հետո Տիտոս Աղդոնիկոսը սրահար է անում իր որդի Մուցիոսին այն քանի համար, որ սա դեմ է դուրս գալիս հոր

ցանկությանը՝ Լավինիային՝ իր քրոջը, կայսր Սատուրնինոսին կնության տալու:

Երկրորդ արարվածում մավր Ահարոնը սպանում է Լավինիայի փեսացու Բասիանոսին և մեղքը գցում Տիտոսի որդիներ Քվինտոսի ու Մարցիոսի վրա, որոնց մահվան է դատապարտում Սատուրնինոսը: Տամորայի որդիներ Դեմետրիոսն ու Քիրոնը ոչ միայն բռնաբարում են Տիտոսի դուստր Լավինիային, այն կտրում են նրա լեզուն ու ձեռքերը, արկելով նրան իռուելու և գրելու հնարավորությունից: Տիտոս Աղդոնիկոսը հավատալով Ահարոնի խարդավանքին, կտրում է իր աջ ձեռքը՝ հույս ունենալով այդ գոհաբերությամբ փրկելու մահվան դատապարտված որդիներին: Այդ ձեռքը նա ուղարկում է պալատ, բայց ետ է ստանում իր որդիների գլուխների հետ:

Ահարոնը սպանում է Տամորայի դայակին, որպեսզի սա չմտնի իր և թագուհու գաղտնի կապը: Վերջին արարվածում Տիտոսը Լավինիայից մի կերպ իմանալով իսկությունը, սպանում է Տամորայի որդիներին՝ Դեմետրիոսին և Քիրոնին: Հետո Աղդոնիկոսը սրանց մարմիններից կարկանդակներ է պատրաստում, որով և հյուրասիրում է մայր-թագուհուն: Մինչ այդ Տիտոսը սպանում է իր դուստր Լավինիային, որպեսզի սա իր խայտառակությամբ չսպրի աշխարհում: Այժմ էլ սրա խողիտող է անում վրեժի մեջ անհազուրդ Տամորային, բայց ինքն էլ ընկնում Սատուրնինոսի ձեռքից: Նրա վրեժն անմիջապես հանում է որդին՝ արանելով Սատուրնինոսին: Մավր Ահարոնին իր գործած անկուր ոճիրների համար կենդանի թաղում են հողում:

Ի վերջո՝ 38 դիակ, 13 սպանություն, 3 կտրված ձեռք, մի կտրված լեզու, — այսպիսին է թվարկումը այս ողբերգությունը

լցնող արասահներին: Իրոք, արյունալի՛ դրամա... Եվ այսպես կարո՞ղ էր, արդոք, այս գործը գրել Շեքսպիրը:

Զպետք է մոռանալ ամենակարևորը. Շեքսպիրի հասուն շրջանի ողբերգություններում սպանությունները ոչ միայն պատճառաբանվում, այլև հիմնավորվում են հոգեբանորեն, ուստի և ցնցող տպավորություն են գործում, անշուշտ, բայց անսպասելի, արտատոց չեն թվում: Այլ է «Տիտոս Անդրոնիկոսը»: Թեև, չնայած պատերազմի պարտին, շարունակվում է գալստային պայքարը կենաց և մահու, այնուամենայնիվ, որոշ սպանություններ կարող էին տեղի չունենալ կամ այդպիսի դաժան բնույթ չկրել, եթե հեղինակը նյութի մշակմանը ձեռնարկեր ավելի հասուն շրջանում:

Ուրեմն, ինչո՞վ բացատրել գույների այս անսովոր խտացումը: Ոչ միայն հեղինակի անփորձությամբ, ո՛չ, այլև՝ և սա ամենակարևորն է, գոյություն ունեցող ճաշակին տուրք մատուցելու ձգտումով: Ամբողջ ինդիքն այն է, որ հենց այդ ոճն էր տիրապետողն այն տարիներին, երբ հանդես էր գալիս երիտասարդ Շեքսպիրը, և այն ոճը, որ մենք սովոր ենք Շեքսպիրինը համարել, ժամանակինը չէր, այլ իրենն էր միայն, իր բերածը:

Շատ երկար ժամանակ պահանջվեց, մինչև որ շեքսպիրագետների ճնշող մեծամասնությունը հրաժարվեր այն թուր, ըստ էության հակապատմական և հակագիտական տեսակետից, թե Շեքսպիրը չէր կարող թույլ տեսարաններ կամ թույլ գործեր ունենալ, որ նրան հատուկ չի եղել ներքին պարզացումը, և որ, վերջապես, նրա երկերում տեղ գտած այն հատվածները, որոնք չեն հիշեցնում «Նավետի» հեղինակին, նրա գրչին պատկանել չեն կարող: «Տիտոս Անդրոնիկոսի» մասին կարելի է թույլ տալ նաև այն միտքը, թե նա, ամբողջ-

ջութամբ առած, մի խմբագրություն է ինչ-որ մեկ անհայտ մի ողբերգության: Բայց այս ենթադրությունն էլ ոչինչ չի փոխի: Մենք գիտենք, որ դա ընդունված էր այն ժամանակ, երբ հեղինակային իրավունքի հարցը դեռ նոր-նոր էր դրվում, և Շեքսպիրը բնավ էլ միակը չէր, որ հին կամ հնացած սյուժեների էր անդրադառնում: Մենք գիտենք նաև, որ ինչին ձեռք էր պարկում նա, ստեղծում էր մի գործ, որ հաստատապես կրթում էր նրա արվեստի և մտածողության անջնջելի կնիքը:

Եվ արդեւ, երիտասարդ Շեքսպիրը ողբերգություն էր ըստեղծում ընդառաջելով տիրող բարբերին ու ճաշակին: Հրապարակի վրա կար Թոմաս Բիդի «Իսպանական ողբերգությունը», որն այլ բան չէր ներկայացնում, քան՝ շարագործությունների մի հրեշավոր կուտակում: Շեքսպիրը այդ տեսակետից չէր կարող գերապանցել իր տաղանդավոր նախորդին ու ժամանակակիցին: Ի վերջո, ինդիքն արյունալի մահերի քանակը չէր, այլ նրանց գործած ապդեցությունը հասարակության վրա: Իսկ այդ՝ ապդեցությունն ուղիղ հարաբերական էր նրանց հոգեբանական հիմնավորմանը: Այս ուղին է տես բռնում երիտասարդ Շեքսպիրը, այստեղ է, որ նա արտակարգ հաջողությունների է հասնում հեռագայում: Հարկ չկա, որ նա հոգեբանորեն պատճառաբանի ու ցուցադրի Մակբեթի գործած բոլոր սպանությունները. մեկն էլ բավական է, եթե այն պատկերվի այնպես, ինչպես տասնամյակ հետո պիտի պատկերվեր Դունկանի սպանությունը, որպեսպի մենք տեսնենք ու ըմբռնենք, թե ինչ բան է մեծ ոճագործությունը: Սրա՛ն պիտի ձգտեր նա, սրա՛ն համներու նախնական փորձեր էր անում նա այժմ:

Բարձր ողբերգականի տեսակետից «Լիր արքան» ավելի արյունալի է, քան «Տիտոս Անդրոնիկոսը», ավելի այն տեսա-

կետից, որ «Լիր արքան» մարդու ներքին ողբերգությունն է, իսկ «Տիտոս Անդրոնիկոսը»՝ արտաքին արյունալի դեպքերի: Բայց «Լիրին» հասնելու համար երիտասարդ հեղինակը պիտի գրեր «Տիտոս Անդրոնիկոսը»: Չարմանալին այն չէր, որ Շեքսպիրը հեղինակն է «Տիտոսի», այլ այն, որ նա շատ շուտով անցավ լուրջ ողբերգության, այս դեպքում «Ռոմեո և Ջուլիետին»:

«Տիտոս Անդրոնիկոսը» հայերեն է թարգմանվում առաջին անգամ: Բանաստեղծ Նենրիկ Սևանը Շեքսպիրի հայ թարգմանիչների երիտասարդ սերնդի ներկայացուցիչներից է, այն սերնդի, որ մենք համարում ենք «մասեհյանական դպրոցի» ներկայացուցիչ: «Շեքսպիրագիտության հայկական կենտրոնում» աշխատելու տարիներին Շեքսպիրի «Երկերի լիակատար ժողովածուի» համար Հ. Սևանը թարգմանել է տասը գործ, դրանցից երեքը՝ «Նենրի Վեցերորդ» եռագրությունը, լույս է տեսել «Քրոնիկների» երկրորդ գրքում (1972):

ՆՇԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ**

- ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ. Հռոմի վերջին կայսրի որդին, հետագայում՝ կայսր  
 ԲԱՍԻՍՆՈՍ. Սատուրնինոսի եղբայրը, Լավիցիային սիրահարված  
 ՏԻՏՈՍ ԱՆԳՐՈՆԻԿՈՍ. Ազնվատոհմ հռոմեացի  
 ՄԱՐԿՈՍ ԱՆԳՐՈՆԻԿՈՍ. Ժողովրդական սրբուն, Տիտոսի եղբայրը  
**ԼՈՒՑԻՈՍ**  
 ԲՎԻՆՏՈՍ | Տիտոս Անդրոնիկոսի որդիները  
 ՄԱՐՑԻՈՍ  
 ՄՈՒՑԻՈՍ  
 ԿՐՏՍԵՐ ԼՈՒՑԻՈՍ. Լուցիոսի որդին  
 ԳՈՒԲԼԻՈՍ. Մարկոսի որդին  
 ՍԵՄՊՐՈՆԻՈՍ |  
 ԲԱՅՈՍ | Տիտոսի ազգականները  
 ՎԱԼԵՆՏԻՆ  
 ԷՄԻԼԻՈՍ. Ազնվատոհմ հռոմեացի  
 ԱԼԱՐԲՈՍ |  
 ԳԵՄԵՏՐԻՈՍ | Տամորայի որդիները  
 ԲԻՐՈՆ |  
 ԱՀԱՐՈՆ. Մավր, Տամորայի սիրեցյալը  
 ՄԻ ԶՈՐԱՎԱՐ  
 ՄԻ ՏՐԻՖՈՒՆ  
 ՄԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ  
 ՄԻ ԽԵՂԿԱՏԱԿ

ՀՈՌՄԵԱՑԻՆԵՐ

ԳՈԹԵՐ

ՏԱՄՈՐԱ. Գորերի թագունին

ԼԱՎԻՆԻԱ. Տիտու Անդրոնիկոսի դուստրը

ՄԻ ԾԾՄԱՅՐ

ՄԻ ՍԵՎԱՄՈՐԹ ԵՐԵՒԱ

Սենատորներ, տրիբուններ, սպաներ, զինվորներ և սպասավորներ  
Գործողության վայրը՝ Հռոմը և նրա շրջակայքը

## ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Հոռն: Կապիտոլիոնի առաջ: Երևում է Անդրոնիկոսների դամբարանը:

Փողեր: Մտնում են վերևի հարկը տրիբուններ ու սենատորներ: Թմբուկներով ու դրոշներով ներքևի հարկն են մտնում մի կողմից Սաստրեֆինոսն ու իր կողմնակիցները, մյուս կողմից՝ Բասիանոսն ու իր կողմնակիցները:

### ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Ալնի՛վ պատրիկներ, հովանավորներ իմ իրավունքի,  
Չենքով պաշտպանե՞ք իմ դատը արդար.  
Եվ դուք սիրելի իմ բարեկամներ, հայրենակիցներ,  
Պաշտպանե՞ք սրով իմ ժառանգական իրավունքն այստեղ.  
Ես առաջնեկն եմ այն հլոր մարդու,  
Որ կայսերական թագը Հռոմի վերջինը կրեց:  
Ուրեմն, թողե՞ք իմ հարապատ հոր փառքն ապրի իմ մեջ  
Եվ մի հանդուրժե՞ք, որ նշավակեն իմ ավագությանն  
անարժանությամբ:

ԲԱՄԻԱՆՈՍ

Հռոմեացիներ, ի՛մ բարեկամներ, իմ իրավունքի ապնի՛վ  
 պաշտպաններ,  
 Եթե երբևէ ձեր Բասիանոսը՝ որդին Կեսարի,  
 Արժանացել է սիրալիրությանն հպոր Հռոմի,  
 Ուրեմն, հսկեք Կապիտոլիումի մուտքը վեհաշուք,  
 Մի՛ թողեք երբեք ձեռքն անպատվության մտտենա գահին,  
 Որ նվիրված է առաքինության սրբագործմանը,  
 Արդարությանը, ազնվությանը և բարությանը:  
 Թող արժանիքներն արդար ընտրությամբ փայլեն Հռոմում:  
 Հռոմեացիներ, կռվեք ձեր ապատ ընտրության համար:

Մտնում է Մարկոս Անդրոնիկոսը, թագը ձեռքին

ՄԱՐԿՈՍ

Արքայադուխներ, դուք, որ ջանում եք կողմնակիցներով,  
 բարեկամներով  
 Փառամտությամբ ձեռք գցել և՛ գահ, և՛ իշխանություն,  
 Ինացե՛ք, Հռոմի ժողովուրդն արդեն,  
 Ում իրավունքը վստահված է մեզ,  
 Հռոմի կայսր է միաձայն ընտրել Անդրոնիկոսին  
 Եվ մեծարում է իր զորավարին Պիոս անունով,  
 Քանզի Հռոմին ծառայել է նա բազմաթիվ ու մեծ  
 արժանիքներով:

Այր է մի ապնիվ ու պինվոր խիզախ,  
 Եվ մեր քաղաքի պարիսպներից ներս չի ապրել ցայսօր  
 նրա պես քաջ մարդ:

Սենատի կանչով վերադառնում է ծանր մարտերից,  
 Որ նա մղում էր ընդդեմ գոթերի.  
 Նա՛ մեր թշնամու առ ու սարսափը,  
 Իր որդիներով հնապանդեցրեց ռազմատենչ մի ապգ:  
 Տասը տարի է անցել այն օրից,  
 Երբ առաջինը ինքը հանձն առավ այս դատն Հռոմի  
 Ու խարապանեց վենքով թշնամու գոռոպությունը.  
 Հինգ անգամ Հռոմ նա վերադարձավ արյամբ շաղախված,  
 Եվ ռազմի դաշտից իր որդիների դիերը բերեց:  
 Արդ, ծանրաբեռնված փառքի ավարով,  
 Վերադառնում է Անդրոնիկոսը փառապանծ Հռոմ,  
 Բարի Տիտոսը, կոխվների մեջ զորացրած ոգին:  
 Աղաչում էմ ձեզ նրա անունով,  
 Ում կուզենայիք արժանիորեն կարգել հաջորդող,  
 Հանուն սենատի սուրբ օրենքների, հանուն սրբապան  
 Կապիտոլիումի,

Որոնց ծնրալիր դուք մեծարում եք ու երկրպագում,  
 Ետ քաջվեք արագ, վենքը վար դրեք,  
 Եվ ինչպես հարկն է աղերսուններիս,  
 Պաշտպանեք ձեր դատն հնապանդորեն ու խաղաղությամբ:

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Տրիբունն այնպե՛ս գեղեցիկ խոսեց,  
 Որ մեղմեց ոգիս:

ԲԱՄԻԱՆՈՍ

Մարկ Անդրոնիկո՛ս,

Հավատում եմ քո անկեղծությանն ու շիտակությանը  
 Եվ այնպես սիրում, մեծարում եմ քեզ,

Քո ավելատոնն եղբայր Տիտոսին՝ իր որդիներով,  
Եվ Հոռնի վարդ ու գեղեցկափայլ սուրբ Լավինիային,  
Ուն խոնարհաբար մտքերս են ուղղված,  
Որ անմիջապես արձակում եմ ես իմ հավատարիմ  
բարեկամներին

Եվ դնում դատիս կշռաքարերը  
Իմ երջանկության ու ժողովրդի սիրո նժարին:

Գնում են Բաափանտսի կողմնակիցները

### ՍՍՏՈՒՐՆԻՆՈՍ

Ի՛նք բարեկամներ, դուք, որ փութացիք իմ դատի համար,  
Շնորհակալություն, արձակում եմ ձեզ:  
Իմ հայրենիքի պաշտպանությանը ու ավնիվ սիրույն  
Հանձնում եմ ահա իմ անձն ու դատը, իմ իրավունքը:

Գնում են Սատուրնինտսի կողմնակիցները

Հոռն, սիրում եմ քեզ ավելաբար,  
Դու էլ իմ հանդեպ եղիր բարեգույթ ու արդարացի:  
Բացե՛ք դարպասը և ինձ ներս թողեք:

### ԲԼՄԻՎՆՈՍ

Բարի տրիբուններ, ինձ էլ ներս թողեք, համեստ մրցակցիս:  
Փողեր: Սատուրնինտսն ու Բաափանտը մտնում են Կապիտո-  
լիում: Մտնում է մի կրթավար

### ՉՈՐԱՎԱՐ

Հոռնեացիներ՝ ձանապարհ բացեք, բարի Տիտոսը՝  
Առաքինության պաշտպանը՝ ավնիվ, ահեղ մարտերի  
կորսվարն հաղթող

Եվ ընտրեագույնս պինվորն Հոռնի,  
Վերադառնում է փառքով ու պատվով այն երկրներից,  
Որտեղ իր սրով իր տիրությաների սահմանը գծեց  
Եվ գերության լուծ դրեց Հոռնի թշնամու վրա:

Փողեր ու թմբուկներ: Մտնում են Մարցիոսն ու Մուցիոսը՝ Տի-  
տոսի որդիները, նրանց ետևից երկու մարդ քերում են սևով  
պատած մի դագաղ, հետո՝ Լուցիոսն ու Քվինտոսը, նրանց ե-  
տևից՝ Տիտոս Անդրոնիկոսը և հետո՝ Տամորան՝ գոթերի թա-  
գուհին, և նրա որդիները՝ Աբարբոսը, Դեմետրիոսը և Քիրոնը,  
հետները՝ Ահարոնը և ուրիշներ: Նրանց հետևում են պինվոր-  
ները և ժողովուրդը: Դագաղը դնում են գետնին: Խոսում է  
Տիտոսը

### ՏԻՏՈՍ

Ողջո՛ւյն քեզ, Հոռն, դո՛ւ և հաղթապանծ սգո պգեստում.  
Ահավասիկ, ինչպես եռակայմ մի նավ, որ բեռը թափած՝  
Վերադառնում է թանկ ապրանքներով այն ծովախորշը,  
Որտեղից խարխախ նա բարձրացրեց,  
Այնպես էլ ահա Անդրոնիկոսը, կուրծքը վարդարած դափնու  
ճյուղերով,

Վերադառնում է իր հայրենիքը, արցունքն աչքերին,  
Եվ ողջունում է քեզ երջանկության սուրբ արցունքներով:  
Օ՛ր, դու մեծ պաշտպան Կապիտոլիումի,  
Նայիր մոտալուռ արարողությանը ողորմածաբար:  
Ահավասիկ, Հոռն, խեղճ աճյունները քսանհինգ կտրիճ քո  
որդիների,—  
Պրիամոս արքան հինգ ռոսոնյակ նման զավակներ ուներ,—  
Ովքեր ապրում են՝ մատուցիր նրանց քո սերն անսահման,

Իսկ նրանց, ում որ բերել եմ իրենց տունը վերջնական,  
Թաղիր հարապատ նախնիների սնոտ:  
Գոթերն հայցեցին, որ պատյան դնեմ ես սուրս այստեղ,  
Բայց, անխիղճ Տիտո՛ւ, դու, որ դաժան ես քո որդոց  
հանդեպ,

Ինչո՛ւ ես թողնում քո զավակներին՝ դեռևս անթաղ  
Թափառեն ահեղ Ստիքսի ափին:  
Տեղ բացեք նրանց իրենց սիրելի եղբայրների սնոտ:

*Բացում են դամբարանը*

Հարգենք լուսթյամբ ինչպես օրեն է հանգուցյալների:  
Դուք հայրենիքի համար զոհվեցիք, ձեզ խաղաղություն:  
Օ՛, դու սրբազան, օրհնյալ ապաստան իմ ուրախության,  
Ազնիվ տոհմերի և արիության գեղեցիկ տաճար,  
Դու որդիներիս խլում ես ինձնից,  
Որպեսզի նրանք այլևս ինձ մոտ չվերապառնան:

ԿՐՏՍԵՐ ԼՈՒՑԻՈՍ

Տուր մեզ գոթերի ամենաեպարտ, հանդուճն գերուն,  
Որ կտրատեղով նրա մարմինը խարույկի վրա,  
Ad manes fratrum՝ մենք քոի մատուցենք  
Նրանց աճյունի այս հողաբանգված վնդանի առաջ,  
Որ նրանց հոգին նիրհե անխռով  
Եվ չվրդովեն մեզ երկրի վրա իրենց հայտնությամբ:

1. Եղբայրների հոգիներին (լատ.):

ՏԻՏՈՍ

Լուցիո՛ւ, ես քեզ տալիս եմ նրան՝  
Ամենատոհմիկ այն գերիներից, որն ապրում է դեռ,  
Դժբախտ թագուհու առաջնեկ որդուն:

ՏԱՄՈՐԱ

Սպասե՛ք, եղբայր-հռոմեացիներ, բարեգույթ հաղթող,  
Փառապանծ Տիտոս, խղճա մայրական իմ արցունքներին,  
Որ ավագ որդուս սիրուց են հորդուն:  
Եթե սիրում ես քո զավակներին,  
Ա՛խ, գիտցիր, ես էլ սիրում եմ որդուս:  
Հերիք չե՞, որ մեզ բերել են Հռոմ,  
Պճնապարդելու քո հաղթանակը ու վերադարձը,  
Փառաբանելով Հռոմեական գերության լուծը:  
Եվ մի՞թե պետք է իմ որդիներին  
Մորթեն փողոցում այն բանի համար,  
Որ արիաբար պաշտպան կանգնեցին իրենց մայր երկրին:  
Եթե քո որդոց սրբազան պարտքն է սուր բարձրացնել  
Հանուն պետության և իշխանության,  
Նրանք էլ, Տիտոս, նման պարտք ունեն:  
Մի՛ ապականիր քո դամբարանը նրանց արյունով,  
Մի՞թե չես ուզում դու աստվածների բնույթն ունենալ.  
Խնայիր նրանց՝ պարզելի դու ինձ բազմագթություն,  
Զե՞ որ գթությունն ավնվականի նշան է ստույգ:  
Օ՛, բարի Տիտոս, խնայիր գթաբար առաջնեկ որդուս:

21239 Լ. Գ. Պ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՄԱՐԱԿՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
«ՄԻՒՐՄԱՆ» ԵՎ «ՍՏԱՑԻ»  
Կրթության նախարարության  
ԻՐԱՎԱՅՈՒՄԻ Գ. ԵՊՍՐԵՆ

## ՏԻՏՈՍ

Չսպիր քեզ, թագուհի, և ներիր դու ինձ,  
Ահալապիկ նրանց եղբայրները քաջ,  
Ուս դուք, գոթերդ, տեսնում եք մեռած կամ թե կենդանի-  
ել նրանք հիմա իրենց մորթված եղբայրների համար  
Մոլեռանդորեն պոհ են պահանջում:  
Դատապարտված է քո ավագ որդին, նա պետք է մեռնի,  
Որպեսպի նրանք մեղմեն հեծեծող հոգիներն իրենց:

## ԼՈՒՑԻՈՍ

Դուքս տարեք նրան և անմիջապես կրակը վառեք,  
Մենք մեր սրերով խարույկի վրա պետք է կտրատենք  
Մարմինը նրա, քանի դեռ լրիվ նա չի մոխրացել:

*Գնում են Անդրոնիկոսի որդիները Ալարքոսի հետ*

## ՏԱՄՈՐԱ

Ինչպիսի՞ դաժան, անաստվածային արարողություն:

## ՔԻՐՈՆ

Մի՞թե սկյութացին այս վայրագության կենս անգամ ուներ:

## ԴԵՄԵՏՐԻՈՍ

Մի՞ համեմատիր փառատենչ Հռոմն Սկյութիայի հետ:  
Գնաց Ալարքոսն հավետ հանգչելու, իսկ մենք, կենդանի՝  
Դեռ պետք է դողանք Տիտոսի ահեղ հայացքի ներքո:  
Վճռված է, մա՛յր, բայց մի կորցնիր քո հույսը բնավ,

Այն աստվածները, որ սրոյացոց թագուհուն թողին  
Վրեժ՝ ամուլու իր վրանի տակ  
Թրակիա երկրի նենգ բռնակալից, քեզ ձեռք կմեկնեն,  
Որ դու՝ գոթերի թագուհիդ հպարտ,—  
Գոթերն էին գոթ, իսկ դու՝ թագուհի,—  
Քո վրեժն առնես այս արյունահեղ թշնամությունից:

*Վերադառնում են Անդրոնիկոսի որդիները, ձեռքներին արյունոտ սրեր*

## ԼՈՒՑԻՈՍ

Առաջնորդ ու հա՛յր, նայիր, ինչպես ենք մեր հոռմեական  
Ծնըդ կատարել: Նրա մարմնի ողջ անդամները ու  
որովայնը

Վերակրում են օրինյալ կրակին,  
Եվ ձենձոտ ծուխը կնդրուկի նման երկինքն է բռնել:  
Այլ բան չի մնում, եթե ոչ՝ թաղել մեր եղբայրներին  
Ու ռապմի փողով ողջունել նրանց այստեղ՝ Հռոմում:

## ՏԻՏՈՍ

Թող այդպես լինի, և թող Տիտոսը  
Հրածեղտի վերջին խոսքն ուղղի նրանց սուրբ հոգիներին:

*Փողեր: Դազաղը դնում են դամբարանի մեջ*

Այստեղ, իմ որդիք, դուք խաղաղությամբ ու փառքով քնեք,  
Այստեղ դուք հանգչեք, քաջեր Հռոմի,  
Հեռու երկրային պատահարներից ու փորձանքներից:  
Այստեղ չի հսկում դավաճանությունը,  
Այստեղ չեն աճում թունոտ նախանձն ու թշնամությունը,

Այստեղ չեն շաչում փոթորիկները,  
Այստեղ իջխում են լոկ լուսթյունը ու հավերժ քունը:

*Մտնում է Լավինիան*

Այստեղ, իմ որդիք, դուք խաղաղությամբ ու փառքով քնեք:

**ԼԱՎԻՆԻԱ**

Թող խաղաղությամբ ու փառքով ապրի  
Բարեգութ հայրն իմ, ազնիվ Տիտոսը:  
Իմ եղբայրների այս գերեզմանին  
Վշտիս արցունքն եմ որպես տուրք բերում  
Եվ, ծունր իջնելով ոտքերիդ առաջ,  
Ես ուրախության արցունք եմ թափում այս հողի վրա,  
Քանզի Հոռն ես դու վերադարձել:  
Օրհնիր ինձ այստեղ քո հաղթող ձեռքով,  
Քո բախտի վրա պատվափայլ Հոռնը ծափեր է տեղում:

**ՏԻՏՈՍ**

Բարեգութ Հոռն, այսպես սիրավիր դու պահպանել ես  
Վարդուրիչ գեղը իմ ծեր տարիքի,  
Որ ուրախանա սիրտն իմ վշտահար:  
Ապրիր, Լավինիա, իմ տարիներից շա՛տ երկար ապրիր,  
Թող քո մաքրափայլ առաքինության փառքն ապրի հավերժ:  
Ներքևի բնն են մտնում Մարկոս Անդրոսիկոսը և տրիբուն-  
ները: Վերադառնում են Սառուրնիմունն ու Բասիանոսը իրենց  
շքամբերով

**ՄԱՐԿՈՍ**

Վեցցե՛ Տիտոսը, մեր շատ սիրելի տերն ու եղբայրը,  
Որ շողջողում է Հոռնի աչքում որպես մեծ հաղթող:

**ՏԻՏՈՍ**

Շնորհակալություն, իմ ազնիվ եղբայր, սիրելի տրիբուն:

**ՄԱՐԿՈՍ**

Եղբորսրդինե՛ր, դուք հաղթանակով կովից դուրս եկաք,  
Չեկ հազար ողջույն, ողջույն տան ձեզ՝ ողջ մնացածներ,  
Եվ ձեզ, որ անմահ փառքով եք հանգչում:  
Ազնիվ պատրիկներ՝, որ սուր բարձրացրիք ի ծառայություն  
ձեր հայրենիքի,

Դուք ճակատագրով նման եք միմյանց,  
Բայց հաղթանակը, որ ձեռք է բերվում արարողությամբ  
թաղման հանդեսի,

Ճիշտ է ալելի, քանզի Սյուսի երջանկությունը  
Դուք ճաշակեցիք պատվի մահիճում,  
Հաղթահարելով ամեն պատահմունք:  
Տիտո՛ս, ժողովուրդն, ում բարեկամն ես եղել ճշմարիտ,  
Իր տրիբունի ու վատահեղի մարդու միջոցով  
Քեզ է ուղարկում սպիտակափայլ այս թիկնոցն անբիծ  
Եվ քեզ ընտրում է իբրև առաջնորդ  
Մեր վերջին կայսրի որդիների հետ:  
Հագիր թիկնոցը և մի գլուխ տուր անգլուխ Հոռնին:

**ՏԻՏՈՍ**

Փառավոր մարմինն լոկ պատշաճում է այնպիսի գլուխ,  
Որ չի երերում տկարությունից ու ծեր հասակից:

Ինչո՞ւ կրելով թիկնոցն սպիտակ՝ ձեզ վշտացնեմ,  
Այսօր ինձ կընտրեն կողմնակիցներս,  
Վաղն հրաժեշտ կտամ իշխանությանը ու կրանքիս ընդմիջտ,  
Ձեզ նոր հոգսերի վիհը նետելով:  
Փառապա՛նձ Հռոմ, քառասուն տարի պինվորդ եմ եղել  
Եվ հաջողությամբ վարել եմ երկրի ուժերը ռազմի,  
Եվ մարտի դաշտում քսանմեկ կտրիճ կավակ եմ թաղել,  
Որ զենքը ձեռքին քաջաբար ընկան հանուն քո պատվի:  
Տո՛ւր ինձ ծերության պատվավոր մի ցուպ,  
Բայց ոչ աշխարհը տիրող գավազան,  
Որ ուղիղ բռնեց կայսրը մեր վերջին:

#### ՄԱՐԿՈՍ

Պահանջի՛ր, Տիտոս, և դու կստանաս իշխանությունը:

#### ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Փառատենչ տրիբուն, էլ ի՞նչ ես ասում:

#### ՏԻՏՈՍ

Համբերի՛ր, Սատուրնինոս:

#### ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Հռոմեացիներ՛ր, դուք արդարացի եղեք իմ հանդեպ,  
Պատրիկներ, սուրը մի դնեք պատյան,  
Քանի դեռ Հռոմի կայսր չի դարձել Սատուրնինոսը:  
Օ՛հ, Անդրոնիկոս, դու ավելի շուտ դժոխք կգնաս,  
Քան կգողանաս ինձ ժողովրդի անկաշառ սրտից:

#### ԼՈՒՑԻՈՍ

Քեզ, Սատուրնինոս, Տիտոսն ուզում է բարություն անել  
Մեծահոգաբար, բայց ընդհատում ես դու խոսքը նրա:

#### ՏԻՏՈՍ

Գոհացիր, թեկուզ ես ժողովրդի սիրտը գողանամ,  
Միննույն է՝ նա քո կողմը կանցնի:

#### ԲԱՍԻԱՆՈՍ

Քեզ, Անդրոնիկոս, չեմ շողոքորթում,  
Բայց քեզ հարգում եմ և պիտի հարգեմ մինչև իմ մահը:  
Եթե ուզում ես կողմնակիցներիս դու պաշտպան կանգնել,  
Քեզ շնորհապարտ կլինեմ հավերժ,  
Շնորհակալությունն ապնվագույն մարդկանց հատուցումն է  
վեհ:

#### ՏԻՏՈՍ

Հռոմեացիներ՛ր և դո՛ւք, տրիբուններ,  
Ձեպնից եմ հայցում ձեր իրավունքը ու ձեր ձայնն արդար,  
Ուզո՞ւմ եք արդյոք, բարեկամաբար դրանք շնորհել  
Անդրոնիկոսին:

#### ՏՐԻԲՈՒՆՆԵՐ

Որպեսպի բարի Անդրոնիկոսին պատշաճն հատուցվի՝  
Նա հաղթանակով Հռոմ վերադարձավ,  
Ժողովուրդը կտա իր ձայնը նրան, ում նա ուզում է:

## ՏԻՏՈՍ

Ընդհակադրություն, ականիվ տրիբուններ,  
Ուրեմն հարմար է, որ ընտրեք կայսրի առաջնեկ որդուն՝  
Սատուրնինոսին, ում առաքինությունն Հռոմի վրա այնպես  
կշողա,

Ինչպես Տիտանի ճառագայթները՝ ի վերա երկրի,  
Եվ արդարությունն այս պետության մեջ կհասունանա:  
Թագադրեք նրան, այս է խորհուրդն իմ,  
Եվ բացականչեք. «Կեցցե՛ մեր կայսր Սատուրնինոսը»:

## ՄԱՐԿՈՍ

Պեթեյների ու պատրիկների արդար ընտրությամբ ու  
հավանությամբ  
Թագադրում ենք Սատուրնինոսին Հռոմի մեծ կայսր  
Եվ բացականչում. «Կեցցե՛ մեր կայսր Սատուրնինոսը»:

*Փողերը հնչում են այնքան ժամանակ, մինչև որ նրանք իջ-  
նում են*

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Վեհանձն Տիտոս, այն մեծ պարզևր,  
Որ մեզ տվեցիր թագադրվելիս,  
Ստիպում է մեզ տասն անգամ ասել շնորհակալություն,  
Որն արժանիքիդ մի մասն է կապում:  
Ես իմ գործերով պետք է հատուցեմ քո պնդվությանը:  
Տիտոս, որպեսզի քո հռչակավոր տոհմը բարձրանա,  
Ես Լավինիային ուզում եմ դարձնել Հռոմի կայսրուհի  
Եվ կոչել նրան սրտիս տիրուհի

Եվ ամուսնանալ սուրբ Պանթեոնում:  
Ասա ինձ, Տիտոս, քեզ դո՞ւր է գալիս իմ առաջարկը:

## ՏԻՏՈՍ

Այո, այդ կապով դուք շնորհում եք ինձ բարձր պարգև:  
Եվ այստեղ՝ Հռոմի հայացքի ներքո, Սատուրնինոսին՝  
Մեր այս տերության ականիվ արքային ու առաջնորդին,  
Ես նվիրում եմ իմ սուրբ, իմ կառքն ու գերիներին,  
Ընծաներ՝ արժան տիրոջն՝ Հռոմի:  
Ընդունիր դրանք որպես պարտքի տուրք, մեր փառքի ավար,  
Որոնք դնում եմ քո ոտքերի տակ:

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Ընդհակադրություն, իմ ականիվ Տիտոս, դու հայր իմ կյանքի,  
Ինչքա՞ն հպարտ եմ այսօր քեզանով, քո ընծաներով:  
Հոմեացիներ՝ ո, եթե մոռանամ այս անպատմելի  
Բյուր շնորհներից նվազագույնը,  
Մոռացեք ընդմիջտ ձեր տիրոջ հանդեպ ձեր վստահելի  
հավատարմությունը:

## ՏԻՏՈՍ

Այժմ, թագուհի, գերին եք կայսրի,  
Հարգելով նա ձեր դիրքն ու պատիվը,  
Չեզ ու ձերոնց հետ կվարվի ականիվ:

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

(առանձին)

Օ՛, գեղեցիկ կին, հավատա դու ինձ,  
Ես քեզ կընտրեի, թե կարենայի վերստին ընտրել:

(բարձր)

Չքնաղ թագուհի, ցրիր քո դեմքի ամպերը մռայլ,  
Թեև պատերապսի պատահումնքն երկնեց փոփոխությունը  
այս ուրախության,

Բայց քեզ Հռոմում չեն խայտառակի  
Եվ աննւորեք քեզ կճանաչեն որպէս թագուհի,  
Դու ինձ հավատա, մի թողնիր երբեք,  
Որ ահաբեկի դժգոհությունը հույսերդ բոլոր:  
Տիրուհի, ով քեզ մխիթարում է, նա էլ ավելին  
Քեզ կդարձնի, քան թե գոթերի հպարտ թագուհի:  
Լավինիան, արդյոք, չի՞ վիրավորվում իմ այս բառերից:

### ԼԱՎԻՆԻԱ

Օ՛, երբեք, տե՛ր իմ, քո ազնվությունն ինձ հավաստում է,  
Որ այս բառերը լոկ արքայական պատշաճություն են:

### ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Ընդհակադրություն, քնքուշ Լավինիա: Հռոմեացիներ,   
Առանց փրկագնի մենք ապատում ենք մեր գերիներին,  
Թող ջնփորները ու թմբուկները մեր փառքն հռչակեն:

*Փողեր: Սատուրնինոսը սիրահետում է Տամորային*

### ԲԱՍԻԱՆՈՍ

Ճեր թույլտվությամբ, բարեգութ Տիտոս, այս աղջիկն ի՛մն է:  
Հափշտակում է Լավինիայի ձեռքը

### ՏԻՏՈՍ

Ի՞նչ, արքայորդի, դու լո՞ւրջ ես ասում:

### ԲԱՍԻԱՆՈՍ

Ճիշտ այդպես, Տիտոս, ես պետք է ցույց տամ  
Իմ իրավունքն ու արդարությունը:

### ՄԱՐԿՈՍ

Suum cuique՝ կա հռոմեական օրենքների մեջ,  
Եվ արքայորդին իր իրավունքով վերցնում է այն:

### ԼՈՒՑԻՈՍ

Եվ կվերցնի, քանի դեռ ես կամ:

### ՏԻՏՈՍ

Օ՛, դավաճաններ: Որտե՞ղ է կայսրի պահակապորը:  
Դավաճանություն: Հափշտակում են իմ Լավինիային:

### ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Հափշտակո՞ւմ են, ո՞վ է հանդգնում:

### ԲԱՍԻԱՆՈՍ

Ով իրավունքով

կարող է խել իր հարսնացուին ամբողջ աշխարհից:

*Գնում են Բասիանոսն ու Մարկոսը Լավինիայի հետ*

### ՄՈՒՑԻՈՍ

Եղբայրներ, օգնեք, որ Լավինիային տանի այստեղից,  
Իսկ ես իմ սրով կպահեմ դուռը:

*Գնում են Լուցիոսը, Քլիստոսը և Մարցիոսը*

! Ամեն մեկն իրենց (բառ.):

**ՏԻՏՈՍ**

(Սատուրնինոսին)

Ինձ հետևեցեք, շուտով աղջկաս ես ետ կբերեմ:

**ՄՈՒՑԻՈՍ**

Հա՛յր իմ, այստեղից չեմ թողնի անցնես:

**ՏԻՏՈՍ**

Անպատկա՛ռ տղա՛,

Ինձ Հոռոմ տանող ճամփա՛ն ես փակում:

**ՄՈՒՑԻՈՍ**

Օգնի՛ր, ինձ, Լուցիոս:

*Տիտոսը սպանում է Մուցիոսին*

*Մտնում է Լուցիոսը*

**ԼՈՒՑԻՈՍ**

Հայր, ավելին ես, քան մի նողկալի անարդարություն,

Անիրավ վեճում դու սպանեցիր քո անուեղ որդուն:

**ՏԻՏՈՍ**

Ոչ դու, ոչ էլ նա իմ որդիքը չեք:

Իմ որդիները երբեք ինձ այսպես չէին անարգի:

Դավաճան, ետ տուր քրոջդ կայսրին:

**ԼՈՒՑԻՈՍ**

Մեռած ես նրան կվերադարձնեմ, եթե ուզում ես:

Բայց նա չի դառնա նրա կինն երբեք,

Քանզի օրենքով նա պատկանում է միայն ուրիշին:

*Գնում է*

Վերին բնում երևում են կայսր Սատուրնինոսը և Տաևորան՝ իր երկու որդիների ու մայր Ահարոնի հետ

**ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ**

Ոչ, Տիտոս, կայսրը ոչ քո, ոչ նրա,

Ոչ էլ քո տոհմից որևէ մեկի կարիքն է պզում:

Պարապ ժամանակ գուցե հավատամ ես այն հիմարին,

Որ կհանդգնի ինձ մի պահ հեզնել,

Քեզ՝ Տիտոս, երբեք,

Ոչ էլ դավաճան ու ամբարտաւան քո որդիներին,

Որ դաշնակցել էք այսպես նենգորեն ինձ անարգելու:

Մի՞թե Հոռոմում ինձանից բացի ուրիշ մարդ չկար,

Որ ձեր ծաղրանքի ատարկան դառնար.

Քո արարքները դաշինք են կնքել քո գոռոպամիտ  
հպարտության հետ,

Կարծես քո ձեռքից աղերսում էի իշխանությունը:

**ՏԻՏՈՍ**

Ի՛նչ հրեշային, ի՛նչ կախատալից բառեր եմ լսում:

**ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ**

Բայց գնա, Տիտոս, գնա քո ճամփով և տուր քո հիմար

Աղջկան նրան, ով նրա համար սուր է շողացնում:

Քո քաջ փեսայից դու գոհ կմնաս,

Քանզի կարող է խոսքը մեկ անել քո այլատերված  
որդիների հետ

Եվ խառնակություն գցել Հոռոմում:

**ՏԻՏՈՍ**

Այս բառերն ասես դաշույներ լինեն վիրավոր սրտիս:

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Չքնա՛ղ Տամորա,  
 Դու, որ Հռոմի բարեդեմ կանանց մթագնում ես,  
 Ինչպես Ֆեբուադ իր գեղեցկափայլ դիցուհիներին,  
 Եթե գոհ մնաս իմ հանկարծակի այս ընտրությունից,  
 Քեզ կհռչակեմ Հռոմի կայսրուհի:  
 Ասա՛, գոթերի հպարտ թագուհի,  
 Քեզ դո՞ւր է գալիս իմ ընտրությունը:  
 Երդվում եմ այստեղ մեր աստվածներով,  
 Սրբապան տաճարն ու սուրբ ջրերը մոտիկ են այնքան,  
 Եվ մոտերն այնքան պայծառ են վառվում  
 Եվ ամենայն ինչ պատրաստ է արդեն Պատանի աստծուն,  
 Որ չեմ ողջունի փողոցներն Հռոմի  
 Ու ես չեմ մտնի իմ պալատն երբեք,  
 Մինչև այստեղից չտանեմ ինձ հետ իմ հարսնացուին:

ՏԱՄՈՐԱ

Այստեղ, երկնքի հայացքի ներքո, երդվում եմ Հռոմին,  
 Եթե գոթերի դժբախտ թագուհուն կայսրը բարձրացնի,  
 Ապա ես նրա ցանկությունների գերին կդառնամ,  
 Կդառնամ դայակն ու մայրը նրա պատանեկության:

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Գեպի Պանթեոն՝ն, չքնաղ թագուհի: Ազնի՛վ պատրիկներ,  
 Ուղեկցեք կայսրին ու բարեջնորի նրա տիրուհուն.  
 Ինձ աստվածներն են պարզելէ նրան,

Իմաստությունը նվաճեց նրա երջանկությունը:  
 Այնտեղ մենք պետք է մեր ամուսնական ծեսը կատարենք:

Գնում են բողոքը, բացի Տիտուսից

ՏԻՏՈՍ

Չնն կանչում, Տիտոս, որ դու ուղեկցես այս հարսնացուին:  
 Ե՞րբ ես դու եղեվ այսպե՛ս միայնակ, այսպե՛ս անարգված  
 Եվ այսպե՛ս դժբախտ:

Մտնում են Մարկոսը, Լուցիոսը, Քլիմաոսն ու Մարցիտոսը

ՄԱՐԿՈՍ

Օ՛, նայի՛ր, Տիտոս, թե ինչ ես արել,  
 Անիրավ վեճից դու սպանեցիր քո ամուսնու որդուն:

ՏԻՏՈՍ

Ո՛չ, հիմար տրիբուն, նա իմ որդին չէ,  
 Եվ դու, և նրանք, որ մեղսակից եք այդ կեղտոտ գործին.  
 Խաչատառակեցիք մեր ամբողջ տոհմին:  
 Անարժան եղբայր, անարժան որդիք:

ԼՈՒՅԻՆՈՍ

Քայց թող Մուցիոսին մենք թաղենք պատվով,  
 Մեր եղբայրների կողքին թող պառկի:

ՏԻՏՈՍ

Ե՛տ, դավաճաններ: Նա չի հանգչելու այս գերեզմանում:  
 Հինգ հարյուր տարի կանգնած է այստեղ այս դամբարանը,  
 Ես եմ նորոգել նրա հինավուրց շքեղությունը:  
 Այստեղ Հռոմի քաջ պիևվորներն են հանգչում մեծ փառքով  
 Եվ ոչ թե նրանք, ովքեր սատկում են խայտառակ մահով:  
 Որտեղ ուզում եք դուք թաղեք նրան, սակայն՝ ոչ այստեղ:

## ՄԱՐԿՈՍ

Եղբայր, ինչպիսի՜ անասովածություն.  
Իմ եղբորորդու արարքը նրա օգտին է խոսում,  
Նա պետք է թաղվի եղբայրների մոտ:

### ՔՎԻՆՏԱՍ ՈՒ ՄԱՐՅԻՈՍ

Այստեղ կթաղենք կամ թե մենք նրա ճամփով կգնանք:

### ՏԻՏՈՍ

Այդ ո՞ր սրիկան ասաց. «կթաղենք»:

### ՔՎԻՆՏՈՍ

Նա, ով ամենուր այդ կհաստատի, սակայն ոչ այստեղ:

### ՏԻՏՈՍ

Ինչպե՞ս, թաղում եք կամքիս հակառակ:

### ՄԱՐԿՈՍ

Ո՛չ, ավելի Տիտոս, աղերսում ենք քեզ,  
Որ ներես որդուդ և այստեղ թաղես:

### ՏԻՏՈՍ

Ձե՞ որ դու, Մարկոս, փորձեցիր խփել իմ սաղավարտին  
Եվ վիրավորել իմ պատիվն այստեղ լակոտների հետ,  
Չեպնից ամեն մեկն իմ թշնամին է,  
Ինձ հանգիստ թողեք, կղրե՛ք իմ աչքից:

### ՄԱՐՅԻՈՍ

Նա արդեն իրեն չի տիրապետում, լավ է՝ հեռանանք:

### ՔՎԻՆՏՈՍ

Ո՛չ, չեմ հեռանա, մինչև Մուցիոսին չթաղեմ այստեղ:

*Մարկոսն ու Տիտոսի որդիները ծունր են իջնում*

## ՄԱՐԿՈՍ

Եղբա՛յր, բնությունն ինքն է աղերսում նրա անունով:

### ՔՎԻՆՏՈՍ

Հայր իմ, բնությունն այս սուրբ անունով խոսում է քեզ հետ:

### ՏԻՏՈՍ

Ոչ մի բառ, թե ոչ՝ դուք կպատժվեք ավելի խստիվ:

### ՄԱՐԿՈՍ

Բարեգույթ Տիտոս, դու ավելին ես, քան հոգուս կեսը...

### ԼՈՒՅԻՈՍ

Սիրելի հայր իմ, դու, որ բոլորիս ջունչն ու հոգին ես...

### ՄԱՐԿՈՍ

Թող, Տիտոս, այստեղ՝ առաքինության ապաստարանում,  
Թաղեմ ավսվապարս իմ եղբորորդուն,  
Ով հանուն քրոջ, հանուն իր պատվի ընկավ քաջաբար:  
Դու հռոմեացի ես, ոչ թե բարբարոս.

Հիշիր, թե ինչպես հույներն Ալաքսին հանձնեցին հողին,  
Նա բախտից դժգոհ՝ անձնասպան եղավ,  
Եվ Ողիսևաի որդին իմաստուն

Գթասիրաբար աղոթք էր անում, որ թաղեն նրան:

Պատանի Մուցիոսն ուրախությունդ էր,

Ուրեմն, հայր իմ, դու մի արգելիր նրա մուտքն այստեղ:

### ՏԻՏՈՍ

Բարձրացիր, Մարկոս,

Այսպիսի սև օր չեմ տեսել երբեք.

Իմ որդիներով խայտառակվեցի այստեղ՝ Հռոմում:

Լավ, թաղեք նրան, հաջորդն ինձ թաղեք:

*Մուցիոսին դնում են դամբարանը*

## ԼՈՒՑԻՈՍ

Սիրելի Մուցիոս, հանգչիր դու այստեղ, եղբայրներիս հետ,  
Մինչ նոր ավարով մենք կպարզարենք քո գերեզմանը:

## ԲՈԼՈՐԸ

(ծուևր իջնելով)

Արցունք մի թափեք Մուցիոսի շիրմին,  
Նա մեռավ հանուն առաքինության, ապրում է փառքով:

## ՄԱՐԿՈՍ

Եղբայր, որպեսզի մի քիչ փարատենք մեր վիշտն ահավոր,  
Ասա, գոթերի այս նենգ թագուհուն  
Ինչպե՞ս հաջողվեց անսպասելի այսպես բարձրանալ:

## ՏԻՏՈՍ

Չգիտեմ, Մարկոս, ոչինչ չգիտեմ, բայց դա այդպես է:  
Խորամանկությամբ բարձրացավ, թե՛ ոչ, հայտնի է աստծուն,  
Մի՞թե այն մարդուն պարտական չէ նա,  
Ով հեռվից բերեց նրան այսպիսի բարձրագույն դիրքի:

## ՄԱՐԿՈՍ

Այո, և նա էլ կվարձատրի նրան ապևլորեն:

Փողեր: Մտնում են մի կողմից կայսր Սաստրնիկոսը իր շքա-  
խմբով, Տամորան և նրա երկու որդիները, Ահարոնը, մյուս  
կողմից՝ Բասիանոսը, Լավինիան և ուրիշներ

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Այսպես, Բասիանոս, դու խաղը տարար,  
Աստված տա, եղբա՛յր, քեզ ուրախություն քո հարսնացուից:

## ԲԱՍԻԱՆՈՍ

Եվ քեզ էլ՝ քոնից: Ես քեզ չեմ ասում ոչինչ ավելի  
կամ ոչինչ պակաս քեզ չեմ կամենում,  
Թող քեզ աստված էլ այդքան կամենա:

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Լսիր, դավաճան, եթե Հռոմը օրենքներ ունի  
Կամ մենք՝ իշխանություն, դու կհատուցես  
Ունկերներիդ հետ այս համիշտակա՞ծ աղջկա համար:

## ԲԱՍԻԱՆՈՍ

Համիշտակություն՞ն, ասում ես, եղբա՛յր,  
Երբ իմն եմ անում, իմ հարսնացուին, այժմ կնոջն իմ,  
Բայց թող Հռոմի արդար օրենքներն ամեն ինչ վճռեն,  
Առայժմ ես իմ հառանելիքն եմ քեզնից վերցնում:

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Շատ բարի, եղբա՛յր: Մեզ հետ խոսում ես շատ խիստ ու  
կտրուկ:  
Բայց, եթե այդենք, մենք էլ կխոսենք քեզ հետ խիստ  
կտրուկ:

## ԲԱՍԻԱՆՈՍ

Ինչ որ արել եմ, ես դրա համար  
Լավագույն ձևով պատասխան կտամ,  
Հարկ եղած դեպքում իմ կյանքի գնով:  
Բայց, ողորմած տեր,  
Հռոմի հանդեպ Բասիանոսն ունի պարտականություն՝  
Չի կարող չասել՝ պատիվն անարգվեց:

Չանալով ետ տալ իր աղջկան քեզ, բարի Տիտոսը,  
Սեփական ձեռքով ամենակրտսեր որդուն սպանեց,  
Քեզ ծառայելով. նրան տանջում է այն վայրույթն անեղ  
Որ իր պարզևր հափշտակում են քեզնից հեշտությամբ:  
Վերադարձու, կայսր, քո գթությունը այս ազնիվ մարդուն,  
Տիտոսն իր բոլոր արարքների մեջ  
Երևացել է հայր ու բարեկամ քեզ ու Հռոմին:

### ՏԻՏՈՍ

Դու, արքայորդի, ինձ մի պաշտպանիր,  
Դու այս մարդկանց մոտ ինձ անպատվեցիր:  
Թող դատեն Հռոմն ու երկինքն արդար,  
Թե ես ինչպես եմ սիրել-մեծարել Սատուրնինոսին:

### ՏԱՄՈՐԱ

Օ՛, դու մեծ կեսար, եթե երբևէ ազնիվ Տամորան  
Քո արքայական աչքն է վարդարել,  
Ուրեմն, լսիր, թե ինչ եմ ասում անաչառությամբ.  
Ներիր, խնդրում եմ, ինչ որ եղել է:

### ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Ի՞նչ: Խայտառակվել բոլորի առաջ  
Եվ նվաստաբար տանել անարգանքն առանց վրեժի՞:

### ՏԱՄՈՐԱ

Այդպես չէ, տեր իմ, Հռոմի աստվածներն երբեք չեն թողնի,  
Որ պատճառ դառնամ քո անպատվության,

Քայց հանդգնում եմ երդվել իմ պատվով,  
Որ բարի Տիտոսն երբեք մեղք չունի,  
Ում բարությունը չի ծածկում բնավ նրա վշտերը:  
Աղաչում եմ քեզ, գթասիրաբար նայիր դու նրան,  
Թող չկորցնի մի փուչ կասկածը մի լավ բարեկամ,  
Մի՛ վշտացնի դառն հայացքով նրա սիրտն ազնիվ:

### (տաննին Սատուրնինոսին)

Տեր իմ, լսիր ինձ, ներիր դու նրան,  
Դու կեղծ ժպտով ծածկիր քո վիշաը, քո դժգոհությունը:  
Չէ՞ որ դեռ նոր ես դու գահ բարձրացել,  
Գուցե ժողովուրդն ու պատրիկները արդար դատելով,  
Նրա կողմն անցնեն ու քեզ, սիրելիս, գահընկեց անեն,  
Ապերախությունն Հռոմը, գիտցիր, պետք է համարե  
տոսկալի հանցանք:

Թող որ ե՛ս գտնեմ նրանց բոլորի օրն սպանելու  
Եվ բնաջնջեմ նրա ողջ տոհմը, կողմնակիցներին,  
Անողորմ հորը, նրա նենգավոր խենթ որդիներին,  
Որոնց խնդրեցի սիրելի որդուս կյանքը ինձ բաշխել:  
Նրանք կիմանան, թե ինչ ասել է թագուհուն ծնկի բերել  
փողոցում

Եվ իլուր հայցել գթասիրություն:

### (բարձր)

Բա՛վ է, սիրելիս, բա՛վ է, Անդրոնիկոս,  
Տեր իմ, բարձրացրու այս բարի մարդուն  
Եվ ուրախացրու ծերունու սիրտը,  
Որ մեռնում է, քո խոժոռ հայացքի մորիկների մեջ:

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Բարձրացի՛ր, Տիտոս, իմ կայսրուհին համոզում է ինձ:

### ՏԻՏՈՍ

Հնորհակալութի՛ւն, ձերդ մեծութուն, և ձեզ, կայսրուհի,  
Այս հայացքները և այս բառերը ինձ կյանք են տալիս:

### ՏԱՄՈՐԱ

Տիտոս, Հռոմին ազգական դարձա,  
Բախտն ինձ ընդունեց որպես հռոմեացի,  
Ես պետք է բարի խորհուրդ տամ կայսրին,  
Այսօր մեռնում են բոլոր վեճերը, բարի իմ Տիտոս,  
Թույլ տուր հայարտանալ, որ քեզ հաշտեցրի ընկերներիդ  
հետ:

Գալով քեզ, Բասիան, ես խոստացել եմ կայսրին բարեգութ,  
Որ դու կլինես ավելի խոնարհ ու հեղաբարո:  
Մի՛ վախենաք դուք, շահել պատրիկներ և դո՛ւ՝ Լավինիա,  
Լսեք խորհուրդն իմ, ծունր իջեք խոնարհ  
Եվ ներում խնդրեք կայսրից վեհափառ:

*Մարկոսը, Լավինիան ու Տիտոսի որդիները ծունր են իջնում*

### ԼՈՒՅԻՆՈՍ

Ներում ենք խնդրում և երդվում աստծուն ու կայսրին բարի,  
Որ մենք գործել ենք կարելույն չափ մեղմ,  
Պաշտպան կանգնելով մեր ու մեր քրոջ պատվին անբասիր:

### ՄԱՐԿՈՍ

Ես հաստատում եմ այս բանն իմ պատվով:

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Կորե՛ք այստեղից և մեզ այլևս մի ձանձրացրեք:

## ՏԱՄՈՐԱ

Ո՛չ, ո՛չ, բարի կայսր, մենք պետք է լինենք նրանց  
բարեկամ,

Նրանք ծունր իջած ներում են խնդրում,  
Մի՛թե, սիրելիս, ինձ պետք է մերժես, նայիր դու նրանց:

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Մարկոս, քո սիրո, քո եղբոր համար  
Եվ Տամորայի թախանձանքներին ընդատաջ գալով,  
Ներում եմ այստեղ այս շահել մարդկանց մեղքերն ատելի:  
*բարձրանում են*

Լավինիա, թե՛ն դու ինձ լքեցիր գեղջկուհու նման,  
Բայց նայիր, գտա ես մի բարեկամ,  
Հավատարմության երդում տվեցի մահի պես ստույգ,  
Որ ես տաճարից երբեք դուրս չեմ գա որպես ամուրի:  
Գնանք, և եթե պալատը կայսրի  
Կարող է օրհնել երկու հարսանիք,  
Ուրեմն, Լավինիա, դու իմ հյուրն ես քո բարեկամներով:

### Տամորային

Եվ թող այս օրը կոչվի սիրո-օր:

### ՏԻՏՈՍ

Իսկ վաղը, եթե հաճո է կայսրին  
Ինձ հետ եղջերու և հովազ որսալ,  
Մեզ կարթնացնեն եղջերավողը և շան հաչոցը:

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Թող այդպես լինի, բարեգութ Տիտոս, շնորհակալութի՛ւն:

*Փողեր: Գնում են:*

## ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Հոռն: Պաղատի առաջ

Մտնում է Ահարոնը

ԱՎԱՐՈՆ

Հասավ Տաւորան Օլիւպոս լեռան բարձր կառարին,  
Որտեղ չեն հասնում ճակատագրի հարվածները բիրտ,  
Եվ նա սյաշտայանված շանթ ու որոտից,  
Բնավ չի պզում գունատ նախանձի սպառնալիքը:  
Այժմ Տաւորան ասես թե լինի ոսկյա արեգակ,  
Որ լուսաբացն է ողջունում պարթ,  
Եվ ծովի ջրերն ոսկեպօծելով,  
Չողիակոտով թռչում է փայլուն կառքի մեջ նստած,  
Վերից նայելով բարձր լեռներին:  
Փառքերն երկրային քծնում են նրան,  
Եվ խոնարհվում է առաքինությունն այդ կնոջ առաջ,  
Ու դողում, երբ նա հոնքերն է կիտում:  
Չինիր քո սիրտը, քո սիրքն, Ահարոն,

Որ արքայական քո սիրուհու հետ հավերժ բարձրանաս,  
Բարձրանաս նրա պրավոր դիրքին,  
Ում երկարատև դու շղթայել ես սիրո կապանքով,  
Ով քո հնայիչ աչքերին զամլեց ավելի ամուր,  
Քան Պրումթեռուը՝ ժայռին կովկասի:  
Հեռացեք ինձևից, ստրկամիտ խոհեր, ստրկական պզեստ,  
Ուզում եմ շողալ մարգարիտների ու ոսկու փայլով  
Եվ լինել ծառան այս նոր կայսրուհու:  
Առացի՝ ծառա՛: Ո՛չ, հաճույք պզալ այս թագուհու հետ,  
Այս աստվածուհու, այս Շամիրամի, այս դիցուհու հետ,  
Այս սիրենի հետ, որ կախարդում է Սառուրնիկոսին,  
Եվ տեսնել Հոռնի ու նրա կայսեր կործանումն աներ:  
Այս ի՛նչ աղմուկ է:

Մտնում են Դեմետրիոսն ու Քիրոնը, վիճելով

ԳԵՄԵՏՐԻՈՍ

Երեխա ես դու, խելքդ չի կտրում,  
Եվ խելքդ չունի դեռ փորձառություն,  
Որ խցկվես այնտեղ,  
Որ բարեհաճ են վերաբերում ինձ,  
Եվ, որքան գիտեմ, նույնիսկ սիրում են:

ՔԻՐՈՆ

Դու շատ վատահ ես ուժերիդ վրա,  
Այստեղ էլ անգամ ուզում ես հաղթել ինձ պարծենալով:  
Մեկ-երկու տարվա տարբերությունը չի կարող դարձնել  
Քեզ խիստ երջանիկ, ինձ՝ նույնքան դժբախտ:

Ես շնորհ ունեմ, ինչպես նաև դու,  
Ծառայեց սիրուն և արծառնապա պարզելին նրա,  
Եվ դա իմ սուրը քեզ կապացուցի,  
Ոչ ոք չի կարող իմ Լավինիային ինձանից խել:

ԱՎԱՐՈՆ  
(ստանձին)

Մահակներ բերեք, սիրահարներս մեզքն է բոր գալիս:

ԴԵՄԵՏՐԻՈՍ

Կաթնակեր լավուտ, գուցե մեր մայրը անպուշաբար  
Քո գոտուց կապեց մի սուր-խազապիք,  
Եվ դու այդ քանից խիստ կատաղելով ահաբեկում ես  
բարեկամների՞դ,  
Չքվիր պատեղից և քո խաղալիք սուրը պատյան դիր,  
Սպասիր, մինչև ձեռքդ վարժվիր:

ՔԻՐՈՆ

Մինչև վարժվելն էլ անվարժ ճարպկությանք  
Ես քեզ ցույց կաամ, թե սուրը ինչպես կարող եմ բռնել:

ԴԵՄԵՏՐԻՈՍ

Առո՞ւծ ես կտրել...

Սրերը մերկացնում են  
ԱՎԱՐՈՆ  
(ստաշ գալով)

Ի՞նչ է պատահել, արքայորդին՞ր:  
Դուք հանդգնում եք սուր բարձրացնել պալատի առաջ  
Եվ բացեիրաց վեճն այսպե՞ս լուծել:

Ինձ քաջ հայտնի է ձեր թշնամության անբողջ պատճառը.  
Թնկուպ մեկ միջոն ոսկի ինձ տային՝ չէի ցանկանա,  
Որ վեճի առիթն այն մարդն խնամար,  
Ում բորբից շատ է դա վերաբերում,  
Եվ ամենից շատ ձեր ազնիվ մայրը չէր ուզի տեսնել  
Չեզ հռոմեական պալատի առաջ այսպես խայտառակ:  
Անո՞թ, ձեզ ամո՞թ, պենքը վար դրեք:

ԴԵՄԵՏՐԻՈՍ

Ո՛չ, ո՛չ, քանի դեռ  
Սուրս չի մեխվել նրա կրծքի մեջ  
Եվ ներս չեմ հրել նրա կոկորդը  
Այս նախառալից բառերի կույտը,  
Որով ինձ պատեղ նա վիրավորեց:

ՔԻՐՈՆ

Սպասում եմ քեզ, վախկո՞տ, պիղծ բերան,  
Դու որստում ես քո լեզվով միայն  
Եվ դու չես կարող սուր բանեցնել:

ԱՎԱՐՈՆ

Կորե՛ք, ասում եմ,  
Երգվում եմ բոլոր այն աստվածներով,  
Որոնց պաշտում են գոթերն ռազմաւեր,  
Մեզ կկործանի այս դատարկ վեճը:  
Արքայորդիներ, դուք չե՞ք ստամում,  
Որ արքայազնի իրավունքի դեմ հանդգնությունը  
վտանգավոր է:

Մի՞թե Լավինիան դարձել է այնքա՛ն ցուի ու անառակ,  
Իսկ Բասիանուր՝ այնքա՛ն ցածրոզի,  
Որ դուք կարծում եք նրա սիրո համար  
Կարող եք առանց վերակացության, առանց վրեժի  
Եվ առանց դատի այսպիսի անմիտ կռիվներ սարքել:  
Ջգո՛ւյշ, խի՛ստ պզուշ, արքայորդինե՛ր,  
Եթե կայսրուհին ձեր թշնամության պատճառն իմանա,  
Նրան այս խաղը բնավ դուր չի գա:

#### ՔԻՐՈՆ

Թող մայրս ու ամբողջ աշխարհն իմանա,  
Որ այդ Լավինիան թանկ է ինձ համար ամբողջ աշխարհից:

#### ԴԵՄԵՏՐԻՈՍ

Կայծակե՛ր, համետս ընտրությունն արա,  
Լավինիան հույսն է քո ավագ եղբոր:

#### ԱՎԱՐՈՆ

Գժվե՛լ եք, ինչ է, կամ դուք չգիտե՞ք,  
Որ հռոմեացիք բուռն են և անպուսպ  
Եվ չեն հանդուրժում իրենց սիրո մեջ ոչ մի մրցակից,  
Դուք ձեր արարքով ձեզ համար մահի  
Ճամփա եք բացում:

#### ՔԻՐՈՆ

Ես կգրկեի մահն հապար անգամ,  
Միայն թե նրան՝ սիրուս տիրանամ:

#### ԱՎԱՐՈՆ

Տիրանա՛ս, ինչպե՛ս:

#### ԴԵՄԵՏՐԻՈՍ

Դժվարան՛ում ես,

Կին է՛ կարող ես ետևից քարշ գալ,  
Կին է՛ կարող ես նրան տիրանալ,  
Լավինիան կին է, ուրեմն, պետք է դու նրան սիրես:  
Ջրադացի միջով շատ ջուր է հոսում,  
Քան թե տեսնում է ջրաղացպանը:  
Կտրված հացից հեշտ է թոցնել մի փոքրիկ պատառ,  
Ինչ փույթ Բասիանուսն եղբայրն է կայսրի,  
Նրանցից մեծերն են Վուլկանի պարզեր հեպոթյամբ կրել:

#### ԱՎԱՐՈՆ

(սասնձին)

Այո՛, այնքան մեծ, որքան մեր կայսր Սատուրնինուսը:

#### ԴԵՄԵՏՐԻՈՍ

Եվ ինչո՛ւ պետք է մարդ հուսահատվի,  
Երբ գայթակղել գիտե բառերով, հայացքով քնքուշ:  
Մի՞թե չես խփել վայրի մի քարայծ  
Եվ տարել որսը անտառապահի հենց քթի տակից:

#### ԱՎԱՐՈՆ

Ուրեմն, պետք է գործն առաջ տանել հափշտակությամբ:

## ՔԻՐՈՆ

Իհարկե՛, եթե որսը կրկնվի:

### ԴԵՄԵՏՐԻՈՍ

Այո, Ահարոն, դու ճիշտ խփեցիր նշանակետին:

### ԱՎԱՐՈՆ

Ես կուպենայի, որ դուք էլ ինձ պես խփեք անվրեպ:  
Չէիք ձանձրացնի մեզ այս աղմուկով:  
Լսեք, մի՞թե դուք այնքան հիմար եք,  
Որ մի փուչ բանից վիճում եք այսպես:  
Դուք կղճզոհե՞ք, թե ձեր երկուսի գործն հաջող գնա:

## ՔԻՐՈՆ

Ես՝ ամենակին:

### ԴԵՄԵՏՐԻՈՍ

Թե որ երկուսից մեկը ես լինեմ:

### ԱՎԱՐՈՆ

Ամոթ է, հաշտվեք, և թող ձեր վեճն էլ ձեզ միացնի,  
Խորամանկությամբ ու հնարանքով դուք պետք է հասնեք  
Ձեր նպատակին, և դուք էլ պետք է խնդիրը լուծեք:  
Այն, ինչ չեք կարող ձեռք բերել կամքով,  
Պետք է նվաճել հնտությամբ միայն:—  
Գիտցեք, Լուկրեցիան երբեք չի եղել ավելի մաքուր,  
Քան Բասիանոսի սերը՝ Լավինիան:  
Մենք պետք է ընտրենք կարճ ճանապարհը,  
Եվ ոչ թե տանջվենք հապաղումների դանդաղ ընթացքից:  
Պատրաստվեք, գնանք փառավոր որսի,

Այնտեղ կլինեն հռոմեացի զեղեցիկ կանայք,  
Անտառում թաքուն արահետներ կան,  
Կան խիստ ամայի, ծածուկ անկյուններ,  
Որ անեղծել է մայր բնությունը հանցանքի համար:  
Տարեք առանձին քնքուշ քարայծին խորքը անտառի,  
Եվ, եթե խուքով չեք կարող հասնել ձեր նպատակին,  
Դիմեք բռնության, սա է ձեր միակ ճանապարհն հույսի:  
Դեհ, գնանք, գնանք ու մեր կայսրուհուն,  
Որն իր սրբազան խեղճն է նվիրել վրեժխնդրությանն ու  
բռնությանը,

Պատմենք բոլորը,

Նա կհայեցնի մեր քաջ սրերը իր խորհուրդներով,  
Չի թողնի, որ դուք կռվեք միմյանց հետ,  
Բայց ձեզ՝ երկուսիդ նա կհասցնի ձեր ցանկությանը:  
Կայսրի պալատը ասես թե լինի մի փառքի տաճար,  
Այնտեղ կան բազում աչք ու լսելիք ու լեզուներ չար,  
Մինչդեռ անտառը համր է, անպզա, ահավոր ու լուռ,  
Այնտեղ դուք՝ քաջեր, կարող եք խոսել, ջարդել ու փշրել,  
Ձեր կիրքն հագեցնել, թաքնվել երկնի սրատես աչքից  
Ու վվարձանալ այդ Լավինիայի չքնաղ գանձերով:

## ՔԻՐՈՆ

Վախից չէ՞, որ դու նման խորհուրդ ես տալիս, Ահարոն:

### ԴԵՄԵՏՐԻՈՍ

Sit fast aut nefas<sup>1</sup> մինչև որ գտնեմ այն սառն աղբյուրը,  
Որ հագեցնի ծարավը սրտիս

<sup>1</sup> Սա կլինի՞ օրինական, թե՞ անօրինական (լատ.):

Կամ այն թուզանքը, որ մեղմացրելի այս խենթ կրքերը:  
Per Styga, per manes vehor!:

Գնում են

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

#### Անտառ

Լսվում է փողերի ձայն. շների հաչոց: Մտնում են Տխոռու Անդրոնիկոսը և Երեք որդիների հետ և Մարկոսը:

#### ՏԻՏՈՍ

Որսն սկսված է, և առավոտն է փայլուն ու զվարթ,  
Դաշտերն են բուրում, և անտառներն են կանաչին տալիս:  
Հներն արձակեք, և թող արթնանան նրանց հաչոցից  
Կայսրը, իր չքնաղ հարսնացուն և արքայորդին:  
Թող այնպես հնչի փողը որսորդի,  
Որ արձագանքի ամբողջ պալատը զվարթ աղմուկով:  
Որդիք, ինչպես ձեր, նույնպես մեր պարտքն է  
Հետևել կայսրին բավմահոգությամբ:  
Այս գիշեր կարծես հանգիստ չեմ քնել,  
Բայց արշալույսը ինձ ներշնչում է նոր առույգություն:

#### Փողեր

Մտնում են Սառուրնիկոսը, Տամորան, Բասիանոսը, Լավի-  
նիան, Դեակտրիոսը, Քիրոնը և նրանց սպասավորները

Տեր իմ քարեզուք, ձեզ բազում բարի օրեր եմ մաղթում  
Եվ ձեզ էլ՝ նույնքան, ապնիվ տիրուհի,  
Ձեզ խոստացել եմ փառավոր մի որս:

1 Ես կանցնեմ Ստիքսի ու մեռյալների թագավորություններով (լատ.):

### ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Այո, և փողերն ուժգին հնչեցին, կարծես մի քիչ վաղ  
Արթնացնելով նոր ամռանացած տիրուհիներին:

### ԲԱՍԻԱՆՈՍ

Ի՞նչ կասի, արդյոք, չքնաղ Լավինիան:

### ԼԱՎԻՆԻԱ

Օ, ո՛չ,

Անցել է արդեն երկու ժամ, ինչ արթնացել եմ:

### ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Դեհ, գնանք, բերեք կառքն ու ձիերը:

### Տամորային

Այժմ, կայսրուհի, դուք պիտի տեսնեք որսն հռոմեական:

### ՄԱՐԿՈՍ

Տեր իմ, ես ունեմ այնպիսի շներ,  
Որ կարթնացնեն վայրի հովապին  
Եվ կմազլցեն ամենաբարձր լեռան կատարը:

### ՏԻՏՈՍ

Իմ ձին կուրա գազանի հետքով  
Եվ կթռչի նա ծիծեռնակի պես դաշտի վրայով:

### ԴԵՄԵՏՐԻՈՍ

(ցածր)

Քիրոն, գալով մեզ, մենք առանց ձիու և առանց շան էլ  
Կարող ենք սիրուն քարայծիս բռնել:

Գնում են

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Անտառի մի ամպի անկյուն

Մտնում է Ահարոնը, ձեռքին մի պարկ ոսկի

### ԱՎԱՐՈՆ

Խելամիտ մարդը գուցե համարի ինձ խելքից պակաս,  
Որ ես թաղում եմ ոսկին ծառի տակ,  
Զրկվելով նրա շողջողուն տեսքից,  
Բայց ով իմ մասին խորհում է այսպես անարժանաբար,  
Թող նա իմանա, որ ես այդ ոսկուց պետք է կռանեմ  
խորամանկություն,  
Եվ վարպետորեն ի գործ դնելով,  
Ես պետք է ծնեմ մի անգերապանց սրիկայություն:

Ոսկին թաղում է ծառի տակ

Միրելի ոսկի, հանգչիր դու այստեղ,  
Որպեսզի խլես հանգիստն այն մարդկանց,  
Ովքեր կայսրուհու մեծ վարդապետից ակնկալում են  
թանկարժեք գանձեր:

Մտնում է Տաւորան

### ՏԱՄՈՐԱ

Օ՛, իմ Աահարոն, ինչո՞ւ ես նայում այսպես տխրագին,  
Երբ ամեն էակ ցնծում է ուրախ,  
Երբ թռչուններն են ճյուղերի վրա անուշ դալլալում,  
Երբ գաղարվելով օձն է տարածվում վառ արևի տակ,

Երբ տերևներն են Կովասուն քամուց մեղմիվ օրորվում  
Եվ գետնի վրա իրենց գույնագույն ստվերն են ձգում:  
Եկ, նստենք այստեղ, նրանց հաճելի հովանու ներքո,  
Ու մինչ շաղակրատ վիլ արձագանքը  
ձջան փողերի ձայնը կրկնելով՝ կխաբի շներին,  
Իրրն լսվում է երկու որսի ձայն,  
Եկ, նստենք այստեղ, ունկնդրենք նրանց երկար հաչոցը  
Եվ լուռ ըմբոջխենք այն վայելչանքը,  
Որ զգաց Դիդոն թափառաշրջիկ արքայորդու հետ,  
Երբ վրա հասնող բարեբաստ քամին  
Նրանց թաքցրեց խիստ խորհրդավոր քարանձավի մեջ:  
Մենք էլ կարող ենք մեր բազուկները իրար հյուսելով,  
Հանձնվել ոսկյա ու քաղցր քնին՝  
Մինչև հաչոցը, փողերի աղմուկն ու թռչունների անուշ  
մեղեղին  
Դանձան քաղցր երգ, ինչպես դայակի մեղրաշուրթ երգը՝  
քնող մանչուկին:

### ԱՎԱՐՈՆ

Տամորա, եթե քո տենչանքների տերն է Վեներան,  
Ապա ինձ, ավա՞դ, Սատուրնն է հսկում:  
Ի՞նչ է ցույց տալիս իմ այս մահաբեր անշարժ հայացքը,  
Իմ լուռ ու անպոռ այս տխրությունը,  
Ինչո՞ւ է այսպես իմ գանգուրների դորքն արձակված:  
Ա՛խ, այդպես իժն է կծիկը բացում,  
Որ իրագործի ճակատագրական իր հարձակումը:  
Օ՛, ո՛չ, Տամորա, դրանք Վեներայի նշանները չեն.  
Իմ սրտում վրեժ կա, ձեռքիս՝ մահվան սուր,

Ո՞րն ու արյունն են մութձի պես վարկում հոգնած  
քունքերիս:

Լայր, Տանորա, թագուհի հոգուս,  
Ուրիշ երկինքներ չկան ինձ համար քեզանից բացի,  
Վրա է հասել նենգ Բասիանոսի կործանման օրը-  
Նրա Փիլոմելն իր լեզուն պետք է կորցնի այսօր,  
Քո որդիները պետք է անարգեն պատիվը նրա  
Եվ ձեռքերն իրենց պետք է վանան Բասիանի արյամբ:  
Վերցրու այս նամակն ու, խնդրում եմ քեզ,  
Հանձնիր արքային ճակատագրական թղթագլանը,  
Բայց մի հարցնիր ինձնից ավելին, մեզ լրտեսում են,  
Այստեղ է գալիս այնքան ցանկալի մեր բաժին որսը  
Եվ դեռ չի կգում վտանգն ահավոր:

#### ՏԱՄՈՐԱ

Օ՛ր, քաղցր իմ մավր,  
Ավելի քա՛ղցր, քան կյանքն ինձ համար:

#### ԱՀԱՐՈՆ

Ոչինչ ավելի, ավնիվ կայսրուհի, Բասիանն է գալիս,  
Վիճիր նրա հետ և ես կրեբեմ քո որդիներին,  
Որ քեզ պաշտպանեն:

— Գնում է

*Մտնում են Բասիանոսն ու Լավինիան*

#### ԲԱՍԻԱՆՈՍ

Ո՞ւմ ենք մենք տեսնում: Հոռուի կայսրուհուն,  
Առանց շքախոսի՞, որ չի պատշաճում նրա բարձր դիրքին:

Թե՛ Դիանան է, հագնված նրա պես,  
Ով իր սրբապան այգին է լքել,  
Որ տեսնի կայսրի որսն այս անտառում:

#### ՏԱՄՈՐԱ

Դու հանդգնորեն հետևում ես մեր գաղտնի քայլերին:  
Թե ունենայի իշխանությունը սուրբ Դիանայի,  
Կպարզարեի քո քունքերն այնժամ այն եղջյուրներով,  
Ինչպիսիք ուներ Ակտեոնն անբախտ, և քերծեները  
Վրա կտային նոր այլափոխված քո մարմնի վրա:

#### ԼԱՎԻՆԻԱ

Չեր թույլովությանք, ավնիվ կայսրուհի,  
Ասում են ունեք զեղեցիկ շնորհք եղջյուրներ տալու,  
Եվ դուք անտառում առանձնացել եք ձեր այդ մավրի հետ,  
Որ փորձեր դնեք այդ նպատակով:  
Յուսիտեք, փրկիր բարեգույք կայսրին նրա շներից,  
Մեղք է, թե նրան մի արու եղնիկ շներն համարեն:

#### ԲԱՍԻԱՆՈՍ

Հալատացեք ինձ, ձեր սև քիմերցին  
Կսեացնի ձեր պատիվն անբիծ  
Իր գարշ, պզվելի մարմնի գույնով:  
Ինչո՞ւ եք լքել ձեր շքախոսները,  
Ինչո՞ւ եք իջել ձյան պես սալիտակ ձեր սեզ նծույզից  
Եվ ընկերացել այստեղ բարբարոս, կեղտոտ մավրի հետ,  
Եթե նողկալի վավաշությունը ձեզ չի ուղեկցել:

## ԼԱՎԻՆԻԱ

Դուք կշտամբում եք իմ ալնիվ տիրոջն այն բանի համար,  
Որ նա խանգարեց ձեր վարձանքը:  
Աղաչում եմ քեզ, գնանք այստեղից,  
Թող նա հրճվի ագռավի պես սև իր սև սիրո հետ,  
Եսխտ պատշաճում է այս վայրը նրա գարշ լրբությանը:

## ԲԱՍԻԱՆՈՍ

Կայսրը՝ իմ եղբայրն, այս մասին պետք է իսկույն իմանա:

## ԼԱՎԻՆԻԱ

Նրա այս խաղերն հայտնի են վաղուց:  
Քեզ՝ բարի արքա, ի՛նչ դաժանորեն խաբում են նրանք:

## ՏԱՄՈՐԱ

Ինչպե՞ս հանդուրժեմ ես այս բոլորը:

*Մտնում են Դեմետրիոսն ու Քիրոնը:*

## ԴԵՄԵՏՐԻՈՍ

Մեր սիրելի մայր և կայսրուհի,  
Ինչո՞ւ ես այսպես գունատ ու տխուր:

## ՏԱՄՈՐԱ

Իսկ ի՛նչ եք կարծում, իմ գունատությունն առիթներ չունի՞:  
Ա՛խ, այս երկուսը ինձ քարշ տվեցին այստեղ, այս վայրը,  
Որ մի ամառի ու գարշ հովիտ է, ինչպես տեսնում եք:  
Թեև ամառ է, բայց ծառերն այստեղ մերկ են, անտերև,

Մամուռն է պատել ու ճագումը ժանտ,  
Այստեղ չի փայլում արևը երբեք,  
Այստեղ սպրում են չարագույժ ագռավն ու բուն գիշերվա,  
Եվ երբ նրանք ինձ ցույց տվին այս գարշ, զվվելի փողը,  
Ասացին՝ այստեղ խիստ ահաշշուկ գիշերվա ժամին,  
Հապար չար ոգի, հապար սուղոդ օձ,  
Տասն հապար դողոշ և նույնքան ուկնի  
Այնպիսի շփոթ ու վարհուրելի ձայներ են հանում,  
Որ մահկանացու ամեն մի էակ լսելով նրանց՝  
Խեղագարվում է կամ մեռնում հանկարծ:  
Երբ ավարտեցին իրենց դիվային այս պատմությունը,  
Նրանք ասացին, որ կապելու են ինձ սարսափապղու այս  
ծառի բնից

Եվ թողնելու են ինձ որպես ավար այս խղճուկ մահը:  
Նրանք կոչեցին ինձ շնացող կին  
Եվ ցանկասեր գոթ, ինձ անարգեցին դառն խոսքերով,  
Որ մարդու ականջն երբեք չէր լսել:  
Եվ եթե այստեղ դուք մի հրաշքով չհայտնվեիք,  
Ինձ կսպանեին քինախնդրությամբ:  
Իմ վրեժն առեք, եթե սիրում եք ձեր մորը հարապատ,  
Թե ոչ՝ այսուհետ դուք չեք համարվի իմ որդիները:

## ԴԵՄԵՏՐԻՈՍ

Ահա սպացույց, որ որդին եմ քո:

*Սրով խոցում է Բասիանուսին*

## ՔԻՐՈՆ

Իսկ այս հարվածը ցույց կտա ուժն իմ:

*Խոցում է Բասիանուսին, որը մեռնում է*

## ԼԱՎԻՆԻԱ

Դու էլ հարվածիր, բարի՛ Շամիրամ, ո՛չ, ավելի ճիշտ՝  
դաժան Տամորա,  
Քանզի անունդ խիստ պատշաճում է քո բնությանը:

## ՏԱՄՈՐԱ

Տուր ինձ դաշույնդ: Այժմ իմ որդիք, դուք պետք է տեսնեք,  
Թե ձեր մոր ձեռքը ինչպե՛ս է մաքրում ձեր սիրելի մոր  
վիրավորանքը:

## ԴԵՄԵՏՐԻՈՍ

Ապասի՛ր, մայր իմ: Նա ամենից առաջ մեզ է պատկանում:  
Նախ՝ ծեծիր ցորենն, ապա հարդն այրիր:

Այս սիրունիկը շա՛տ է պարծենում յուր պարկեշտությամբ,  
Յուր ամուսնական հավատարմությամբ,  
Եվ նա դրանցով սաստիկ շպարված՝ փորձում է ծաղրել ձեր  
մեծությանը:

Մի՞թե նա պետք է գերեզման տանի այս բոլորն իր հետ:

## ՔԻՐՈՆ

Թե տանի՝ թող ես ներքինի դառնամ:  
Քարշ տվեք արագ նրա ամուսնուն ինչ-որ գաղտնի փոս,  
Եվ թող դիակը դառնա գլխատակ մեր խոլ կրքերին:

## ՏԱՄՈՐԱ

Իսկ երբ ճաշակեք մեղրը ցանկալի,  
Մի՛ թողեք մեղվին կենդանի մնա՝ նա մեզ կխայթի:

## ՔԻՐՈՆ

Հավատա՛, մայր իմ, մենք կայաշուպանվենք:  
Գնանք, սիրունիկս, պետք է բռնությամբ հաճույք ստանանք  
Ձեր պարկեշտության այդ պահածոյից:

## ԼԱՎԻՆԻԱ

Տամորա, միայն դեմքով ես դու կին...

## ՏԱՄՈՐԱ

Չեմ ուզում լսել, շուտ տարեք նրա՛ն:

## ԼԱՎԻՆԻԱ

Արքայորդիներ՛ր, աղաչե՛ք նրան, որ նա ինձ լսի,  
Ես պետք է նրան լոկ մի բան ասեմ:

## ԴԵՄԵՏՐԻՈՍ

Լսի՛ր, կայսրուհի:  
Դու ուրախացիր՝ տեսնելով նրա արցունքները հորդ,  
Բայց թող քո սիրտը նրանց նկատմամբ լինի անպա,  
Ինչպես անձրևի կաթիլների տակ ամուր կայծքարը:

## ԼԱՎԻՆԻԱ

Որտե՞ղ է տեսնված, որ վագրի ձագը մորը խրատի,  
Օ՛ր, կատաղություն մի՛ ուսուցանիր քո մորը վայրի,  
Այդ պագուսը քեզ ներարկել է քո մայրը վաղուց՝  
Կուրծքը ծծելիս՝ կաթը փոխվել է քո մեջ մարմարի,

Դու ճաշակել ես դաժանությունը նրա ստիճաններից,  
Բայց որդին միշտ չէ նմանվում մորը:

### Քիրոնին

Աղաչի՛ր նրան, գուցե կանացի գույքը շարժվի:

### ՔԻՐՈՆ

Ի՞նչ, ուզում ես, որ ինքս ցույց տամ ինձ,  
Թե ապօրինի՞ պավակ եմ, պոռնիկ:

### ԼԱՎԻՆԻԱ

Ճշմարտությունն է՝ ագռավից երբեք արտույտ չի ծնվում,  
Բայց ես լսել եմ, երանի՛ ալժմ այսպես կրկնվեր,  
Որ երբ առյուծի գուրն է շարժվում թողնում է կտրել  
Իր արքայական սուր մագիլները:  
Ասում են՝ կեր է ագռավը ճարում ճնճողակի համար,  
Թեև սեփական ձագերն են քաղցած իրենց բնի մեջ:  
Օ՛, դու իմ հանդեպ, թեև քո դաժան սիրտն է ասում՝ ոչ,  
Աղաչում եմ քեզ, եղիր գթասիրտ:

### ՏԱՄՈՐԱ

Ես չեմ հասկանում ի՞նչ է նա ուզում: Շո՛ւտ տարեք նրան:

### ԼԱՎԻՆԻԱ

Օ՛, թույլ տուր ասել, ի սեր Տիտոսի,  
Որ կյանքդ բաշխեց, թեև կարող էր նա քեզից խլել,  
Մի՞ լինիր այսքան քարասիրտ ու խուլ, բա՛ց ականջներդ:

### ՏԱՄՈՐԱ

Եթե դու նույնիսկ ինձ վիրավորանք չհասցնեիր,  
Նրա սիրո համար քեզ չէի ների:

Ճիշեք, տղաներ, թե ձեր մայրն ինչքան արցունք է թափել,  
Որպեսզի փրկեր ողջակիպումից կյանքը ձեր եղբոր,  
Բայց այդ կատաղի Աղորոնիկոսի գույքը չջարժվեց,  
Տարեք դուք նրան և ինչպես կուզեք նրա հետ վարվեք,  
Ինչքան վատ վարվեք, այնքան սիրելի դուք կդառնաք ինձ:

### ԼԱՎԻՆԻԱ

Թույլ տուր քեզ կոչել բարի թագուհի,  
Դու քո սեփական ձեռքով սպանիր ինձ այս հովիտում:  
Կյանքիս համար չէ, որ այսպես երկար աղաչում եմ քեզ,  
Ես՝ խեղճ աղջիկս, մեռա, երբ մեռավ իմ Բասիանոսը:

### ՏԱՄՈՐԱ

Իսկ ի՞նչ ես ուզում ինձնից, խելագա՛ր:

### ԼԱՎԻՆԻԱ

Օ՛, մի հապաղիր, մահ եմ աղերսում և ուրիշ մի բան,  
Որ արգելում է կանացիությունս ասել իմ լեզվին:  
Օ՛, ինձ ապատիր նրանց կրքերից,  
Որ շատ ավելի սարսափելի են, քան ինքը՝ մահը:  
Արագ ինձ նետիր ինչ-որ կեղտոտ փոս,  
Որտեղ չի կարող մարդկային աչքը մարմինս տեսնել,  
Սպանիր, որ դու կոչվես գթասիրտ, բարի մարդասպան:

### ՏԱՄՈՐԱ

Ես ինչպե՞ս կրկեմ իմ տղաներին իրենց հաճույքից,  
Ո՛չ, ո՛չ: Թող նրանք իրենց կրքերը քեզնով հագեցնեն:

### ԴԵՄԵՏՐԻՈՍ

Դեհ, առաջ անցիր, առանց այն էլ մեկ երկար պահեցիր:

## ԼԱՎԻՆԻԱ

Ոչ մի գթություն՝ և նույնիսկ ոչ մի կանացիություն:  
Ախ, դու վայրենի, դու կնոջ անունն արատավորող,  
Թող անեծք թափվի...

## ՔԻՐՈՆ

Ես պիտի փակեմ քո մեծ բերանը:  
Քարչ տուր, եղբայրս, սրա ամուսնուն,  
Սա հենց այն փոսն է,  
Ուր Ահարոնը մեկ խորհուրդ տվեց թաքցնել նրան:

*Դեևտարիոսը զգում է Բաախանուսին փոսը, որից հետո Դե-  
ևտարիոսն ու Քիրոնը բռնի ուժով տանում են Լավինիային*

## ՏԱՄՈՐԱ

Գնացեք բարով, բայց զգուշ եղեք այդ անպգամից,  
Թող սիրտս չպզա ուրախությունը այնքան ժամանակ,  
Քանի դեռ բոլոր Անդրոնիկոսներին չեմ բնաջնջել:  
Թող վրեժխնդիր իմ տղաները այդ փողոցային պոռնիկին  
պղծեն,

Իսկ ես կփնտրեմ սիրելի մավրիս:

Գնում է

*Մտնում են Ահարոնը, Քվինտոսն ու Մարցիոսը*

## ԱՎԱՐՈՆ

Այս կողմը եկեք, արքայորդիներ, բայց զգուշ քայլեք,  
Ես ձեզ բերում եմ ուղիղ այն փոսը,  
Որտեղ տեսել եմ հովապին քնած:

## ՔՎԻՆՏՈՍ

Աչքերս են մթնում, սա լավ նշան չէ:

## ՄԱՐՑԻՈՍ

Իմն էլ, տղաներ: Թե չտեսչեի՝  
Մեր որսը թողած՝ կքնեի մի քիչ:  
*Ընկնում է փոսի մեջ*

## ՔՎԻՆՏՈՍ

Ի՞նչ, դու փո՞սն ընկար: Օ՛, դավադիր փոս:  
Վայրի վարդերն են բերանը ծածկել,  
Իսկ տերևներին նոր հեղված արյան նոր կաթիլներ կան,  
Շատ ավելի թարմ, քան առավոտյան մաքրափայլ ցողը  
ծաղկանց թերթերին:

Սա ինձ թվում է անիծյալ մի տեղ:  
Խոսիր, եղբայր իմ, վիրավո՞ր ես դու:

## ՄԱՐՑԻՈՍ

Այո՛, եղբայրս, խիստ սարսափելի մի տեսարանից,  
Որ երբևիցե կարող էր փշրել սիրտը մարդկային:

## ԱՎԱՐՈՆ

*(ստանձին)*

Իսկ այժմ կայսրին կբերեմ այստեղ,  
Սրանց տեսնելով՝ ես կմտածի,  
Որ հենց սրանք են եղբորն սպանել:

Գնում է

## ՄԱՐՑԻՈՍ

Եղբայրս, ինչո՞ւ ինձ սիրտ չես տալիս,  
Չես օգնում, որ ես դուրս գամ անիծյալ  
Այս արնոտ փոսից:

## ՔՎԻՆՏՈՍ

Ինձ պաշարել է անսովոր մի վախ,  
Եվ մի ցուրտ դող է իմ մարմնով անցնում:  
Սիրտս պզու՛մ է ավելի վառ բան,  
Քան թե կարող եմ աչքերը տեսնել:

## ՄԱՐՅԻՈՍ

Որ դու համոզվես, թե քո ազնիվ սիրտն ինչպես է պզու՛մ  
ճշմարտությունը,

Ահարոնի հետ նայիր փոսի մեջ  
Եվ դու կտեսնես արդան ու մահվան պատկերն ահավոր:

## ՔՎԻՆՏՈՍ

Գնացել է նա, իսկ իմ կարեկցող սիրտը չի թողնում,  
Որ իմ աչքերը մի անգամ նայեն այն տեսարանին,  
Որը կասկածի սարսափ է ծնում:  
Օ՛, ասա՛, եղբայր, ի՞նչ կա այդ փոսում,  
Ես մինչև հիմա երեխայի պես վախ չեմ ունեցել,  
Բայց այժմ նայի՛ր՝ վախենում եմ ես:

## ՄԱՐՅԻՈՍ

Իշխան Բասիանոսն ընկած է այստեղ,  
Այս մուռք, արնախում, գարշելի փոսում  
Մորթված գառան պես:

## ՔՎԻՆՏՈՍ

Բայց եթե, իրոք, փոսն այսքան մուռք է,  
Ինչպե՛ս իմացար, որ Բասիանոսն է:

## ՄԱՐՅԻՈՍ

Սրբունտ մատին կա մի թանկարժեք, փայլուն մատանի,  
Որ լույս է տալիս այս մթին փոսին:  
Եվ այդ մատանին, ինչպես կանթեղը դամբարանի մեջ,  
Լուսավորում է այդ մեռած մարդու այտերն հողեղեն  
Եվ ցույց է տալիս չարաձայն փոսը:  
Այսպես, գիշերով լուսինն էր փայլում Պրիամի վրա,  
Երբ նա պառկած էր իր սիրած կույսի արյամբ շաղախված:  
Նղբայր, ինձ օգնի՛ր քո թույլ ձեռքերով,  
Եթե սարսափն է նրանց թուլացրել,  
Օգնի՛ր, որ դուրս գամ այս անհագ լափող ապաստարանից,  
Այնքան գարշելի, որքան Կոցիտի երախը մթին:

## ՔՎԻՆՏՈՍ

Տուր ձեռքդ, եղբա՛յր, որ կարողանամ քեզ փոսից հանել,  
Եվ եթե հանկարծ ուժքս չպատի՛  
Ես ինձ կզցեմ այս խորունկ փոսը՝  
Խեղճ Բասիանոսի գերեզմանը խոր:

## ՄԱՐՅԻՈՍ

Իսկ ես առանց քեզ չեմ կարող դուրս գալ:

## ՔՎԻՆՏՈՍ

Չեռքդ տուր նորից, ես բաց չեմ թողնի,  
Մինչև որ փոսից քեզ դուրս չհանեմ,  
Եթե չես կարող դու ինձ մոտենալ՝ ես կզամ քեզ մոտ:

Մտնում է փոսը

Գալիս են Սաստրինիտան ու Ահարոնը

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Եկ իմ ետևից, ուզում եմ տեսնել, թե ինչ փոս է սա,  
Ո՞վ է մեջն ընկել: Խոսիր, ո՞վ ես դու,  
Որ այս հորանշող երախն ես ընկել:

## ՄԱՐՅՈՍ

Դժբախտ գավակը Անդրոնիկոսի,  
Չարագույժ ժամը ինձ այստեղ բերեց,  
Որպեսզի տեսնեմ եղբորդ մեռած: -

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Եղբայրս մեռա՞ծ: Կատակում ես դու,  
Ես տեսա նրան ու իր կնոջը փոքրիկ խրճիթում,  
Որ գտնվում է անտառից հյուսիս,  
Մի ժամ դեռ չկա, որ թողի նրանց:

## ՄԱՐՅՈՍ

Որտեղ եք թողել նրանց կենդանի՝ չենք կարող ասել,  
Բայց, ավա՛ղ, այստեղ, այս փոսում գտանք մենք նրան  
մեռած:

*Մտնում են Տամորան, իր շքախմբով, Տխոսու Անդրոնիկոսը  
և Լուցիոսը*

## ՏԱՄՈՐԱ

Որտե՞ղ է կայսրը, իմ ամուսինը:

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Այստեղ է, թեև սուկալի վիշտ է նրան պաշարել:

## ՏԱՄՈՐԱ

Իսկ քո եղբայրը որտե՞ղ է, տեր իմ:

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Մատղ դրեցիր ճիշտ վերքիս վրա,  
Խեղճ մարդն ընկած է այստեղ սպանված:

## ՏԱՄՈՐԱ

Ուրեմն, տեր իմ, շա՛տ ուշ են բերում չարագույժ նամակն,  
Ուր անժամանակ այս ողբերգության մասին է խոսվում:

*(տալով նամակը Սաաուրնիսուսին)*

Ես վարմանում եմ, որ մարդու դեմքը կարող է թաքցնել  
Քաղցր ժպիտով այսքան արյունոտ գազանություններ:

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

*(կարդում է)*

«Եթե ուղղակի մեզ չհաջողվի նրան հանդիպել,  
Սիրելի որսորդ, մենք ակնարկում ենք քեզ Բասիանոսին,  
Դու նրա համար գերեզման փորիր: Հասկացա՞ր դու մեզ:  
Քո վարձը փնտրիր եղինջների մեջ, թանթրվենու տակ,  
Որի ճյուղերը ծածկում են փոսը,  
Ուր Բասիանոսին մենք պիտի թաղենք:  
Գործիր, կղառնաս մեր բարեկամը քո ամբողջ կյանքում»:  
Օ՛, իմ Տամորա, լսե՛լ ես, արդյոք, այսպիսի մի բան,  
Նայի՛ր, սա փոսն է, սա՛ թանթրվենին,  
Բարեկամնե՛ր, փնտրեք, գուցե դուք գտնեք այստեղ  
որսորդին,

Որ պետք էր իմ խեղճ եղբորն սպաներ:

## ԱՎԱՐՈՆ

Օ՛, կեսա՛ր, ահա պարկով լի ոսկին:

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

(*Shunnuhū*)

Արյունառու ջրի քո երկու վայրի շան լակոտները  
Իմ ազնիվ եղբոր կյանքը խլեցին:  
Դուք քաշեք փոսից, տարեք նրանց բանտ,  
Թող մնան այստեղ այնքան ժամանակ,  
Մինչև որ գտնենք մենք նրանց համար մի ակուր պատիժ:

## ՏԱՄՈՐԱ

Ի՞նչ, նրանք այստեղ, այս փոսի մե՞ջ են: Օ՛, ճիվաղություն: Ի՞նչ հեշտությամբ է մարդասպանը երևան գալիս:

## ՏԻՏՈՍ

Վեհավառ կայսր, ահա ծնրադիր աղաչում եմ քեզ,  
Արցունքն աչքերիս, ես հազվադեպ եմ արտասվում, տեր իմ,  
Անեծք՝ անիծյալ իմ որդիներին,  
Եթե պարզվի, որ այս հանցանքը նրանք են գործել:

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Եթե պարզվի՞: Նայի՛ր հանցանքը պարզ երևում է:  
Նամակն ո՞վ գտավ, գուցե՝ Տամրա՞ն:

## ՏԱՄՈՐԱ

Տիտոսը գտավ, ինքն էլ վերցրեց:

## ՏԻՏՈՍ

Այո, ես վերցրի, բայց թույլ տուր, տեր իմ,  
Երաշխավորել իմ որդիներին:  
Երգվում եմ իմ հոր սուրբ գերեզմանով՝  
Նրանք պատրաստ են իրենց կյանքի գնով քեզ  
պատասխանել  
Ինչի մեջ նրանց կասկածում ես դու:

## ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Դու չե՛, որ պիտի երաշխավորես: Ե՛կ իմ ետևից:  
Թող մի քանիսը բերեն սպանվածին, իսկ մի քանիսն էլ՝  
մարդասպաններին,  
Չթողնեք խոսեն, քանզի հանցանքը խիստ բացահայտ է:  
Իմ հոգին վկա, եթե ես գտնեմ մահից ավելի վատթար մի  
վախճան,  
Ես այդ վախճանով վերջ կտամ նրանց:

## ՏԱՄՈՐԱ

Ես, Անդրոնիկոս, կխնդրեմ կայսրին,  
Դու մի՛ վախենա, նրանք ձեռք չեն տա քո որդիներին:

## ՏԻՏՈՍ

Գնանք, Լուցիոս, մի՛ դիմիր նրանց:

Գնում են:

## ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Անտառի մի այլ անկյուն

Մտնում եմ Դեմետրիոսն ու Քիրոնը, բռնաբարված Լա-  
վինիայի ճետ, որի ձեռքերն ու լեզուն կտրել են

### ԴԵՄԵՏՐԻՈՍ

Դե՛հ, գնա պատմիր, եթե կարող է քո լեզուն խոսել,  
Թե ով է կտրել քո քնքուշ լեզուն ու քեզ անարգել:

### ՔԻՐՈՆ

Գրիր և այդպես քո մխտը հայտնիր,  
Եվ եթե թույլ տան կտրած ձեռքերդ՝ դարձիր գրագիր:

### ԴԵՄԵՏՐԻՈՍ

Նայի՛ր, ինչպես է նա մեզ սպառնում համր նշաններով:

### ՔԻՐՈՆ

Վապիր տուն, խնդրիր անուշահամ շուր, ձեռքերդ լվա:

### ԴԵՄԵՏՐԻՈՍ

Նա լեզու չունի, որ ջուր աղերսի  
Եվ ոչ էլ ձեռքեր, որ ձեռք լվանա,  
Ուրեմն, թող լուռ ձեմի անտառում:

### ՔԻՐՈՆ

Եթե նման դեպք ինձ հետ պատահեր՝ ինձ կկախելի:

### ԴԵՄԵՏՐԻՈՍ

Այո, թե ձեռքեր դու ունենայիր կախվելու համար:

Գտնւմ են Դեմետրիոսն ու Քիրոնը:

Եղջերաւորողի ձայներ: Մտնում է Մարկոսը, հազին որսորդա-  
կան զգեստ

### ՄԱՐԿՈՍ

Ո՛վ է սա, մի՞թե ինձնից փախչողը եղբորս աղջիկն է:  
Ինձ մի բառ ասա, որտե՞ղ է հիմա քո ամուսինը:  
Եթե ես քնեմ՝ գանձեր կտայի, որ ինձ արթնացնեն,  
Իսկ եթե քնեմ՝ թող չար մոլորակն ինձ այնպես խփի,  
Որ քնեմ հավետ: Խոսի՛ր, սիրելի իմ եղբոր աղջիկ,  
Ինչպիսի՞ դաժան, անողորմ մի ձեռք քեզ այնպիսի կեց-  
ել քո մարմնից կտրեց երկու ճյուղ, երկու սիրուն կարող,  
Որոնց շուքի տակ փափագում էին արքաներն հանգչել,  
Բայց քո մեծ սիրո երջանկությունը  
Չկարողացան նրանք ճաշակել: Ինչո՞ւ էես խոսում:  
Ավա՛ղ, տաք արյան կարմրավառ մի շիթ՝  
Քամուց շփոթված գետակի նման  
Քո խիստ վարդագույն շուրթերի միջև մերթ բարձրանում է,  
Մերթ իջնում քո քաղցր շնչատության հետ:  
Բայց, հավանաբար, ինչ-որ Թերսիդես անարգել է քեզ  
Եվ կտրել լեզուդ, որ դու չնստնես բռնաբարողիդ:  
Ա՛խ, դու ամոթից դեմքդ ես շուռ տալիս,  
Չնայած արյան ամբողջ կորստին,  
Որ երեք բացված վերքից է բխում,  
Դե՛ռ քո այտերն են շիկնում ամոթից, ինչպես Տիտանը,  
Երբ նա կռվում էր մուլթ ամպերի հետ,  
Ախ, քո փոխարեն ե՞ս պետք է խոսեմ,  
Ե՛ս պետք է ասեմ, որ սա այդպես է:  
Ինչպես կուպեի մոքերդ կարողայ, գտնել գազանին,

Եվ խոշտանգելով մեղմացրնեի տանջանքը հոգուս:  
Թաքնված վիշտը ասես թե լինի մի փակ վառարան,  
Որ տաք մոխրի է վերածում սիրտը, ուր վիշտն է ապրում:  
Սուրբ Փիլոմելը՝ լեզուն կտրված,  
Համր նախշերով իր միտքն էր հյուսում կտավի վրա,  
Բայց իմ սիրելի եղբորս աղջիկ, քեզնից խլել են այս շնորհն  
անգամ,

Դու հանդիպել ես Թերևսից ճարտար, խորամանկ մարդու  
Եվ նա այս քնքուշ մատներն է կտրել,  
Որ կարող էին Փիլոմելից էլ ավելի հմուտ, նրբորեն հյուսել:  
Օ՛, եթե հրեջը այս շուշանաթույր ձեռքերը տեսներ,  
Թե ինչպես էին տերևների պես քնքշորեն դողում քնարի  
վրա,

Թե ինչպես էին մետաքսյա լարերն համբուրում նրանց,  
Չեռք չէր տա նրան,  
Կամ եթե լսեր աստվածաշնորհ դաշնակությունը,  
Որ նրա քաղցր լեզուն էր հյուսում,  
Նա իր դաշույնը պատյան կդներ  
Եվ կմրափեր Յերբերի նման նրա գեղեցիկ ոտքերի առաջ:  
Գնանք, սիրելի՛ս, և թող քո հայրը ցավից կուրանա,  
Քանզի այս տեսքից պետք է կուրանան քո հոր աչքերը:  
Մի ժամում հողմը կավերի կանաչ մարգագետինը,  
Իսկ ի՞նչ կթողնի քո հոր արցունքը մի ամբողջ ամսում:  
Մի՛ փախչիր, քանզի մենք պետք է ողբանք քեզ հետ  
միասին,  
Օ՛, երանի թե մեր արցունքները կարողանային քո վիշտն  
ամոքել:

Գնում են:

## ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Հոռո: Մի փողոց:

Մտնում են դատավորներ, սեմատորներ և տրիբուններ,  
Տիտոսի երկու որդիները՝ Մարցիոսն ու Բվիկտոսը, շրթա-  
լակապ: Նրանց տանում են կառափնարան: Տիտոսն ա-  
ղերսելով գնում է առջևից:

ՏԻՏՈՍ

Օ՛, ինձ լսեցեք, իմաստուն այրեր, ազնիվ տրիբուններ,  
Սպասեք մի պահ: Ի սեր ծերունուս,  
Ով վտանգավոր պատերազմներում ջախելությունն էր  
ծախսում անխնա

Մինչդեռ անվտանգ դուք բնում էիք,  
Ի սեր իմ արյան, որ հեղում էի Հոռոսի համար,  
Ի սեր աներազ ու ցրտասառուց այն գիշերների,

Ի սեր դառնահեծ այն արցունքների,  
Որ դուք տեսնում եք այտերիս վրա,  
Շարժեք ձեր գուրջը իմ դատապարտյալ որդոց նկատմամբ,  
Որոնց հոգիներն ապականված չեն, ինչպես կարծում եք:  
Ես քաներկու իմ որդիների բախտը լաց չեղա,  
Քանզի մահացան պատվի սուրբ մահձում,  
Բայց ի սեր նրանց, ազնիվ տրիբուններ, ես դրոշմում եմ  
Այս հողի վրա իմ սրտի անհուն հեկեկանքները  
Եվ արցունքները տխրագին հոգուս:  
Թող հագեցնեն իմ արցունքները ծարավը հողի,  
Իմ վավակների ազնիվ արյունը կստիպի հողին ամոթից  
շիկնել:

*Գրկում է հողը*

*Դատավորները և ուրիշներ անցնում են նրա կողքով*

Օ՛, հո՛ղ, եթե դու հրաժարվես խմել արյունն իմ որդոց,  
Քեզ հետ ավելի կմտերմանամ այս անձրևով,  
Որ դուրս է հորդում այս երկու մաշված հին սափորներից,  
Քան թե այս ջահել ապրիլը իր խենթ հեղեղումներով,  
Ես քեզ կցողեմ սառն անձրևներով ամռան երաշտին,  
Կհալեցրնես ձմռան օրերին ձյուներդ բոլոր տաք  
արցունքներով  
Եվ կպարզվես քո ազնիվ դեմքին գարուններն հավերժ:

*Մտնում է Լուցիոսը, ձեռքին մերկացրած սուր*

Օ՛, տրիբուններ արժանապատի՛վ, օ՛, այրե՛ր բարի,  
Իմ որդիների շղթան արձակեք  
Եվ փոխեք նրանց մահվան վճիռը,  
Թույլ տվեք ասել, որ մինչև հիմա ես լաց չեմ եղել,  
Արդ արցունքներս ասես թե հմուտ ճարտասաններ են:

## ԼՈՒՑԻՈՍ

Օ՛, ազնիվ հայր իմ, իպո՛ւր ես ողբում,  
Տրիբունները քեզ չեն էլ լսում, այստեղ մարդ չկա,  
Քո վիշտն ես պատմում քարերին միայն:

## ՏԻՏՈՍ

Ա՛խ, Լուցիոս, թույլ տուր հանուն իմ որդոց գթություն  
հայցել,  
Տարեց տրիբուններ, ես մի անգամ էլ աղերսում եմ ձեզ...

## ԼՈՒՑԻՈՍ

Բարեգութ հայր իմ, ոչ մի տրիբուն քեզ չի ունկնդրում:

## ՏԻՏՈՍ

Ա՛խ, հոգ չէ, որդիս, եթե լսեին՝  
Ինձ չէին տալու կարևորություն կամ եթե տային  
կարևորություն՝

Նրանք ինձ երբեք չէին կարեկցի, բայց պետք է խոսեմ,  
Թեկույ ապարդյուն...  
Ահա թե ինչու իմ վիշտն եմ պատմում միայն քարերին,  
Թեև չեն կարող իմ տառապանքը քարերն ամոքել,  
Բայց այդ քարերը ավելի լավ են, քան տրիբունները,  
Քանզի իմ խոսքը նրանք չեն կտրում:  
Երբ լաց եմ լինում, իմ ոտքերի տակ քարերն հեկորեն  
Իմ արցունքներն են մեկ-մեկ ժողովում,  
Ասես լայիս են նրանք էլ ինձ հետ:  
Եվ եթե նրանք խիստ շքեղափայլ զգեստ հագնեին,  
Չէր կարող Հռոմը նրանց հավասար տրիբուններ գտնել:  
Քարը փափուկ է մեղրամոմի պես,  
Բայց տրիբունները կարծր են ավելի, քան թե քարերը,  
Քարերը համր են՝ չեն վիրավորում,

Տրիբունները իրենց չար լեզվով մահական վճիռ են արձակում  
մարդկանց:

*Բարձրանում է*

Բայց դու ինչո՞ւ ես սուրդ մերկացրել:

**ԼՈՒՑԻՈՍ**

Իմ եղբայրներին փորձեցի սրով մահից ազատել  
Եվ դրա համար դատապարտված եմ ցմահ աքսորի:

**ՏԻՏՈՍ**

Օ՛, երջանիկ մարդ, քո հանդեպ նրանց գույթն է շարժվել:  
Իմ հիմար Լուցիոս, մի՞թե չես տեսնում,  
Որ անապատ է Հռոմը դարձել,  
Այստեղ ապրում են վագրերը միայն, նրանց որս է պետք,  
Եվ Հռոմն ուրիշ որս չի հայթայթում մեկանից բացի:  
Ի՞նչ երջանիկ ես, որ աքսորում են գազանները քեզ:  
Այս ո՞վ է գալիս մեր Մարկոսի հետ:

*Մտնում են Մարկոսն ու Լավինիան*

**ՄԱՐԿՈՍ**

Տխոս, պատրաստիր տարեց աչքերդ, որպեսզի ողբան,  
Եթե չեն կարող, ապա ծվատիր քո ծերուկ սիրտը,  
Մահացու վիշտ եմ բերում քեզ համար, քո ծերությանը:

**ՏԻՏՈՍ**

Ի՞նձ մահացու վիշտ: Ցույց տուր այդ վիշտը:

**ՄԱՐԿՈՍ**

Սա քո աղջիկն էր:

**ՏԻՏՈՍ**

Հիմա էլ, Մարկոս, իմ աղջիկն է նա:

**ԼՈՒՑԻՈՍ**

Նրա հայացքը սպանում է ինձ:

**ՏԻՏՈՍ**

Թուլակամ տղա, բարձրացիր, նայիր, դժբախտ քոռջդ:  
Լուսիր, Լավինիա, ի՞նչ նկովյալ սուր քո ձեռքը կտրեց,  
Ո՞ր խեղագարն էր՝ ջուր ավելացրեց փոթորկվող ծովին  
Կամ չոր ճյուղերի մի կապոց գցեց այրվող Տրոյային:  
Քո գալուց առաջ վիշտս բարձրացավ,  
Եվ Նեղոսի պես այժմը ավերից նա դուրս է հորդում:  
Օ՛, ինձ սուր տվեք, ես պետք է կտրեմ իմ երկու ձեռքը,  
Քանզի կոփվը, որ օր ու գիշեր  
Նրանք մղեցին հանուն Հռոմի, Հռոմն անարգեց:  
Ինձ խնամելով՝ նրանք իմ վշտի դայակը դարձան,  
Նրանց աղոթքներն աստված չլսեց,  
Նրանց նվիրյալ ծառայություններն անցան ապարդյուն,  
Այժմ նրանցից ես աղերսում եմ մի ծառայություն՝  
Թող մի ձեռքս օգնի մյուսը կտրելու:  
Աղջիկըս, լավ է, որ ձեռքեր չունես,  
Քանզի ձեռքերի ծառայությունը Հռոմն անարգեց:

**ԼՈՒՑԻՈՍ**

Լուսի՛ր, ազնիվ քույր, ո՞վ է քեզ տանջել:

**ՄԱՐԿՈՍ**

Օ՛, նրա մտքի գործիքն հիասքանչ,  
Որ մի հաճելի պերճախոսությանը  
Արտահայտում էր խոհերը նրա,

Պոկվել է հիմա իր սուրբ վանդակից,  
Որտեղ քաղցրաձայն թռչունի նման ունկ կախարդելով,  
Իր քաղցրանվագ երգն էր դայալալում:

### ԼՈՒՑԻՈՍ

Նրա փոխարեն խոսիր, հորեղբայր: Ո՞ւմ սև գործն է սա:

### ՄԱՐԿՈՍ

Այսպես մոլորված ես նրան գտա այս անտառի մեջ,  
Որտեղ ուզում էր ինքը թաքնվել այն եղնիկի պես,  
Որ անբուժելի վերքով է խցովել:

### ՏԻՏՈՍ

Սա իմ եղնիկն էր: Ո՞վ վիրավորեց անմեղ աղջկաս,  
Նա ինձ ավելի շեշտակի խոցեց, քան սուրը մահվան:  
Եվ ես նման եմ այն դժբախտ մարդուն,  
Որ կանգնած ժայռին, շուրջը ջրերի անապատն անծայր,  
Տեսնում է ինչպես ծովն է բարձրանում ալիք առ ալիք  
Եվ սպասում է, թե երբ դավադիր հսկա մի կոհակ  
Կույ կտա իրեն, տանելով ծովի ընդերքն աղահամ:  
Այս ճանապարհով իմ դժբախտ որդիք մահվան գնացին,  
Այստեղ կանգնած է իմ մյուս տղան՝ աքտորված մի մարդ,  
Ահա եղբայրս, որ հեկեկում է իմ վշտի վրա,  
Բայց իմ սիրելի, դժբախտ Լավինիան, անչափ սիրելի,  
Քան թե իմ հոգին, պատճառում է ինձ ավելի խոր ցավ:  
Եթե քեզ այսպես նկարագրեին,  
Ես կցնորվեի: Ի՞նչ պիտի անեմ,  
Երբ տեսնում եմ քո ծաղկուն հասակը այսպես ավերված:  
Դու ձեռքեր չունես, որ արցունքներդ սրբես աղեկեպ,  
Դու լեզու չունես, որ չարագործի անունն ինձ ասես,

Քո անուսինը մեռել է, դո՞ւտարս: Եվ եղբայրներդ՝  
Այս սպանությանն ամբաստանակից, այլևս չկան:  
Ա՛խ, նայի՛ր, Մարկոս, ա՛խ, նայի՛ր, Լուցիոս,  
Երբ եղբայրների անունն առացի՝  
Թարմ արցունքների շիթեր հորդեցին նրա այտերին,  
Անես մեղրացող իջավ շուշանի թերթերին թռչնած:

### ՄԱՐԿՈՍ

Գուցե լալիս է այն բանի համար,  
Որ եղբայրներն են սպանել ամուսնուն  
Կամ գուցե գիտե, որ այդ գործի մեջ նրանք մեղք չունեն:

### ՏԻՏՈՍ

Եթե նրանք են իրավ սպանել պակիվ ամուսնուր,  
Դու ուրախացիր, քանզի օրենքը պատժել է նրանց:  
Ո՛չ, ո՛չ, մեղք չունեն նրանք այդ կեղտոտ, զգվելի գործում,  
Վկա է վիշտը, որ ցույց է տալիս նրանց խեղճ քույրը:  
Ավնիվ Լավինիա, թույլ տուր համբուրել քո շրթունքները,  
Կամ նշան արա, թե ես ինչ ձևով քո վիշտն ամոքեմ:  
Ուզո՞ւմ ես, որ քո եղբայր Լուցիոսը, քո հորեղբայրը,  
Քո հայրը և դու, բոլորս նստենք այս գետի ափին  
Եվ խոնարհվելով ջրերի վրա, տեսնենք ինչպես է  
Ցավն իր կնիքը դրել մեր դեմքին,  
Ճիշտ այն դաշտի պես,  
Որն ավերվել է հեղեղի բերած զարշելի տիղմից,  
Ուզո՞ւմ ես երկար մենք նայենք գետին,  
Մինչև որ կորցնի իր հստակության մաքուր ճաշակը,  
Եվ մեր հորդահոս տաք արցունքներից  
Այն գետը դառնա աղաշորի-փոս:  
Կամ թե ուզո՞ւմ ես ձեռքերս կտրենք քո ձեռքերի պես,

Կամ թե վայրույթով պոկենք մեր լեզուն,  
Եվ մենք համրացած՝ մեր գարշ օրերի մնացորդը ծախսենք,  
Ի՞նչ պիտի անենք: Օ՛, թող մեզանից յուրաքանչյուրը,  
Ով լեզու ունի, այնպիսի անեղ պատուհաս խորհի,  
Որ մեզանից հետո եկող ժամանակն ապշահար նայի մեր  
գործի վրա:

### ԼՈՒՑԻՈՍ

Միրելի հայր իմ, բա՛վ է արտասվես,  
Վիշտդ տեսնելով իմ անբախտ քույրն է լայիս ու ողբում:

### ՄԱՐԿՈՍ

Համբերիր, ապնիվ իմ եղբոր աղջիկ,  
Իմ բարի Տիտոս, աչքերդ սրբիր:

### ՏԻՏՈՍ

Ա՛խ, Մարկոս, Մարկոս, եղբա՛յր, ես գիտեմ,  
Որ քո թաշկինակը չի չորացնի իմ արցունքները,  
Քանզի, դու՛ խեղճ մարդ, այն հեղեղել ես քո արցունքներով:

### ԼՈՒՑԻՈՍ

Ա՛խ, իմ Լավինիա, ես պետք է սրբեմ քո թաց այտերը:

### ՏԻՏՈՍ

Մա՛րկ, Մարկո՛ս, նայի՛ր, ես հասկանում եմ նշանները նրա:  
Եթե Լավինիան լեզու ունենար՝  
Կասեր եղբորն այն, ինչ քեզ ասացի.  
Եղբոր թաշկինակն հենց իր սեփական արցունքով թրջված,  
Չի կարող սրբել քոռջ այտերը այսքան ցավալի:  
Մենք կարեկցում ենք մեր խեղճ աղջկան այսպես վշտահար,

Բայց այս պգացմունքն այնքան հեռու է սիրտ ամոքելուց,  
Ինչպես որ Լիմբոն՝ երջանկությունից:

Մտնում է Սհարոնը

### ԱՀԱՐՈՆ

Քեզ, Անդրոնիկոս, իմ տերը՝ կեսարն այս խոսքն է ասում.  
Եթե սիրում ես քո որդիներին,  
Թող որ Լուցիոսը, Մարկոսը կամ դու, ծերունի Տիտոս,  
Կամ թե ձեզանից որևէ մեկը իր ձեռքը կտրի, ուղարկի  
նրան,

Որի դիմաց նա կվերադարձնի քո որդիներին,  
Եվ դա կլինի միակ փրկագինն իրենց հանցանքի:

### ՏԻՏՈՍ

Օ՛, բարի՛ կա՛յսր: Օ՛, իմ սիրելի՛, ապնիվ Ահարոն,  
Երգե՛լ է, արդյոք, ազոալը այնպես,  
Ինչպես արտույտն է երգում նոր ծագող արևի յույսը:  
Ես ամբողջ հոգով ուրախ եմ կայսրին իմ ձեռքն ուղարկել:  
Օգնի՛ր, Ահարոն, որ ձեռքս կտրեմ:

### ԼՈՒՑԻՈՍ

Սպասի՛ր, հայր իմ, քո ապնիվ ձեռքը,  
Որ տապալել է բազում թշնամիք, պետք չէ ուղարկել,  
Իմ ձեռքը կտրեք, որ եղբայրներս տուն վերադառնան,  
Ջահելությունս արյան կորուստը շատ հեշտ կտանի,  
Թող իմ արյունը իմ եղբայրներին ապատի մահից:

### ՄԱՐԿՈՍ

Օ՛, ձեր ձեռքերից ո՛րը Հռոմին պաշտպան չի կանգնել  
Եվ չի բարձրացրել երկասյր կացինը,

Մահ որոշելով թշնամիների սաղավարտներին:  
Օ՛, ձեր երկուսի ձեռքերը ունեն մեծ արժանիքներ,  
Ձեռքն իմ դեռևս ոչինչ չի արել,  
Եվ թող նա լինի որպես փրկագին իմ եղբոր որդոց,  
Դրանով մի սուրբ գործ կկատարեմ:

ԱՎԱՐՈՆ

Արա՛գ որոշեք՝ ո՞ւմ ձեռքն էք կտրում,  
Թե ոչ՝ կարող են նրանք ավելի շուտափույթ մեռնել,  
Քան թե կատանան իրենց ներումը:

ՄԱՐԿՈՍ

Ի՛մ ձեռքը կտրեք:

ԼՈՒՅԻՈՍ

Երգվում եմ, քոնը չպետք է կտրել:

ՏԻՏՈՍ

Թողեք ձեր վեճը: Չոր խոտն են պոկում,  
Ուրեմն, պոկեք չորացած ձեռքն իմ:

ԼՈՒՅԻՈՍ

Սիրելի հայր իմ, եթե իսկապես ես քո որդին եմ,  
Թույլ սուր ինձ փրկել իմ եղբայրներին մահվան ճակատից:

ՄԱՐԿՈՍ

Երգվում եմ մեր հոր սուրբ հիշատակով,  
Երգվում եմ մեր մոր քնքշանքներով,  
Թող ապացուցեմ իմ եղբայրակա՛ն սերը քո հանդեպ:

ՏԻՏՈՍ

Դեհ, դուք որոշեք, ձեռքս չեմ կտրում:

—80—

ԼՈՒՅԻՈՍ

Ուրեմն, ես գնամ կացնի ետևից:

ՄԱՐԿՈՍ

Բայց պետք է կացինը ես օգտագործեմ:

*Գնում են Լուցիոսն ու Մարկոսը*

ՏԻՏՈՍ

Մոտ եկ, Ահարոն, ես պետք է խաբեմ նրանց երկուսին,  
Օգնիր ինձ քո ձեռքով և փոխարենը ձեռքս կատանաս:

ԱՎԱՐՈՆ

*(առանձին)*

Եթե կոչվում է սա խաբեություն,  
Ուրեմն, կարող եմ կոչվել ավնիվ մարդ,  
Եվ երբեք մարդկանց, քանի դեռ ողջ եմ, չեմ խաբի այսպես,  
Բայց ուրիշ ձևով ես քեզ կխաբեմ,  
Եվ չանցած կես ժամ այդ մասին ինքը կիմանաս, Տիտոս:

*Կտրում է Տիտոսի ձեռքը*

*Մտնում են Լուցիոսն ու Մարկոսը*

ՏԻՏՈՍ

Թողեք ձեր վեճը, ինչ պիտի լիներ՝ արդեն կատարվեց:  
Բարի Ահարոն, տար ձեռքս կայսրին  
Եվ ասա նրան, որ այս կտրված ձեռքն է պաշտպանել  
Նրան բավարթիվ փորձություններից:  
Աղաչիր նրան, որ ձեռքս թաղի,  
Թեև կարող էր այն արժանանալ ինչ-որ մեծ բանի:

—81—

Գարով իմ որդոց, ասա՛, որ նրանց ես համարում եմ  
Մի-մի աղամանդ, ես էժան ազա,  
Բայց նրանք թանկ են, օ՛, չափազանց թանկ,  
Քանակի գնել եմ սեփականությունն իմ:

### ԱԿԱՐՈՆ

Գնում եմ, Տիտոս, ձեռքիդ փոխարեն  
Շուտով կտեսնես քո որդիներին...

(առանձին)

Ուզում եմ ասել՝ նրանց գլուխները:  
Օ՛, գիրանում եմ սրիկայության չարագործ մտքից,  
Թող հիմարները բարություն անեն,  
Թող մխիթարվեն ուղղամիտ մարդիկ գթասիրությամբ,  
Իսկ դու, Ահարոն, քո սև դեմքի պես սևացրու հոգիդ:

Գնում է

### ՏԻՏՈՍ

Օ՛, միակ ձեռքս եմ կարկառում երկինք,  
Թեքելով այս հին ավերակն հողին,  
Եթե կա մի ուժ, որ դժբախտ մարդու հորդ արցունքներից  
սրտաշարժվում է,

Կանչում եմ նրան:

(Լավինիային)

Ի՞նչ, դու ուզում ես ծո՛ւնը իջնել ինձ հետ,  
Խոնարհվի՛ր, դուստրու: Մեր աղոթքները աստված կյսի,  
Մեր հառաչներից կմթագնի երկնականարը,  
Եվ կաղոտանա մեր հառաչների մուժով արևը,  
Այսպես երբեմն իր հավիող գրկում ամպիկն է պահում  
ոսկյա արևին:

### ՄԱՐԿՈՍ

Օ՛, եղբա՛յր, խորհիր ողջամտորեն  
Եվ քեզ մի գցիր հուսահատության անդունդը երբեք:

### ՏԻՏՈՍ

Մի՞թե իմ վիշտը մի խոր անդունդ չէ,  
Թող տխրությունս այսպիսի խորունկ մի անդունդ լինի:

### ՄԱՐԿՈՍ

Թող կառավարվի բանականությամբ վիշտը քո հոգու:

### ՏԻՏՈՍ

Օ, եթե լիներ աղետների մեջ բանականություն,  
Ես գուցե այնժամ չափավորեի իմ տառապանքը,  
Բայց երբ երկինքն է լայիս ցավագին՝ մի՞թե չի ծածկվում  
երկիրը ջրով,  
Երբ քամիներն են ոռնում խելագար՝ մի՞թե չի մորկում ծովը  
վիթխարի  
Եվ մի՞թե ծուխ իր այտուցված դեմքով չի ահաբեկում դեմքը  
երկնքի,

Իսկ դու ուզում ես այս աղմկալի անմտության մեջ  
Գտնել որևէ բանականություն:  
Ես ծովն եմ, եղբա՛յր, լսո՛ւմ ես նրա հառաչանքները,  
Ծովն հեկեկում է, ինչպես երկինքը, և ես երկիրն եմ,  
Եվ ծովս էլ պետք է նրա հառաչով խիստ ալեկոծվի,  
Պետք է երկիրն էլ հեղեղվի-կորչի նրա անդադար  
արցունքների մեջ,  
Ահա թե ինչու ընդերքս նրա վիշտը չի կարող երբեք  
թաքցնել,

Բայց պիտի փսխեմ հարբեցողի պես տառապանքներս,  
Թող ինձ, քանպի ով շատ է կորցնում,  
Նա դառն խոսքով սիրտն է ամոքում:

Մտնում է մի ստրիանդակ, բերելով երկու գլուխ ու մի ձեռք:

### ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Քեզ, Անդրոնիկոս, վատ վճարեցին այս ձեռքի համար,  
Որ ուղարկեցիր կայսրին վեհափառ:  
Ահա գլուխներն ալնիվ քո որդոց,  
Ահա քո ձեռքը՝ արհամարհանքով ետ են ուղարկել,  
Զվարճացել են նրանք քո վշտով, ծաղրել են նրանք քո  
որոշումը:

Ես ավելի եմ քո վիշտը ողբում,  
Քան երբ հիշում եմ հորըս մեռնելը:

Գնում է

### ՄԱՐԿՈՍ

Արդ Սիցիլիայում թող Էտնան սառչի,  
Եվ թող փոխարկվի սիրտս մշտագո այրվող դժոխքի:  
Այս աղետոները ավելի մեծ են, քան թե կարող է աշխարհը  
ծնել,

Թեթևանում ես, երբ լաց են լինում քեզ հետ քո վիշտը,  
Բայց վիշտն անարգված՝ մահ է կրկնակի:

### ԼՈՒՑԻՈՍ

Ա՛խ, նրա հայացքն ինչքան պետք է մեզ այսպես խոշտանգի,  
Մինչդեռ ատելի կյանքի վախճանը չի էլ երևում:  
Եվ մի՞թե մահը թող կտա կյանքին՝ անունն իր կոչել,  
Երբ կյանքը չունի ոչինչ ավելի, քան թե շնչելը:

Լավինիան համբուրում է Տրոսսին

### ՄԱՐԿՈՍ

Ավա՛ղ, իմ խեղճ սի՛րտ, այս մեղմ համբույրը պորություն  
չունի,

Ինչպես պաղ ջուրը՝ ցրտահար օձին:

### ՏԻՏՈՍ

Եվ մի՞թե վախճան չունի այս քունը:

### ՄԱՐԿՈՍ

Բա՛վ է քեզ խաբես, մեռիր դու, Տրոսոս:  
Ո՛չ, դու քուն չունես, նայիր քո որդոց խեղճ գլուխներին,  
Նայիր քո կտրած, ռազմասեր ձեռքին,  
Նայիր ցավատված քո հեզ աղջկան,  
Այստեղ է ահա աքսորյալ որդիդ, որ վարիտրեկի  
Այս տեսարանից գունատվել է խիստ, դարձել անարյուն,  
Այստեղ եմ և ես՝ քո եղբայրն ալնիվ,  
Որն ասես լինի քարե մի արձան սառն ու անզգա:  
Ա՛խ, ես չեմ կարող այլև նայել քո տառապանքին,  
Պոկիր արծաթյա մազերդ մեկ-մեկ  
Եվ ատամներով կրծիր-բզկտիր քո մյուս ձեռքը,  
Թող սարսափելի այս տեսարանը  
Փակի մեր դժբախտ աչքերն հավիտյան:  
Այժմ ճիշտ ու ճիշտ ժամն է փոթորկի,  
Ինչո՞ւ ես այսպես հանդարտվել, եղբա՛յր:

### ՏԻՏՈՍ

Հա՛, հա՛, հա՛:

### ՄԱՐԿՈՍ

Ինչո՞ւ ես, եղբա՛յր, այսպես ծիծաղում,  
Այժմ ծիծաղելն անպատշաճ է խիստ:

## ՏԻՏՈՍ

Մի՞թե չես տեսնում, որ ցամաքել են իմ արցունքները,  
 Մի՞թե չես տեսնում վիշտն է թշնամիս  
 Եվ նա ուզում է այժմ գողնալ իմ թաց աչքերը  
 Եվ կուրացնել նրանց հարկատու հորդ արցունքներով,  
 Այժմ ես ինչպե՞ս վրեժխնդրության քարայրը գտնեմ,  
 Թվում է, եղբայր, այս գլուխները խոսում են ինձ հետ  
 Եվ ինձ սպառնում, որ չճաշակեմ ուրախությունը այնքան  
 ժամանակ,

Քանի դեռ բոլոր այս աղետները չեն վերադարձնի  
 Կոկորդը նրանց, ովքեր սարքեցին այս պատուհանը:  
 Գնանք, ես պետք է խորհեմ իմ գալիք գործերի մասին:  
 Դե՛ւք, դժբախտ մարդիկ, իմ շուրջ հավաքվեք,  
 Որպեսզի ձեզմից յուրաքանչյուրին ես հոգով երզվեմ,  
 Եվ ես երզվում եմ, որ վրեժ կառնեմ ձեր վշտի համար:  
 Միրելի եղբայր, այս գլուխներից մեկը վերցրու,  
 Իսկ ես այս ձեռքով մյուսը կբռնեմ:

Լավինիա, դու էլ անելիք ունես՝  
 Քո ատամներով, սիրելի՛ պոռնիկ, այս ձեռքը բռնիր:  
 Գալով քեզ, Լուցիոս, դու աքսորյալ ես, դու պետք է գնաս,  
 Գնա, սիրելի՛ս, դու գոթերի մոտ, քանակ ժողովիր:  
 Եթե սիրում ես քո դժբախտ հորը, ես չեմ կասկածում,  
 Եկ քեզ համբուրեմ, գործն ստիպում է, որ մենք բաժանվենք:

*Գնում են Տիտոսը, Մարկոսը և Լավինիան*

## ԼՈՒՅԻՈՍ

Մնա՛ս բարով, հայր իմ, ազնիվ Անդրոնիկոս,  
 Անենադժբախտ մարդկանցից մեկը, ով երբևիցե սպրեց  
 Հռոմում:

Մնա՛ս բարով, Հռոմ, Լուցիոսը կգա,  
 Պատանդ է թողնում իր կյանքից խիստ թանկ սիրելի  
 մարդկանց:

Մնա՛ս բարով, քույր իմ, ազնիվ Լավինիա,  
 Օ՛ր, թե լինեիր դու առաջվա պես:  
 Բայց, ավա՛ղ, Լուցիոսն ու խեղճ Լավինիան  
 Ապրում են հիմա մոռացության մեջ, վշտերի գրկում:  
 Եթե ողջ մնամ՝ ես ձեր բոլորի վրեժը կառնեմ,  
 Կստիպեմ գոռոլ Սատուրնինոսին ու իր կայսրուհուն  
 Գթություն հայցեն հպարտ Հռոմի դարպասների տակ,  
 Ինչպես Տարկվինոսն ու իր թագուհին:  
 Այժմ գնում եմ ես գոթերի մոտ, նրանցից պետք է մի  
 քանակ կապեմ,

Որպեսզի վրեժ առնեմ Հռոմից ու նրա կայսրից:

*Գնում է:*

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Մի սենյակ Տիտոսի տանը, ճաշի սեղանը պատրաստ-  
 ված: Մտնում են Տիտոսը, Մարկոսը, Լավինիան ու Կրես-  
 սեր Լուցիոսը

## ՏԻՏՈՍ

Սեղանն է: պատրաստ, չուտենք ավելի, քան պահանջվում է,  
 Որպեսզի պահենք մեր ողջ ուժերը  
 Վրեժ առնելու մեր այս դառնազին վշտերի համար:  
 Մարկոս, դու քանդիր մեր այս վշտերի անծայր կծիկը,  
 Քո եղբոր աղջիկն ու քո եղբայրը՝ երկու խղճալի  
 արարածները,

Որ ձեռքեր չունեն,

Չեն կարող իրենց տասն անգամ խորունկ վիշտն  
արտահայտել:

Տեսնո՞ւմ ես, ինձ լոկ աչ ձեռքս են թողել,  
Որ ես նրանով կուրծքս ծվատեմ,  
Ու երբ իմ սիրտը՝ վշտից խելագար,  
Խխտ բաբախում է այստեղ՝ մարմնիս խալար բանտի մեջ,  
Ես հարվածում եմ տանջահար կրծքիս, որ նա հանդարտվի:

(Լավինիային)

Դո՛ւ, վշտի՛ քարտե՛կ, որ վիշտդ ես հայտնում լոկ  
նշաններով,  
Եթե չես կարող ասնձեղ քո սրտի բաբախումները խխտ  
նախատալից,

Խոցիր քո սիրտը հառաչանքներով  
Կամ ատամներով վերցրու մի դանակ  
Եվ խորունկ մի փոս բաց սրտիդ մտտիկ,  
Որ խեղճ աչքերիդ բոլոր արցունքներն այդ փոսը լցվեն,  
Եվ հեղեղելով, խեղդեն ողբակոծ այդ խելագարին աղի  
ծովի մեջ:

ՄԱՐԿՈՍ

Ամաչիր, եղբա՛յր, մի՛ սովորեցրու դժբախտ աղջկադ,  
Որ իր քնքշագին կուրծքը հարվածի կտրված ձեռքերով:

ՏԻՏՈՍ

Ի՞նչ է, դու վշտից խե՛ղդ ես թոցրել,  
Թող ինձնից բացի ոչ ոք աշխարհում չխելագարվի:  
Ինչպե՞ս կարող է նա կտրված ձեռքով կրծքին հարվածել,  
Բայց դու ինչո՞ւ ես անվերջ կրկնում «ձեռքերը» բառը:  
Ինչո՞ւ ստիպել, որ Էնեասը կրկնակի պատմի,

Թե ինչպես գիշերն այրվեց Տրոյան, և ինչպես նա ինքը  
դժբախտացավ,

Մի՛ դիպչեք նրանց՝ ձեռքերին դժբախտ,  
Թող մենք չհիշենք, թե ձեռքեր չունենք:  
Այս ի՞նչ խելագար մտքեր եմ հայտնում,  
Կարծես թե Մարկոսն այդ բանը չասեր՝  
Կմոռանալինք, որ ձեռքեր չունենք:

Բայց եկեք նստենք: Սիրելի դուստրս, Գա՛յ, սա վերցրու,  
Ի՞նչ է, սեղանին ըմպելիք չկա՞:

Մարկոս, դու լսիր, թե ինչ է ատում,  
Ես հասկանում եմ նրա տանջալից համր նշանները.  
Աղջիկս ասում է՝ ուրիշ ըմպելիք ինքը չի խմի,

Բացի իր վշտի հորդ արցունքներից,  
Որոնք մրրկում են իր տառապանքով և աղիանում այտերի  
վրա:

Լուսկյա՛ց դու վիշտ, ես պետք է կարդամ քո ողջ մտքերը,  
Ես պետք է այնպես անգիր իմանամ քո շարժումները,  
Ինչպես մուրացիկ ճգնափորները աղոթք անելիս:

Դու չես հառաչում, երկինք չես ուղղում  
Տանջված մարմնիդ մնացորդները,  
Աչքդ չես թարթում, ծունկի չես գալիս,  
Նշան չես անում, էլ չես խոնարհվում,  
Որ ես չկապմեմ այդ շարժումներից մի այբբենարան  
Եվ քո մտքերը չկարողանամ մեկ առ մեկ կարդալ:

ԿՐՏՍԵՐ ԼՈՒՅԻՈՍ

Իմ բարի՛ սպափկ, բա՛վ է վշտանառ այսպես դառնորեն,  
Ուրախ հեքիաթներ պատմիր դու նրան:

## ՄԱՐԿՈՍ

Ավա՛ղ, իմ քնքուշ, սիրելի տղա:  
Նա լաց է լինում տեսնելով իր խեղճ պապի խոր վիշաք:

### ՏԻՏՈՍ

Դու լաց մի լինի, քնքշասիրտ տղա,  
Դու աշխարհ եկար տաք արցունքներից,  
Եվ արցունքներն էլ շուտով կսկսեն քո աշխարհն այրել:

*Մարկոսը դանակով հարվածում է սպիտեին*

Ի՛նչ էր դանակով խիածո, Մարկոս:

### ՄԱՐԿՈՍ

Իմ սպանածը մի ճանճ էր, եղբա՛յր:

### ՏԻՏՈՍ

Օ՛, մարդասպա՛ն, սիրտս ես սպանում:  
Իմ աչքերն արդեն ջատ են հագեցել գապանությունից.  
Անտեղ էակի սպանությունը  
Տխտոսի եղբորն անվայել է խիստ: Գևա՛ պատեղից:  
Տեսնում եմ, որ դու մերոնց նման չես:

### ՄԱՐԿՈՍ

Ավա՛ղ, ես միայն ճանճ սպանեցի:

### ՏԻՏՈՍ

Իսկ եթե այդ ճանճը հայր ու մայր ուներ,  
Ա՛խ, նրանք ինչպես պիտի կախեին իրենց ոսկեփայլ  
քնքուշ թևերը,  
Եվ ինչպե՛ս պիտի օդը լցնեին ողբի բզբուկով:

Խե՛ղճ անվնաս ճանճ,

Նա եկավ, որ մեկ ուրախացներ քաղցր բզբուկով,  
Բայց սպանեցիր դու նրան, Մարկոս:

### ՄԱՐԿՈՍ

Ների՛ր ինձ, եղբա՛յր: Դա մի զգվելի կեղտոտ սև ճանճ էր,  
Սև, ինչպես մավրը գոռոզ կայսրուհու,  
Եվ դրա համար սպանեցի նրան:

### ՏԻՏՈՍ

Օ՛, օ՛:

Ինձ ներիր, որ կշտամբեցի:  
Դու բարի գործ ես կատարել, եղբա՛յր:  
Տուր ինձ դանակդ, ես պիտի ծաղրեմ այդ կեղտոտ ճանճին,  
Որ թռավ-եկավ ինձ դիտավորյալ թունավորելու:  
Սա՛ քեզ, Ահարոն, սա՛ քեզ, Տամորա:  
Ա՛խ, սրիկանե՛ր,  
Մենք այնուհանդերձ, այնպես չենք ընկել,  
Որ չկարողանանք մի ճանճ սպանել,  
Որ ածխի պես սև մավրին է նման:

### ՄԱՐԿՈՍ

Ավա՛ղ, դժբախտ մարդ: Վիշաղ այնպես է նրան խեղճացրել,  
Որ սուվերները նրան թվում են կենդանի մարդիկ:

### ՏԻՏՈՍ

Գևանք: Եկ ինձ հետ, դժբախտ աղջիկս,  
Գևանք սենյակդ, այնտեղ քեզ համար ես պիտի կարդամ  
Անցած-գնացած ժամանակների տխուր պատմություններից,  
Դու էլ եկ, տղա՛ս, աչքերդ են ջահել,  
Կկարդաս, երբ իմ աչքերը հոգնեն:

*Գտում են:*

## ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԳ

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Հան: Տիտոսի ազգին

Մտնում են Կրտսեր Լուցիոսն ու Լավինիան, որը հետապնդում է նրան: Տղան, գրքերը թեկ տակ, խուսափում է Լավինիայից: Մտնում են Տիտոսն ու Մարկոսը

### ԿՐՏՄԵՐ ԼՈՒՑԻՈՍ

Օգնիր ինձ, պապիկ, օգնիր խնդրում եմ,  
Ինձ հորաքույրս հանգիստ չի տալիս, չգիտեմ ինչու:  
Հորեղբայր Մարկոս, նայիր՝ ինչպես է նա արագ վապում,  
Ես չեմ հասկանում, թե ինչ է ուզում հորաքույրն ինձնից:

### ՄԱՐԿՈՍ

Կանգնիր իմ կողքին ու մի վախենա թո հորաքույրից:

### ՏԻՏՈՍ

Նա սիրում է քեզ, քեզ վնաս չի տա:

### ԿՐՏՄԵՐ ԼՈՒՑԻՈՍ

Այո, սիրում եր, երբ հայրս Հոռնում եր:

### ՄԱՐԿՈՍ

Ա՛խ, ի՞նչ է ասում իմ եղբոր աղջիկն այս նշաններով:

### ՏԻՏՈՍ

Դու մի վախենա, սիրելի Լուցիոս: Նա ինչ-որ բան է կանխելու ասել: Տե՛ս, թե ինչպես է նա քեզ մտռնում, կարծես ուզում է քեզ մի տեղ տանել:  
Այո, Կորնելիան իր որդիներին երբեք չէր կարդում այնպես եռանդով,  
Ինչպես կարդում եր քեզ համար, Լուցիոս, թո հորաքույրը Մարկ Տուլլիանոսի ոտանավորներն ու «Օրատորը»:

### ՄԱՐԿՈՍ

Դու չե՞ս կռահում, թե ինչու նա քեզ հանգիստ չի տալիս:

### ԿՐՏՄԵՐ ԼՈՒՑԻՈՍ

Ես չեմ հասկանում, չեմ կարող նույնիսկ մի բան գուշակել:  
Գուցե մի նույն տանջում է նրան: Իմ պապն ասում եր, Որ ծանր վիշտը հասցնում է մարդուն խելագարության:  
Ես կարդացել եմ, որ խելագարվեց Հելուբեն վշտից,  
Դրա համար էլ ես վախենում եմ,  
Թեև լավ գիտեմ, որ իմ սիրելի հորաքույրը ինձ Այնպես եր սիրում, ինչպես չէր սիրում իմ մայրը երբեք:  
Եվ եթե խելքը նա չի կորցրել՝ ինձ չէր վախեցնի,  
Այդ էլ ստիպեց՝ գրքերս գցած նրանից փախչել,  
Գուցե և իպուր: Բայց դու ինձ ներիր, բարի հորաքույր,  
Եվ եթե Մարկոս հորեղբայրը գա,  
Ես սիրահոծար ձեզ կհետևեմ:

## ՄԱՐԿՈՍ

Ես կգամ, Լուցիոս:

Լավինիան կտրած ձեռքերով թերթում է գրքերը, որ Լուցիոսի  
ձեռքից են ընկել

## ՏԻՏՈՍ

Ի՞նչ պատահեց քեզ, սիրելի դուստրս: Ի՞նչ է նա ուզում,  
Գուցե գրքերից մեկն է կամենում:

Բա՛ց, Լուցիոս, բա՛ց գրքերը բոլոր:

Իսկ դու, Լավինիա, շատ ես կարդացել,

Գիտես քո սիրած գրքերի տեղն իմ գրադարանում,

Գևա ու փնտրիր գրքերի միջից քո ուզած գիրքը,

Մոռացիր վիշտդ,

Մինչև որ աստված ցույց տա անիծյալ այդ չարագործին:

Բայց նա ինչո՞ւ է ձեռքերը այսպես վեր բարձրացնում:

## ՄԱՐԿՈՍ

Մի՞թե չի ասում, որ մեղավորը մեկ սրիկա չէ,

Կտրած ձեռքերը երկինք է պարզում,

Որ աստծուց խնդրի արդար հատուցում:

## ՏԻՏՈՍ

Լուցիոս, ի՞նչ գիրք է այսպես նա թերթում:

## ԿՐՏՍԵՐ ԼՈՒՑԻՈՍ

«Մետամորֆոզները» Օվիդիոսի,

Մայրս էր ինձ տվել:

## ՄԱՐԿՈՍ

Հանուն այն սիրո, որն արդեն չկա,

Այս մեկն է ընտրել գրքերի միջից:

## ՏԻՏՈՍ

Նայիր, թոռնիկս, ի՞նչ արձագույամբ թերթերն է շրջում,  
Օգնիր դու նրան, ի՞նչ է փնտրում նա:

Կարդա՛ն, Լավինիա: Սա Փիլոմելի ողբերգությունն է,

Ստոր Թերևսի դավաճանության, բռնաբարության մասին է  
պատմում:

Ես վախենում եմ, որ նույն արմատն է քեզ ցավ պատճառում:

## ՄԱՐԿՈՍ

Նայի՛ր, եղբա՛յրս, ինչպես է թերթում գրքի էջերը:

## ՏԻՏՈՍ

Մի՞թե Լավինիա, մութ ու չարագույժ խոր անտառի մեջ  
Բռնաբարել են, անարգել են քեզ Փիլոմելի պես:

Նայի՛ր, օ՞, նայի՛ր:

Այո, այսպիսի մի տեղ կա այնտեղ,

Ուր մենք միասին որս էինք անում,

Երանի՛ այնտեղ մենք երբևիցե որս չանեինք:

Ճիշտ այս անկյունն է նկարագրել պոետն անվանի,

Որն ստեղծել է մայր բնությունը բռնաբարության,

սպանության համար:

## ՄԱՐԿՈՍ

Օ՞, բնությունը երբեք չէր շինի այսպիսի մթին, գարշելի  
որջեր,

Թե՛ ավարճություն չպատճառեին այդ սարսափները մեր  
աստվածներին:

## ՏԻՏՈՍ

Տուր մեկ նշաններ, սիրելի դուստրս,

Այստեղ բոլորս էլ բարեկամներ ենք,

Ո՞ր հռոմեացի պատրիկն հանդգնեց այդ գործը անել,  
Գուցե սենյակդ գողունի մտով Սատուրնին՞սը,  
Ինչպես Տարկինը, որ կորքը լքեց,  
Որպեսզի հետո սուրբ Լուկրեցիայի մահիճը պղծեր:

### ՄԱՐԿՈՍ

Նստիր իմ կողքին, եղբորս աղջիկ, նստիր դու, եղբայր:  
Ոգևորեք ինձ Ապոլոն, Պալլաս, Մերկուրի ու Ջևս,  
Որպեսզի գտնեմ չարագործներին:  
Օ՛, եղբայր, նայի՛ր, նայի՛ր, Լավինիա, գետինը հարթ է,  
Եթե կարող ես ինձ նման շարժիր այս բարակ ցուպը,  
Նայիր, անունս ավապի վրա ինչպես եմ գրում առանց  
ձեռքերի:

Մարկոսը՝ ատամներով բռնած ցուպը, որ շարժում է ուղքերի  
օգնությամբ, գրում է ավապի վրա իր անունը

Թող անիծվի նա, ով մեզ ստիպեց դիմել այս խաղին:  
Իմ եղբոր աղջիկ, գրիր ավապին, վերջապես, ցույց տուր,  
Ինչ աստվածներն են կամենում տեսնել վրեժի համար,  
Եվ թող երկինքը թո ցուպը շարժի,  
Որ դու դրոշմես ավապի վրա դժբախտությունդ,  
Եվ մենք կիմանանք ճշմարտությունն ու չարագործներին:

Լավինիան ատամներով բռնում է ցուպը և, կտրած ձեռքերը  
շարժելով, գրում է ավապի վրա

### ՏԻՏՈՍ

Կարդո՞ւմ ես, եղբայր, ի՞նչ է նա գրում.  
«Stuprum, Chiron, Demetrius»<sup>1</sup>

<sup>1</sup> «Բռնաբարում, Գիրոն, Դեմետրիոս»:

### ՄԱՐԿՈՍ

Ի՞նչ: Տամորայի անառակ որդիք  
Կատարողներն են այս սարսափելի, արյունոտ գործի:  
ՏԻՏՈՍ

Magni dominator poli,  
Tam lentus audis scelera? Tam lentus vides?<sup>1</sup>.

### ՄԱՐԿՈՍ

Խաղաղվի՛ր, եղբայր: Այն, ինչ գրված է ավապի վրա,  
Բավ է մի վայրկյան, որ աղեկոծի խաղաղ մտքերը  
Ու մանկան սիրտը կայրույթով վինի:  
Իմ բարի եղբայր, ծունր իջիր ինձ հետ,  
Եվ դու, Լավինիա, ծունր իջիր, տղաս,  
Դու՛ հռոմեացի Հեկտորի հույսը,  
Օ, երգվե՛ք ինձ հետ, ինչպես որ երգվեց շահել Բրուտոսը  
Լուկրեցիայի հոր ու ամուսնու հետ,  
Երբ տեսավ տան մեջ իր պարկեշտ կնոջ պատիվն  
անարգված:

Երգվե՛ք, որ մահու վրեժ մենք կառնենք այս նենգ գոթերից.  
Որ մենք կտեսնենք արյունը նրանց  
Կամ թե կմեռնենք վիրավորանքից:

### ՏԻՏՈՍ

Այո, բայց ինչպե՞ս կարող ենք հասնել մեր նպատակին:  
Եթե դու ձեռք տաս այս քոթոթներին, քեզ փորձանք կգա:  
Կարթնա՜ս նրանց մայրը վրիժառու: Եվ եթե հանկարծ

<sup>1</sup> Երկնային մեծ տիրակալ, ի՞նչ համբերությամբ ես դիտում չարագործությունները: Ի՞նչ հանդուրժողաբար ես նայում նրանց:

Գործի հոտն առնի՝ նա առյուծի հետ սերտ դաշինք կնքած,  
Կանդախ նրան՝ շոյելով մեջքը,  
Ու երբ նա քնի՝ ամեն ինչ կանի մայրը բարկացկոտ:  
Սիրելի եղբայր, որսորդ ես անփորձ: Թող ինձ այս գործը:  
Գնանք, ես պետք է գտնեմ պղնձյա մի բարակ թիթեղ  
Ու փորագրեմ դաշույնիս ծայրով թիթեղի վրա նրա բառերը,  
Որպեսպի նրանք երբեք չջնջվեն:  
Հյուսիսի քամին ցիրուցան կանի այս ավազները,  
Ինչպես Սիրիլի թերթերը մզլած,  
Եվ այն ժամանակ ի՞նչ պետք է մնա քո դասից, եղբայր:  
Ի՞նչ կասես, Լուցիոս:

#### ԿՐՏՍԵՐ ԼՈՒՑԻՈՍ

Ես կասեմ, պապիկ, եթե լինեի հասուն տղամարդ,  
Նույնիսկ նրանց մոր ննջասեղանը չէր կարող թաքցնել  
Հռոմեական լծի այս ստրուկներին:

#### ՄԱՐԿՈՍ

Այո, Լուցիոս, քո հայրն էլ այսպես անձևվիրաբար  
Հաճախ էր գործում իր երախտամոռ երկրի համար:

#### ԿՐՏՍԵՐ ԼՈՒՑԻՈՍ

Ես էլ հորս պես սուրս կպարպեմ, եթե ողջ մնամ:

#### ՏԻՏՈՍ

Եկ, գնանք ինձ հետ իմ պինանոցը,  
Քեկ պիտի պինեմ և ապա, Լուցիոս,  
Դու պիտի տանես իմ ընծաները կայսրուհու որդոց:  
Դեհ, գնանք, գնանք: Դու կկատարե՞ս հանձնարարությունս:

#### ԿՐՏՍԵՐ ԼՈՒՑԻՈՍ

Այո, ես նրանց կուրծքը կպատռեմ իմ այս դաշույնով:

#### ՏԻՏՈՍ

Ո՛հ, ո՛հ, թոռնիկս, պետք չէ այդ ձևով:  
Քեկ կասեմ՝ ինչպես: Գնանք, Լավինիա: Մարկոս, տունն  
հսկիր,

Ես ու Լուցիոսը գնում ենք պալատ ներկայանալու  
Եվ մեկ հարգալից կընդունեն այնտեղ:

Գնում են Տիտոսը, Լավինիան ու Կրտսեր Լուցիոսը

#### ՄԱՐԿՈՍ

Օ՛, դուք, աստվածներ, կարո՞ղ եք լսել բարեգութ մարդու  
հառաչանքները

Եվ չշարժել ձեր գթասրտությունն ու կարեկցանքը:  
Մարկոս, դու հսկիր այս խելագարին,  
Ա՛խ, նրա սրտում վշտի սպիներ ավելի շատ կան,  
Քան իր թշնամու վահանի վրա,  
Բայց, այնուհանդերձ, նա չի կամենում իր վրեժն առնել,  
Օ՛, դուք աստվածներ, Աղոթոնիկոսի վրեժը լուծեք:

Գնում է:

#### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Հոռն: Մի դահիճ պալատում

Մտնում են մի կողմից Ահարոնը, Դեմետրիոսը և Քիրո-  
նը, մյուս կողմից՝ Կրտսեր Լուցիոսը և նրա ծառան, բերե-  
լով գեմքի մի կապոց, որի վրա գրված են չափաճո տողեր

#### ՔԻՐՈՆ

Դեմետրիոս, նայիր, մեկ մտա է եկել Լուցիոսի տղան,  
Բերել է ինչ-որ հանձնարարություն:

ԱՀԱՐՈՆ

Տնդած պապիկից՝ ինչ-որ մի ցնդած հանձնարարություն:

ԿՐՏՍԵՐ ԼՈՒՑԻՈՍ

Արքայորդիներ, ես խոնարհաբար  
Ողջույն եմ բերել Անդրանիկոսից:

(առանձին)

Իսկ հռոմեական մեր աստվածներից խնդրում եմ ձեզ մահ:

ԴԵՄԵՏՐԻՈՍ

Շնորհակալություն, սիրելի՛ Լուցիոս, ի՞նչ լուր ես բերել:

ԿՐՏՍԵՐ ԼՈՒՑԻՈՍ

(առանձին)

Այն լուրը, որ դուք սրիկաներ եք,  
Բռնաբարության խարան դրոշմված դեմքերիդ վրա:

(բարձր)

Թե հաճո է ձեզ, իմ պապը ինձ հետ ուղարկել է ձեզ  
Իր պինանոցի լավագույն զենքը, որ ձեր մեծաշուք  
Չափեղությանը՝ Հռոմի հույսին, հաճույք պատճառի:  
Ինձ կարգադրեց այսպես էլ ասել և ես ասում եմ,  
Որ ընծաները հարկ եղած դեպքում դուք լավ գործածեք:  
Եվ այսպես ես ձեզ թողնում եմ այստեղ,

(առանձին)

արևո՛տ սրիկանե՛ր:

Գնում են Կրոսներ Լուցիոսն ու իր ծառան

ԴԵՄԵՏՐԻՈՍ

Այս ի՞նչ կապոց է, վրան էլ ինչ-որ բառեր են գրված,  
Եվ կարդանք, Բիրոն:

Կարդում են

Integer vitue, scelerisque purus,  
Non eget Mauri, nes arcu<sup>1</sup>.

ՔԻՐՈՍ

Օ՛, Հորացիոսի քերթվածներից են, ինձ քաջ ծանոթ են,  
Ես կարդացել եմ տարիներ առաջ Քերականության մեջ:

ԱՀԱՐՈՆ

Այո, դուք ճիշտ եք, Հորացիոսից են:

(առանձին)

Ինչ է նշանակում ավանակ լինել:  
Ինձ դուր չեն գալիս այս կատակները,  
Ծերուկը նրանց դիմակն է պատռել,  
Չենք է ուղարկում բանաստեղծության տողերը վրան,  
Որպեսզի նրանց խիստ վիրավորի,  
Թեև չեն գգում նրանք հասցրած վիրավորանքը:  
Թե ոտքի լիներ այժմ կայսրուհին մեր խորթաթափանց,  
Կգնահատեր բարի ծերունու սրամտությունը,  
Բայց թող կայսրուհին անհանգիստ մահճում քիչ  
հանգստանա:

(բարձր)

Արքայորդիներ, մի՞թե չբերեց բախտավոր աստղը  
Մեզ այստեղ, Հռոմ, մեզ՝ պիևորներին օտարերկրացի,  
Հաջողություն չէ՞ր, որ կայսերական դարպասների մոտ,  
Իր եղբոր առաջ վիրավորեցի տրիբուն Մարկոսին:

<sup>1</sup> Նա, ով սպրում է ազնվորեն և խորթ է նրան օրինազանցությունը,  
կարիք չունի ո՛չ մավրիտանական միզակի, ո՛չ էլ աղեղի:

ԴԵՄԵՏՐԻՈՍ

Բայց ավելի մեծ հաջողություն չէ՞  
Տեսնել, թե ինչպես այդ մեծ պատրիկը  
Չարամտորեն ուղարկել է մեզ այսպիսի նվեր:

Ա<ԱՐՈՆ

Մի՞թե, Դեմետրիոս, նա պատճառ չուներ այդ բանի համար.  
Չէ՞ որ դուք նրա քնքուշ աղջկան  
Օգտագործեցիք բարեկամաբար:

ԴԵՄԵՏՐԻՈՍ

Ես կուզենայի, որ հոռմեացի ճիշտ հապար կանայք  
Նույնպես մեր կրթերն հագեցնեին:

ՔԻՐՈՆ

Այդ ցանկության մեջ՝ սեր ու գթություն:

Ա<ԱՐՈՆ

Բացակայում է ձեր մայրը, թե ոչ՝ նա կասեր՝ ամե՛ն:

ՔԻՐՈՆ

Քսան հապար էլ նրանք լինեին՝ նա նույնը կասեր:

ԴԵՄԵՏՐԻՈՍ

Գնանք, աղոթենք մեր աստվածներին  
Մեր սիրելի մոր տանջանքի համար:

Ա<ԱՐՈՆ

(առանձին)

Ավելի լավ է՝ գնանք աղոթենք աստանաներին,  
Քանզի լքել են մեզ աստվածները:

*Բեմի խորքից ձայներ*

ԴԵՄԵՏՐԻՈՍ

Ինչո՞ւ են կայսրի փողերը հնչում այսպես ցնձագին:

ՔԻՐՈՆ

Ուրախանում է որդու ծնունդով:

ԴԵՄԵՏՐԻՈՍ

Սը՛ս, ո՞վ է գալիս:

*Մտնում է Ծծմայրը, գիրկը՝ սևամորթ մի երեխա*

ԾԾՄԱՅՐ

Բարի առավոտ, արքայորդիներ,  
Օ՛, դուք չե՞ք տեսել մավր Ահարոնին:

Ա<ԱՐՈՆ

Այո, տեսել են ավել կամ պակաս կամ՝ ամենևին:  
Ահարոնն ես եմ, ի՞նչ ես կամենում նրանից, վիճակ:

ԾԾՄԱՅՐ

Ազնիվ Ահարոն, մենք կործանվեցինք,  
Օգնիր քեզ, թե ոչ կորած ենք հավետ:

Ա<ԱՐՈՆ

Ի՞նչ ես մրավում որձ կատվի նման,  
Ի՞նչ ես շալի մեջ փաթաթել այսպես:

ԾԾՄԱՅՐ

Այն, ինչ կուզեի ընդմիշտ թաքցնել երկնքի աջքից:  
Ախ, մեր կայսրուհու խայտառակությունը  
Եվ ամոթանքը մեծաշուք Հռոմի:  
Արքայորդիներ, օ՛, նա ծնե՛լ է, ծնե՛լ...

ԱՎԱՐՈՆ

Ի՞նչ, որտե՞ղ:

ԾԾՄԱՅՐ

Տեր իմ, երեխա, անկողնում... էլ ո՞ւր...

ԱՎԱՐՈՆ

Թող աստված նրան հանգստություն տա, իսկ ի՞նչ է ծնել:

ԾԾՄԱՅՐ

Մի սև սատանա:

ԱՎԱՐՈՆ

Սատանայի մա՛յր,

Բախտավոր ծնունդ:

ԾԾՄԱՅՐ

Ոչ թե՛ բախտավոր, այլ սարսափելի, դժբախտ, սև ծնունդ:

Ահա երեխան, ասես թե լինի գարջելի դողոջ

Մեր երկրի սիրուն, սպիտակամորթ տղաների մեջ,

Կայսրուհին քեզ է ուղարկել նրան, քթիցդ է թռել,

Քո իսկ պատկերն է և խնդրում է նա,

Որ քո դաշույնով մկրտես նրան:

ԱՎԱՐՈՆ

Մեղա՛, քեզ, պոռնի՛կ, մի՞թե սևն այդքան զվվելի գույն է:

Օ՛, կարմրաթշիկ, դու սիրուն ծաղիկ:

ԴԵՄԵՏՐԻՈՍ

Ստոր սրիկա՛, այս ի՞նչ ես արել:

ԱՎԱՐՈՆ

Այն, ինչ որ ինքդ չես կարող անել:

ՔԻՐՈՆ

Խափշիկ, մեր սորը կործանել ես դու:

ԱՎԱՐՈՆ

Սրիկա, նրան ես կրկնապատի՛կ մայր եմ դարձրել:

ԴԵՄԵՏՐԻՈՍ

Նրան կործանել ես, դժոխքի սև շուն:

Օ՛, թող անիծվի նրա զվվելի այս ընտրությունը,

Նկովե՛ք ծնունդն այդ սատանայի:

ՔԻՐՈՆ

Նա չպե՛տք է ապրի:

ԱՎԱՐՈՆ

Նա չպե՛տք է մեռնի:

ԾԾՄԱՅՐ

Նա պետք է մեռնի, նրա մայրն ինքն է այսպես կամենում:

ԱՎԱՐՈՆ

Իսկ ինչպե՞ս պետք է նա մեռնի, ծծմա՛յր: Թող իմ արյունի  
Ու պտղի վրա ոչ ոք չփորձի ձեռք բարձրացնել ինձանից  
բացի:

ԴԵՄԵՏՐԻՈՍ

Ես կշամփուրեմ իմ սրի ծայրով այս սև դողոջին,

Տուր այդ լակոտին, իմ սուրը նրան կսպանի արագ:

ԱՎԱՐՈՆ

Իմ սուրն ավելի արագ կթափի քո փորոտիքը:

Ծծմոր մեռքից վերցնում է երեխային և մերկացնում սուրը:

Կորե՛ք, արյունառուշտ մարդասպաններ,

Ուր՞ում եք դուք ձեր եղբորն սպանել:  
Բայց ես երդվում եմ երկնքի փայլուն լուսատուներով,  
Որ շողում էին այնպես գեղեցիկ,  
Երբ նա հղանում էր այս սև երեխան,  
Որ նա կմեռնի իմ լայնաբերան սրի հարվածից,  
Ով կհանդգնի ձեռք տալ առաջնեկ որդուս, ժառանգիս:  
Ես ձեզ ասում եմ, կաթնաշուրթ ձագե՛ր,  
Ո՛չ Հերկուլեսը, ո՛չ սպառնալից Տիփոնի հորդան,  
Եվ ո՛չ էլ Մարսը չեն կարող խլել նրան հոր ձեռքից:  
Ձեզ, արյունարբու անգուր թղաներ, ներկել են, ինչպես  
պատերն սպիտակ

Եվ նախշել, ինչպես գարեջրատան ցուցափեղկերը,  
Ածխաան գույնը այդ գույների մեջ ամենից լավն է,  
Եվ նա հերքում է գույները բոլոր:  
Ծովի ջրերը չեն կարող երբեք սպիտակեցնել  
Կարապի հավետ սև թաթիկները,  
Թեև շարունակ ծովն է մոր նման լվանում նրանց:  
Իմ կողմից ասեք ազնիվ կայսրուհուն, որ երեխա չեմ,  
Ես տեր եմ կանգնում սևուկ տղայիս-  
Ինչպես կարող է, թող արդարանա բարի տիրուհիս:

### ԴԵՄԵՏՐԻՈՍ

Ուզում ես այդպես ծախե՞լ տիրուհուդ:

### ԱՀԱՐՈՆ

Օ՛, ո՛չ, տիրուհին՝ իմ տիրուհին է, իսկ սա՛ ես ինքս եմ,  
Իմ ջահելության ուժն ու պատկերն է,  
Իմ երեխային ես շատ եմ սիրում ամբողջ աշխարհից  
Եվ ի հեճուկս ամբողջ աշխարհի՝ կփրկեմ նրան  
Կամ ձեզնից մեկը պատասխան կտա այստեղ՝ Հռոմում:

### ԴԵՄԵՏՐԻՈՍ

Սրա պատճառով կխայտառակվի մեր մայրը հավետ:

### ՔԻՐՈՆ

Եվ կարհամարհի Հռոմը նրան այս սև զվվելի վիժվածքի  
համար:

### ԾԾՄԱՅՐ

Չայրույթի պահին կայսրը կվճռի պատժել տիրուհուն:

### ՔԻՐՈՆ

Ես կարմրում եմ խայտառակությունից:

### ԱՀԱՐՈՆ

Այո, և սա էլ ձեր գեղեցկության գերադասելի գույներից  
մեկն է:

Օ՛, դավաճան գու՛յն, մատնում ես սրտի գաղտնի գործերը:

Բայց այս երեխան ուրիշ գույն ունի,

Նայե՛ք, ինչպե՛ս է այս սևուկ գերին ժպտում իր հորը,

Կարծես ասում է՝ «Ես քոնն եմ, ծերո՛ւկ»:

Նա ձեր եղբայրն է, արքայորդիներ, և նա սևվել է հենց  
այն արյունով,

Որ ձեզ կյանք տվեց ու նույն արգանդից, ուր բանաված էիք,

Նա և՛ ապատվեց, և՛ աշխարհ եկավ:

Նա ձեր եղբայրն է, ձեր մոր արյունը, ձեր շառավիղը,

Թեև կրում է դրոշմն իմ դեմքի:

### ԾԾՄԱՅՐ

Ի՞նչ ասեմ, տեր իմ, բարի կայսրուհուն:

### ԴԵՄԵՏՐԻՈՍ

Ահարոն, ասա՛, ի՞նչ ենք անելու:

Մենք կհետևենք քո խորհուրդներին,

Փրկիր քո որդուն, որ կարողանանք մենք էլ փրկվել:

## ԱՎԱՐՈՆ

Դեհ, եկեք նստենք, լսեք խորհուրդն իմ:  
Ես ու իմ տղան կնստենք այստեղ՝ ձեր քանու դիմաց,  
Իսկ դուք՝ ա՛յ, այստեղ: Այժմ կարող ենք հաճույքով խոսել  
փրկության մասին:

*Նստում են*  
**ԴԵՄԵՏՐԻՈՍ**

Իսկ քանի՞ կին է տեսել տղային:

## ԱՎԱՐՈՆ

Արքայորդիներ, երբ նույն ճամփով է մեր ջուրը գնում,  
Ես ասածն զառ եմ: Բայց երբ փորձում եք մավրին վրդովել՝  
Ո՛չ վայրի խոլը, ո՛չ էգ առյուծը, ո՛չ ծովն ալեկոծ  
Չեն կարող իրենց վայրի գայրույթով ինձ հետ բաղդատվել:  
Բայց ասա, պառավ, թե քանի՞ մարդ է տեսել տղայիս:

## ԾԾՄԱՅԻ

Տեր իմ, ես ինքս, տատմայր Կորնելիան,  
Եվ ուրիշ ոչ ոք, բացի կայսրուհուց, որ ծնեց նրան:

## ԱՎԱՐՈՆ

Տատմայր Կորնելիան, դու և կայսրուհին:  
Երկու մարդ գաղտնիք կարող են պահել, երբ երրորդ անձը  
բացակայում է:  
Գնա և կրկնիր ասածս կայսրուհուն:

*Սպանում է Ծծմորը*

Խը՛ն, խը՛ն, այսպես է շամփուրի վրա խոլը խոխտում:

## ԴԵՄԵՏՐԻՈՍ

Ի՞նչ ասել կուզես, ինչո՞ւ սպանեցիր նրան, Ահարոն:

## ԱՎԱՐՈՆ

Արքայորդիներ, սա քաղաքական մի պոպոզ քայլ է:  
Եթե ողջ մնար՝ նա մեկ կմատնեի իր երկար լեզվով:  
Այժմ իմացեք՝ ինչ եմ որոշել:  
Մեկնից քիչ հեռու իմ հայրենակից Մոլին է ապրում,  
Երեկ նրա կինն երեխա ծնեց,  
Ճիշտ մոզն է նման, ձեզ պես սայիտակ:  
Դուք պետք է լեզու գտնեք նրա հետ, ոսկի տաք նրան,  
Եվ պատմեք նրանց մեր գործի մասին,  
Մանրամասնորեն բացատրելով,  
Թե ինչպես իրենց միակ երեխան վեր կբարձրանա  
Ու կհամարվի ժառանգը կայսրի,  
Երբ փոխանակվի իմ սևուկ տղան նրանց տղայով,  
Որպեսզի ահեղ այս փոթորիկը սանձվի պապատում,  
Եվ թող մեր կայսրը օրորի նրան իր որդու նման:  
Արքայորդիներ, ես այսպես զատ բուժումը նրա:

*Յույց տալով Ծծմոր դիակը*

Դուք պետք է հոգաք նրա թաղումը,  
Դաշտը մոտիկ է, իսկ դուք հաղթանդամ, քաջ տղաներ եք,  
Գործն ավարտելով՝ ինձ մոտ ուղարկեք տատմորը իսկույն,  
Երբ նրանք՝ տատմայրն ու ծծմայրն արդեն խաղից դուրս  
լինեն,  
Այնժամ թող բոլոր կանայք բանբասեն, ինչքան կամենան:

## ՔԻՐՈՆ

Ինչպես տեսնում եմ՝ դու չես վստահում գաղտնիքը քանում:

## ԴԵՄԵՏՐԻՈՍ

Մեր մոր նկատմամբ ուշադիր ես խիստ,

Եվ մենք բոլորս քեզ ենք պարտական:  
Քիրոնն ու Դեւետրիոսը գնում են, քարշ տալով Ծծմոր դիակը

### ԱՀԱՐՈՆ

Արդ՝ ծիծեռնակից արագ կթռչեմ դեպի գոթերը,  
Այնտեղ կպահեմ գրկիս մեջ փթթող այս գանձն ապահով  
Եվ ես կայսրուհու բարեկամներին թաքուն կտեսնեմ:  
Գեա՛նք, իմ փոքրիկ, հաստաշուրթ գերի, ես քեզ կտանեմ,  
Քանզի դու եղար այս տագնապների ամբողջ պատճառը.  
Դու պիտի ուտես վայրի արմատներ ու հատապտուղ,  
Դու պիտի խմես կաթի շիճուկը, ծծես կուրծքն այծի,  
Դու պիտի ապրես քարանձավի մեջ,  
Որ դառնաս պինվոր և քաշ պորավար:

Գնում է:

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Նույն վայրը: Հրապարակ

Մտնում են Տիտոսը, Մարկոսը, Կրտսեր Լուցիոսը և ուրիշ պատրիկներ (Պուբլիոս, Սեմյոնիոս, և Քաչոս), զինված ճեռ ու աղեղով: Տիտոսը բերում է ճեռեր, որոնց ծայրերին ամրացված են նամակներ:

### ՏԻՏՈՍ

Առաջ եկ, Մարկոս: Ահա ճանապարհն, իմ բարեկամներ:  
Դեհ, ցույց տուր, տղաս, թե դու ինչպես ես աղեղը ձգում,  
ձիշտ ձգիր, և նետն ուղիղ կթռչի նշանակետին,  
Terras Astrea reliquit:<sup>1</sup>  
Մարկ, հիշիր, թե նա ինչպես սլացավ, ինչպես թաքնվեց:

1 Աստրեան լքել է երկիրը:

Բարեկամներ, վերցրեք ձեր գործիքները,  
Դուք, պարմիկներս, գնացեք չափեք խորքը օվկիանի  
Եվ այնտեղ նետեք ձեր ուռկանները,  
Գուցե դուք նրան գտնեք և ծովում,  
Բայց արդարություն ծովի մեջ չկա, ինչպես որ չկա ցամաքի:  
վրա:

Ո՛չ, ո՛չ: Պուբլիոս և Սեմյոնիոս, դուք պետք է փորեք  
Բահ ու բրիչով և հասնեք ուղիղ կենտրոնը երկրի  
Եվ երբ որ մտնեք հողը Պլուտոնի,  
Աղաչում եմ ձեզ, հանձնեք դուք նրան իմ խնդրագիրը  
Եվ ասեք, որ ծեր Անդրոնիկոսը,  
Որ երախտամոռ Հռոմում տեսավ վիշտ ու տառապանք,  
Արդարություն է խնդրում նրանից:  
Ա՛խ, Հռո՛մ, Հռո՛մ, քեզ վշտացրի ես այն ժամանակ,  
Երբ փոխանցեցի ժողովրդի ձայնն այն ստոր մարդուն,  
Ով այսպես դաժան վարվում է ինձ հետ:  
Ուրեմն, գնացե՛ք: Եվ ես խնդրում եմ ուշադիր եղեք,  
Խուպարկեք բոլոր ռապանակները,  
Կայսրը կարող է նրան արքունի նավերից մեկում,  
Եվ այն ժամանակ մենք որտե՞ղ փնտրենք արդարությունը:

### ՄԱՐԿՈՍ

Օ՛, իմ Պուբլիոս, ծանր չէ՞ տեսնել  
Քո հորեղբորը այսպես խանգարված:

### ՊՈՒԲԼԻՈՍ

Դրա համար էլ մենք օր ու գիշեր  
Պետք է ուշադիր հետևենք նրան  
Եվ տանենք նրա քնահաճույքը բարեսրտությամբ,  
Մինչև ժամանակն անօրիշ մի դեղ ուղարկի նրան:

### ՄԱՐԿՈՍ

Իմ բարեկամներ, նրա վշտերին ոչ մի դեղ չկա:  
Գնանք գոթերի ճամբարն հեռավոր և պատերազմով

Պատժենք Հռոմին, որն եղավ այսքան ապերախտ ու նենգ  
Եվ վրեժ առնենք կայսրից դավաճան:

### ՏԻՏՈՍ

Պուբլիոս և դուք, իմ բարեկամներ, չգտա՞ք նրան:

### ՊՈՒԲԼԻՈՍ

Օ՛, ո՛չ հորեղբայր, բայց Պուտոնը ծանուցում է ձեզ,  
Որ ձե՛ր վրեժը դժոխքը կանի, եթե դժոխքից դուք վրեժ  
խնդրեք:

Գալով ձեր խնդրած Արդարությունը,  
Ապա երկնքում կամ թե մի այլ տեղ նա կբաղված է  
Յուպիտերի հետ,  
Այնպես որ, պետք է որոշ ժամանակ սպասել նրան:

### ՏԻՏՈՍ

Ավա՛ղ, Պուտոնը կերակրում է ինձ ուշացումներով:  
Ես պիտի սուզվեմ կրակե լիճը սանդարամետի  
Եվ Աքերոնի խորքից դուրս քաշեմ արդարությունը, բռնած  
կրունկից:

Մարկոս, մենք ոչ թե մայրիներ ենք սեզ, այլ թփեր ենք լոկ,  
Չունենք վիթխարի, ոսկրոտ կազմվածք կիկլոպների պես:  
Թեև կոփված ենք ամուր պողպատից,  
Բայց մեր մեջքերը չեն կարող կրել դժբախտությունը:  
Երբ արդարություն չկա դժոխքում ու երկրի վրա,  
Պետք է աղաչել միայն երկնքին,

Թող աստվածները մեզ Արդարություն ուղարկեն երկիր,  
Որ նա վրեժ առնի մեր վշտի համար:  
Դեհ, գործի անցնենք: Մարկոս, դու հմուտ աղեղնաձիգ ես:

### Բաժանում է նետերը

Ad Iowen.— սա քեզ, Ad Apollinem,

Ad Martem,— սա՛ ինձ,

Սա քեզ, թոռնիկս, ուղղիր Պալլասին, սա՛ Մերկուրիին,  
Այս նետն էլ, Քայոս, Սատուրնին, բայց ոչ՝ Սատուրնինոսին,  
Քանպի այդ նույնն է, թե քամու դիմաց նետեր արձակես:

Պատրաստվիր, տղաս, դու էլ՝ իմ եղբայր:

Երբ անեմ՝ այնժամ նետերն արձակեք:

Հավատացեք ինձ, գրեկուց առաջ լավ եմ մտածել,  
Եվ ոչ մի աստված իմ աղերսանքին անմաս չի մնում:

### ՄԱՐԿՈՍ

Իմ բարեկամներ, ձեր բոլոր նետերն ուղղեք պալատին՝  
Մենք պետք է կայսրի հպարտությունը խիստ վիրավորենք:

### Նրանք նետերն արձակում են:

Օ՛, հրաշալի է, ապրե՛ս Լուցիոս,

Կույսի գիրկն ընկար: Այժմ նետն ուղղիր դեպի Պալլասին:

### ՄԱՐԿՈՍ

Նայիր, եղբայրս, իմ նետը լուսնից թռչում է հեռու,

Նամակդ է կարդում Յուպիտերն արդեն:

### ՏԻՏՈՍ

Ա՛խ, Պուբլիոս, Պուբլիոս, այս ի՞նչ արեցիր,

Նայի՛ր, քո դիպուկ նետը թոցրեց Յուպի եղջյուրը:

## ՄԱՐԿՈՍ

Այ, քեզ վկարճանք: Հենց որ Պուբլիոսն իր նետն արձակեց,  
Վիրավոր Յուլը այնպիսի հարված հասցրեց խոյին,  
Որ սրա երկու եղջուրներն ընկան ուղիղ պլավտը:  
Ո՞վ պիտի գտներ այդ եղջուրները, եթե ոչ միայն պռոնիկ  
կայսրուհին:

Եվ ծիծաղելով այդ պռոնիկուհին ասել է մավրին,  
Որ մավրը չունի մի այլ ընտրություն,  
Քան այն, որ տանի այդ եղջուրները իր կայսրին նվեր:

## ՏԻՏՈՍ

Այդպես էլ կանենք: Թող ուրախություն պարգևի աստված  
մեր միապետին:

*Մտնում է մի խեղկատակ, ձեռքին՝ կամբջուղ, մեջք՝ երկու ա-  
ղավնի*

Լուրեր երկնքից: Մարկոս, փոստն եկավ:  
Ի՞նչ լուր, բարեկամ: Նամակներ ունես,  
Ի վերջո, ի՞նչ է Յուպիտերն ասում, արդյոք բերե՞լ են  
ինձ արդարություն:

## ԽԵՂԿԱՏԱԿ

Ո՞վ, կախաղան բարձրացնողը: Նա ասում է, որ մահապա-  
տիժը հետաձգվել է, որովհետև դատապարտյալին կախելու է  
հաջորդ ջաբաթ:

## ՏԻՏՈՍ

Բայց ես հարցնում եմ քեզ, թե ի՞նչ է ասում Յուպիտերը:

## ԽԵՂԿԱՏԱԿ

Ախտ՛ա, սը՛ր, որ ես չեմ ճանաչում Յուպիտերին: Իմ ամ-  
բողջ կյանքում ոչ մի անգամ չեմ խնել նրա հետ:

## ՏԻՏՈՍ

Անպիտա՛ն, մի՞թե դու չես նամակներ բաժանողը:

## ԽԵՂԿԱՏԱԿ

Այո, սը՛ր, ես միայն նամակներ եմ բաժանում:

## ՏԻՏՈՍ

Նշանակում է՞ դու երկնքի՞ց ես հայտնվել:

## ԽԵՂԿԱՏԱԿ

Ասում ես՝ երկնքի՞ց: Սը՛ր, այնտեղ երբեք ես չեմ եղել:  
Աստված փրկի, որ ջահել օրերիս երկինք չգնամ: Ես ա-  
ղավնիներիս հետ գնալու եմ պղեբեյների ատյան, որպես-  
պի իմ մորեղբոր ու կայսրի սպասավորներից մեկի միջև  
ծագած վեճը կարգավորեմ:

## ՄԱՐԿՈՍ

Եղբայրս, այսպիսի առիթ էլ չի լինի: Թող ներկայացնի քո  
ձառը և թող քո անունից նա կայսրին հանձնի աղավնիներին:

## ՏԻՏՈՍ

Ասա ինձ, կարո՞ղ ես քաղաքավարի հանձնել իմ ձառը  
կայսրին:

## ԽԵՂԿԱՏԱԿ

Ո՛չ, ճիշտն ասած: Սը՛ր, իմ ամբողջ կյանքում քաղաքավարի  
ոչ մի բան չեմ արել:

## ՏԻՏՈՍ

Մոտ արի, տղաս, խելքիդ վոտ մի՛ տուր,  
Բայց կայսրին հանձնիր աղավնիները և դու կստանաս  
Իմ միջնորդությամբ քո վճիռն արդար

Սպասիր, այժմ վերցրու այս ոսկին քո գործի համար:  
Հտապ ինձ բերեք թանաք ու գրիչ,  
Կարո՞ղ ես, ասա՛, շնորհքով հանձնել դու մի խնդրագիր:

ԽԵՂԿԱՍԱԿ

Այո, սը՛ր:

ՏԻՏՈՍ

Ահա խնդրագիրը: Երբ դու կներկայանաս կայսրին, նախ՝  
ծուևր կիջնես, հետո կհամբուրես նրա ոտքը և կհանձնես  
քո աղավիհներին ու կապանես վարձատրությանդ: Ես կլի-  
նեմ մոտակայքում: Տես, հա՛, գործիր, ինչպես ասել եմ:

ԽԵՂԿԱՍԱԿ

Սը՛ր, ինձ վատահիր և ինձ թող մենակ:

ՏԻՏՈՍ

Դու դանակ ունե՞ս: Մոտ արի, ցույց տուր:  
Մարկոս, դանակն առ և լավ փաթաթիր իմ խնդրագրով,  
Չե՞ որ գրել է մի խելձ աղերսու:

(Խեղկատակին)

Երբ խնդրագիրս կհանձնես կայսրին,  
Բախիր իմ դուռը և ասա, թե նա ինչ է ինձ ասում:

ԽԵՂԿԱՍԱԿ

Ատուված ձեզ հետ, սը՛ր: Ես կվերադառնամ:

Գնում է

ՏԻՏՈՍ

Դեհ, գնանք, Մարկոս, հետևիր ինձ Պուբլիոս:

Գնում են:

—116—

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Կույն վայրը: Պալատի առաջ

Մտնում են Սատուրնինոսը, Դեմետրիոսը, Քիրոնը, պաա-  
րիկներ և ուրիշներ: Սատուրնինոսի ձեռքին են Տիտոսի  
արձակած նետերը

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Պատրիկներ, սրանք վիրավորանք չե՞ն:  
Տեսե՞լ է մեկը Հռոմում կայսրին այսպես ընկճված, այսպես  
խռովյալ,

Եվ ո՞վ է այսպես արհամարհանքով նրա դեմ կանգնել,  
Ո՞վ է անարգել նրան անաչառ վճռի համար:  
Պատրիկներ, գիտեք, ինչպես և գիտեն աստվածներն հպոր,  
Թեպետ բզպում են մեր խաղաղության խառնակիչները  
մարդկանց ականջին,

Որ մենք վարվել ենք միայն օրենքով  
Անդրոնիկոսի կանակոր ու չար որդիների հետ:  
Եվ եթե նրա դատողությունը մթագնել է իր իսկ վշտերից,  
Մենք պիտի այսպես հանդուրժե՞նք նրա քնահաճույթը,  
Նրա վայրույթը, նրա մոլուցքը, հարձակումները:  
Եվ նա գրում է այժմ երկնքին հատուցման համար.  
Սա՛ Այոլլոնին, սա՛ Յուպիտերին, սա՛ Մերկուրիին,  
Սա՛ պատերապսի մեծապոր աստծուն:  
Այդ փառավորյալ խնդրագրերը պետք է թռչեին  
Մեծաշուք Հռոմի լայն փողոցներով:  
Եվ ի՞նչ են սրանք, եթե ոչ միայն պարսավագրեր՝ ընդդեմ  
սենատի,

Եթե ոչ միայն հրապարակում, իբրև Հռոմում չիք  
արդարություն,

—117—

Եվ մի՞թե սրանք դառն կատակ չեն, իմ բարեկամներ:  
Բայց քանի դեռ կան նրա այս շինծու խենթությունները,  
Չեն կարող լինել այս հանդգնության ապաստարաններ,  
Եվ նա, և՛ նրա ամբողջ սերունդը պետք է իմանա,  
Որ արդարությունն ապրում է իմ մեջ:  
Թող հանգիստ քնի արդարությունը, քանզի արթնացավ  
Նա մոլեգնորեն կշնջի գոռու դավադիրներին, որ դեռ  
ապրում են:

### ՏԱՄՈՐԱ

Ողորմած տեր իմ, իմ Սատուրնինոս,  
Իմ կյանքի աստված, իմ ողջ մտքերի վետն տիրակալ,  
Մեղմիր վայրույթդ ու զիջող եղիր ծերունու հանդեպ,  
Իր որդիների սիրուց նա դրդված մեղքեր է գործում,  
Նրանց կորուստը խոցել է նրա սիրտը խորապես,  
Ավելի լավ է պիտիել նրա դառնացած հոգին,  
Քան հետապնդել վիրավորանքից վայրացած սրտով:

(տառնձին)

Այո, Տամորա, դու կին խորամանկ, դու պետք է այսպես  
միշտ շողքորթես,  
Բայց արդեն, Տիտոս, դու ճանկս ես ընկել, ես պիտի հեղձ  
քո կյանք-արյունը,  
Եթե Ահարոնն իմաստուն լինի՝ ամեն ինչ փրկված է,  
Խաբիսխ կզցնեք նավահանգստում:

Մտնում է Խեղկասուկը

Ինչ կա, բարի մարդ, մեկ հետ գո՞րծ ունես:

ԽԵՂԿԱՍԱԿ

Այո, եթե ձերդ ողորմածությունը կայսրն է:

### ՏԱՄՈՐԱ

Կայսրուհին ես եմ, իսկ ահա այնտեղ նստած է կայսրը  
ԽԵՂԿԱՍԱԿ

Ճիշտ որ կայսրն է: Աստված և սուրբ Ստեֆանը քեզ հա-  
շողություն են մաղթում: Ես բերել եմ քեզ մի նամակ ու մի  
պոչգ աղալմի:

Սատուրնինոսը կարդում է նամակը

### ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Հե՛յ, տարե՛ք նրան և խկույն կախե՛ք:

ԽԵՂԿԱՍԱԿ

Ես ինչքա՞ն ոսկի պետք է ստանամ:

### ՏԱՄՈՐԱ

Չքվի՛ր, անպիտա՞ն, քեզ պիտի կախեն:

ԽԵՂԿԱՍԱԿ

Կախե՞ն: Երդվում եմ Աստվածամորով, որ վիպս բերել եմ  
լավ գործի համար:

Չինյալ պահակները տանում են նրան

### ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Ինչ վիրավորանք՝ անհանդուրժելի ու դժոխական,  
Ես պիտի տանե՞մ այս հրեշալին ստորությունը:  
Ես գիտեմ, թե այս պատմությունները ով է հորինել,  
Բայց ինչպե՞ս կրեմ այս բոլորն իմ մեջ:  
Կարծես թե նրա դավաճան որդիք, որ սպանել են մեր  
Բաղիանուսին,

Ել թե որևէքով, այլ իմ բնահաճ հրամանով են պատիժը  
կրել:

Այդ սրիկայի մազերից բռնած քարշ տվեք այստեղ,  
Ո՛չ տարիք, ո՛չ փառք, չեն կարող փրկել քեզ՝ Անդրոնիկոս,  
Քեզ պիտի պատժեն քո ամբարտապան հեգնանքի համար:  
Օ՛, խելացնոր թշվառ սատանա, ինձ բարձրացրիր  
Այն քաղցր հույսով, որ մի օր իշխես ինձ ու Հռոմին:

*Մտնում է Էմիլիոսը*

Ի՛նչ լուր, Էմիլիոս:

ԷՄԻԼԻՈՍ

Չինվե՛ք, պատրիկներ: Հռոմն այսպիսի վտանգ չէր տեսել,  
Գոթերը նորից ուռքի են կանգնել  
Եվ վճռական մարդկանց խմբերով, ծարավ կողոպտման,  
Գալիս են Հռոմ: Նրանց վարում է Անդրոնիկոսի որդին՝  
Լուցիոսը,

Վրեժից այրված՝ սպառնում է նա հաշիվներ մաքրել,  
Ինչպես մաքրում էր Կորիոսանը:

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Գոթերի գլուխ պատերազմատեր Լուցիո՞սն է անցել,  
Այս լուրից ահա մարմինս է սառչում,  
Եվ ես կախում եմ դժբախտ գլուխս, ինչպես ծաղիկը՝  
Սառնամանիքից կամ ինչպես խոտը՝ խորշակից վարկված:  
Այո՛, աղետը մոտենում է մեզ, նրան սիրում է ժողովուրդն  
Հռոմի,

Ես ինքս եմ լսել, երբ շրջում էի շորերս փոխած,  
Օ՛, այսու՞մ էլին, որ անարդար է Լուցիոսն աքսորված,  
Եվ փափագում են, որ Լուցիոսն իրենց կայսրը դառնա:

ՏԱՄՈՐԱ

Ինչո՞ւ ես, տեր իմ, այսպես վախենում, քաղաքն ամուր չէ՞:

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Քաղաքն ամուր է, բայց բնակիչներն Անդրոնիկոսի  
որդուն են սիրում  
Եվ կենեն իմ դեմ, որպեսպի օգնեն այդ խառնակիչին:

ՏԱՄՈՐԱ

Արքա, դարձիր դու մտքերիդ արքա, ինչպես անունդ է,  
Մի՞թե կխամրի փայլը արևի,

Երբ մժողուկները թռչում են նրա շողերի առաջ:

Արծիվն է թողնում, որ թռչնակները ուրախ դայլայլեն,

Բայց հոգ չի տանում, թե ինչ են երգում,

Քանպի նա գիտե, որ իր թևերի սովերների տակ

Ցանկացած պահին կրեցնի երգերը նրանց:

Այսպես կարող ես դու լռեցնել այդ հիմար մարդկանց,

Թող զվարճանա քո ոգին նորից, քանպի, կայսր իմ,

Ես պիտի ծերուկ Անդրոնիկոսի միտքը գրավեմ

Բառերով, որոնք ավելի քաղցր են ու վտանգավոր,

Քան թե առվույտը ոչխարի համար, քան խայծը՝ ձկան,

Սակայն ոչխարը ապականվում է հյուսթալի կերով,

Իսկ ձուկը՝ խայծով:

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Բայց նա մեզ համար չի խնդրի որդուն:

ՏԱՄՈՐԱ

Եթե ես խնդրեմ, նա ինձ չի մերժի,

Քանպի կարող եմ ես սիրաշահել ու լցնել նրա ծեր լսելիքը

Ոսկյա խոստումով: Եվ եթե նրա սիրտն ըմբոստանա,  
Եվ ականջները համբանան մեկից,  
Դարձյալ երկուսն էլ՝ սիրտն ու ականջը գերի են լեզվիս:  
Էմիլիոս, գնա որպէս մեր դեսպան  
Եվ ասա՝ կայսրը ուզում է, Լուցիոս, քեզ հետ բանակցել  
Եվ տեսակցության վայր է նա ընտրում  
Քո հոր՝ ծերունի Տիտոսի տունը:

### ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Գնա՛, Էմիլիոս, պատվով կատարիր մեր հրամանը,  
Եվ եթե Լուցիոսն ուզենա պատանդ պոռուջության համար,  
Թող ինքն էլ ընտրի ում որ կամենա:

### ԷՄԻԼԻՈՍ

Տեր իմ, ճշտորեն ես կկատարեմ ձեր հրամանը:

*Գնում է*

### ՏԱՄՈՐԱ

Իսկ ես կգնամ ծեր Տիտոսի մոտ,  
Իմ ամբողջ արվեստն ի գործ կդնեմ,  
Որպեսզի իլեմ գոռոզ Լուցիոսին խելախ գոթերից:  
Սիրելի կայսր, դու պվարթորեն վերստին ժայտա  
Եվ թաղիր քո վախն ու տագնապները իմ արվեստի մեջ:

### ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Քեզ հաշողություն, համոզիր նրան:

*Գնում է:*

## ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Հարթալայր Հոռոմի մերձակայքում

Փողեր: Մտնում են Լուցիոսը և գոթերը թմբուկներով ու  
դրոշակներով

### ԼՈՒՑԻՈՍ

Փորձված ռազմիկներ և հավատարիմ իմ բարեկամներ,  
Ես մեծ Հոռոմից կանակներ ունեմ,  
Որոնք պատմում են, թե ինչպես այնտեղ ատում են կայսրին  
Եվ ինչպես են մեզ փափագում տեսնել,  
Ուստի, առաջնորդներ, ինչպես վայել է ձեր տխրոսներին,  
դուք եղեք հպարտ  
Եվ յուրաքանչյուր վնասի դիմաց, որ հասցրել է գոռոզ  
Հումը,

Դուք ձեր հատուցման վարձքը պահանջեք:

### ԱՌԱՋԻՆ ԳՈԹ

Դու՛ ապնիվ ընձյուղ Անդրոնիկոսի,—  
Ում անունն առաջ սպառնում էր մեզ,  
Այժմ ներշնչում հույս ու պրոություն,

Ում հրաշագործ քաջություններին ու արարքներին  
արժանապատիվ  
Երախտամոռ Հոռմը հնարուցեց միայն արհամարհանքով,  
Գու մեզ վստահիր, կենտովենք այնտեղ, ուր առաջնորդես,  
Նման անտուվա տղթակեզ շոգի այն խայթող մեղվին,  
Որ հետևում է ծաղկած դաշտերով թռչող իր մորը:  
Մենք Տամորայից մեր վրեժը կտանենք:

ԳՈԹԵՐ

Ինչ նա ասում է՝ կրկնում ենք մենք:

ԼՈՒՑԻՈՍ

Նրան խոնարհաբար շնորհակալություն, նույնն էլ ձեզ,  
քաջեր,  
Բայց ո՞վ է գալիս և ո՞ւմ է բերում այս խիպախ գոթը:  
Մտնում է մի գոթ, բերելով Ահարոնին, ձեռքին մի երեխա

ԵՐԿՐՈՐԴ ԳՈԹ

Փառապանծ Լուցիոս, մեր փոքրից հեռու,  
Ես դիտում էի հին մենաստանը,  
Եվ երբ փութաջան հայացքս ուղղեցի շինությանն ավեր,  
Հանկարծ լսեցի պարսպի տակից երեխայի ճիչ,  
Ես շտապեցի դեպի այդ ձայնը:  
Շուտով ինձ հասան մանկանը վսպող այսպիսի բառեր.  
«Լսի՛ր, սևուկս, քո կեսը ես եմ, քո կեսը մայրդ է,  
Եթե չմատներ քո այդ սև գույնը, թե ինչ ծնունդ ես  
Եվ քեզ բնությունն երկներ մորդ պես,  
Ապա, անպիտան, դու կարող էիր մեծ կայսր դառնալ,  
Բայց երբեք սևուկ հորթուկ չի ծնվում  
Երբ ցույն ու կովն են ձյան պես սպիտակ:

Լօիր, անպիտան», — և կատաղաբար այսպես լննչաց, —  
«Քեզ պետք է տանեմ քո հավատարիմ ավնիվ գոթի մոտ,  
Երբ նա իմանա, որ դու կայսրուհու որդին ես, սևուկ,  
Նա քո մոր սիրուն քեզ պետք է գրկի խանդաղատանքով»:  
Այս խոսքի վրա սուրս քաշելով, նետվեցի վրան  
Եվ ահա նրան բերում եմ այստեղ,  
Որ հետը վարվես, ինչպես ուզում ես:

ԼՈՒՑԻՈՍ

Օ՛, պատվարժան գոթ, գիտցիր, սա դե է,  
Որ հափշտակեց Անդրոնիկոսի ձեռքը վառապանծ,  
Սա մարգարիտ է, որ կայսրուհու աչքը գրավեց,  
Ահա և նրա զգվելի պտուղն այրվող կրքերի:  
Խոսիր, սպիտակ-աչք, ո՞ւր էիր տանում սատանայատիպ,  
Քո այս կենդանի ստույգ պատկերը: Ինչո՞ւ չես խոսում,  
Հա՛մբ ես ձևանում, չե՞ս կարող նույնիսկ մի բառ էլ ասել:  
Կախեք, պինվորներ, նրան այս ծառից,  
Հետն էլ՝ շնության պտուղը նրա:

Ա<ԱՐՈՆ

Ձեռք չտաս նրան, նա արքայական տոհմից է սերվում:

ԼՈՒՑԻՈՍ

Չափից ավելի նման է հորը և նա բարություն չի անի երբեք:  
Նախ՝ կախեք որդուն, որ հայրը տեսնի տանջանքը նրա,  
Եվ տանջվի նրա սիրտը հայրական:  
Հե՛յ, սանդուղք բերե՛ք,

Բերում են մի ամադուղք: Ահարոնին ստիպում են բարձրանալ

Ա<ԱՐՈՆ

Փրկիր իմ որդուն

Եվ տար իմ կողմից նրան կայսրուհուն:  
Եթե խնդրանքս կատարես, Լուցիոս, քեզ պարմանալի  
բաներ ցույց կտամ,  
Որոնցից դու մեծ օգուտ կտանաս,  
Իսկ եթե չուզես՝ թող աստիված վարվի, ինչպես կամենա,  
Այնու ոչինչ չունեն ասելու, և թող վրեժը ձեզ շանթահարի:

### ԼՈՒՑԻՈՍ

Լա՛վ, լա՛վ, դեհ, պատմիր:  
Եթե գոհ մնամ քո որդին կապրի, կդաստիարակեմ:

### ԱՎԱՐՈՆ

Եթե գո՛հ մնաս: Լուցիոս, դու երբեք կասկած մի տանիր,  
Որ կտանջվի քո հոգին սաստիկ, երբ որ ես պատմեմ,  
Քանկի ես պետք է մեկ պռ մեկ պատմեմ սպանությունից,  
Բռնաբարուհից, կոտորածներից,  
Ես պետք է պատմեմ սև գիշերն արած իմ սև գործերից,  
Գարշ արարքներից ու չարիքների դավակցությունից,  
Որ լսելիքն են լցնում պայրույթով, ինչ կատարել եմ  
անողորմաբար:

Եվ այս բոլորը թաղված կմնա իմ գերեզմանում,  
Եթե ինձ չերդվես, որ կապրի որդիս:

### ԼՈՒՑԻՈՍ

Պատմիր, ինչ գիտես, և քո երեխան, ասում եմ, կապրի:

### ԱՎԱՐՈՆ

Երդվիր՝ կպատմեմ:

### ԼՈՒՑԻՈՍ

Բայց ինչո՞վ երդվեմ, չէ որ դու աստծուն չես էլ հավատում:  
Ինչպե՞ս կարող ես երդմանս հավատալ:

### ԱՎԱՐՈՆ

Եվ եթե նույնիսկ չհավատալի: Իրավ, Լուցիոս,  
Ես չեմ հավատում, բայց գիտեմ, որ դու այր ես բարեպաշտ,  
Քո մեջ կա մի բան, որ կոչվում է խիղճ:  
Պապական քսան հնարքներ ու նղյաքան ծեսեր,  
Դու կատարում ես, ինչպես տեսել եմ, բազմահոգությամբ:—  
Ահա թե ինչու ստիպում եմ քեզ, որ երդվես, Լուցիոս:  
Չէ՞ որ հիմարք իր կուռքն է պաշտում աստծու փոխարեն  
Եվ նա չի դրժում իր երդումն երբեք.  
Հենց այդ երդումն եմ քեզնից պահանջում: Ուրեմն, երդվիր  
Այդ նույն աստծով, ով էլ որ լինի,  
Ում որ պաշտում ես, ում գահի առաջ դու ծունր ես իջնում:  
Փրկիր իմ որդուն, կերակրիր նրան ու դաստիարակիր,  
Այսպես ոչինչ դու չես խանա:

### ԼՈՒՑԻՈՍ

Երդվում եմ ահա իմ նվիրական պաշտելի աստծով,  
Որ կկատարեմ քո ցանկությունը:

### ԱՎԱՐՈՆ

Նախ՝ դու իմացիր, որ իմ երեխան ծնվեց կայսրուհուց:

### ԼՈՒՑԻՈՍ

Օ՛, խիստ անհագուրդ, անառակ դու կին:

### ԱՎԱՐՈՆ

Սա մի գթասիրտ արարք է, Լուցիոս, համեմատաբար  
Այն հանցանքի հետ, որի մասին դու կիմանաս ինձնից:  
Նրա տղաների ձեռքով սպանվեց Բասիանոսն անմեղ,  
Նրանք կարեցին քո քրոջ լեզուն,

Բուսարարեցին ու կորաւոցին ձեռքերը նրա,  
Այլանդակեցին ու վարդարեցին, ինչպես դու տեսար:

### ԼՈՒՑԻՈՍ

Ստոր սրիկա, և դու կոչում ես դրանք վարդարա՞նք:

### ԱՀԱՐՈՆ

Այո՛, կոկեցի՞ն, լվացի՞ն նրան ու վարդարեցի՞ն  
Եվ նրանց համար դա մի գեղեցիկ վարդախաղ եղավ:

### ԼՈՒՑԻՈՍ

Օ՛, բարբարոսնե՛ր, օ՛, սրիկանե՛ր, ինչպիսին դու ես:

### ԱՀԱՐՈՆ

Այո, ես նրանց ուսուցիչն եղա,  
Սովորեցրի այդ ձևով վարվել:  
Իրենց մորից են նրանք ժառանգել վավաշուտ կիրքը  
Եվ սա սաույգ է՝ ինչպես խաղաթուղթը երբեմն է տանում  
խաղագումարը,

Արնախմությունն ինձնից են առել, սա նույնպես ճիշտ է,  
Ինչպես որ կռվում՝ շներն են բռնում միսկանց կոկորդից:  
Թող արարքներն իմ լինեն վկաներն իմ ողջ եւոյթան,  
Ես եմ դավադիր փոսի մոտ բերել քո եղբայրներին,  
Որտեղ սպանված խեղճ Բասիանոսի դիակն էր ընկած,  
Եվ ես եմ, Լուցիոս, գրել նամակը, որ հայրդ գտավ,  
Ես եմ թաքցրել նամակում հիշված ոսկով լի պարկը,  
Դաշնակցում էին ինձ հետ կայսրուհին ու նրա որդից:  
Եղե՛լ է, որ դու սաստիկ վշտանաս,  
Եվ ես չփնեմ պատճառն այդ վշտի,  
Ես համոզեցի, որ հայրդ կարեց իր ձեռքը ազնիվ,  
Երբ ձեռքն ստացա՝ մի կողմ քաշվեցի,

Քիչ մնաց սիրտս պայթեր ծիծաղից:

Այո, ես տեսա, պատի ետևից, թե հայրդ ինչպես  
Իր ձեռքի դիմաց իր երկու որդու գլուխն ստացավ,  
Ինչպես լաց եղավ, ես ծիծաղեցի այնպես լիաթոք,  
Որ իմ աչքերից նրա աչքի պես արցունք հորդեցին  
Եվ երբ պատմեցի այդ խաղի մասին իմ Տամորային,  
Քիչ մնաց որ նա ուշաթափ փնեթ,  
Այդ խաղի համար նա ինձ պարզվեց երեսուն համբույր:

### ԼՈՒՑԻՈՍ

Եվ այս բոլորը կարող ես պատմել և չկարմրե՛լ:

### ԱՀԱՐՈՆ

Այո՛, առածի այն սև շան նման:

### ԼՈՒՑԻՈՍ

Եվ դու չե՞ս տանջվում այս վարիուրեղի գործերի համար:

### ԱՀԱՐՈՆ

Այո՛, տանջվում եմ, որ հալար անգամ շատ չեմ կատարել  
այսպիսի գործեր,

Եվ այժմ ես այն օրն եմ անիծում,  
Թեև այնպիսի օրեր իմ կյանքում շատ քիչ են եղել,  
Երբ սարափեղի ոճրագործությունն ես չեմ կատարել,  
Մարդ չեմ սպանել կամ չեմ մտածել սպանության մասին,  
Չեմ բռնաբարել դեռատի մի կույս,  
Չեմ մեղադրել անմեղ մի մարդու, չեմ դրժել խոսքս,  
Ոխ չեմ սերմանել երկու սիրելի ընկերոջ միջև,  
Չեմ տարել աղքատ գյուղացու ուլը,  
Չեմ այրել նրա շտեմարանը կամ խոտի դեղը,  
Չեմ հրամայել հանգցնել հրդեհին իրենց արցունքով:

Ես մտեցի եւ գերեզմաններից հաճախ դուրս հանել,  
Նրանց կանգնեցրել իրենց հարապատ մարդկանց դռան մոտ,  
Նոր նրանք նոր են իրենց մորմոքող վիշտը մոռացել,  
Ըս նրանց մաշկին, ինչպես ծառերի կեղևի վրա,  
Փորագրել եմ իմ սուր դանակով-

«Թող ձեր վշտերը երբեք չմեռնեն, թեկուզ ես մեռնեմ»:  
Հապար ահավոր գործեր եմ արել,  
Եվ խիղճս հանգիստ է, ինչպես ուրիշը՝ թե ճանճ սպաներ,  
Բայց միայն մի բան իմ սիրտն է տանջում,  
Որ հապար անգամ չեմ կրկնապատկել իմ ոճիրները:

### ԼՈՒՑԻՈՍ

Ցած բերեք իսկույն այդ սատանային, չպետք է մեռնի  
Նա թեթև մահով, ինչ կախաղանն է պարզևում մարդուն:

### ԱՀԱՐՈՆ

Եթե, իսկպես, սատանաներ կան, ապա կուզեի դառնալ  
սատանա,

Որպեսզի ապրեմ, որպեսզի այրվեմ հավիտենական  
կրակների մեջ,

Միայն թե քեզ հետ լինեմ դժոխքում  
Եվ իմ թունավոր լեզվով քեզ խայթեմ:

### ԼՈՒՑԻՈՍ

Բերանը փակե՛ք և թող այլև ոչ մի բառ չասի:

*Մտնում է մի գոթ*

### ԵՐՐՈՐԴ ԳՈԹ

Առաջնորդ, Հոռուից դեսպան է եկել  
Եվ նա ուզում է անձամբ ձեզ տեսնել:

### ԼՈՒՑԻՈՍ

Ասեք թող ներս գա:

*Մտնում է Էմիլիոսը*

Ողջույն, Էմիլիոս, ի՞նչ լուր Հոռուից:

### ԷՄԻԼԻՈՍ

Փառապանծ Լուցիոս և քաջ իշխաններ, ձեզ իմ միջոցով  
Մեծ Հոռուի կայսրը ողջույն է հղում:  
Նա իմանալով, որ վենք եք վերցրել, ուզում է ձեզ հետ  
Չեր հարապատ իոր տանը բանակցել:  
Եթե պատանդներ դուք պահանջում եք,  
Կարող ենք նրանց անհապաղ հանձնել:

### ԱՌԱՋԻՆ ԳՈԹ

Իսկ ի՞նչ է ասում մեր առաջնորդը:

### ԼՈՒՑԻՈՍ

Էմիլիոս, կայսրը թող պատանդներին  
Հանձնի իմ հորը կամ հորեղբորս՝ բարի Մարկոսին:  
Այդ դեպքում կգանք: Դեհ, քաջե՛ր, առա՛ջ:

*Փողեր: Գնում են*

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Հոռու: Տխրոսի տան առաջ

Մտնում են Տաճորան ու նրա երկու որդիները՝ Դեմետրիոսն ու Քիրոնը. բոլորն էլ զգեստները փոխած

### ՏԱՄՈՐԱ

Այս տարօրինակ, մռաղ զգեստով  
Ես կհանդիպեմ Անդրոնիկոսին և կասեմ նրան,

Որ ես Վրեժն եմ, ինձ ուղարկել են սանդարամետից,  
Որպեսզի մաքրենք նրա սոսկալի վիրավորանքը:  
Դեմ, բախեք դուռը նրա սենյակի,  
Որտեղից, ինչպես ասում են մարդիկ, նա դուրս չի գալիս  
Եվ մտածում է վրիժառության դաժան հնարքներ:  
Ասե՛ք դուք նրան՝ Վրեժն է եկել և փափագում է իրեն միանալ,  
Որպեսզի իր նենգ թշնամիներին կործանի ընդմիջո:

Նրանք բախում են դուռը: Տխտուք բացում է սենյակի դուռը

### ՏԻՏՈՍ

Այդ ո՞վ է այդպես մտքերս ընդհատում:  
Խորամանկությա՞մբ ուզում եք բանալ սենյակիս դուռը,  
Որպեսզի թռչեն տխուր մտքերս,  
Եվ ողջ աշխատանքս ապարդյո՞ւն անցնի:  
Դուք սխալվում եք, քանզի այն ամենն ինչ անելու եմ,  
Նայե՛ք, գրված է արևոտ տողերով  
Եվ ինչ գրված է՝ այն կկատարվի:

### ՏԱՄՈՐԱ

Տխոս, եկել եմ քեզ հետ խոսելու:

### ՏԻՏՈՍ

Օ՛ ոչ, ոչ մի բառ: Ինչպե՞ս կարող եմ իմաստավորել  
Խոսքս շարժումով, երբ ես ձեռք չունեմ,  
Դու իմ նկատմամբ ունես բացահայտ առավելություն,  
Ուրեմն, պետք չէ այլևս խոսել:

### ՏԱՄՈՐԱ

Եթե դու, Տխոս, ինձ ճանաչեիր՝  
Շատ կուպենայիր ինձ հետ պրուցել:

### ՏԻՏՈՍ

Ես խեղազար չեմ և բավական լավ ճանաչում եմ քեզ,  
Ապացույց՝ ահա այս մարմինը խեղճ,  
Ապացույց՝ ահա այս բեկորները ու տողերն արևոտ,  
Ապացույց՝ ահա այս խորշումները մտահոգության ու  
տառապանքի,

Ապացույց՝ ահա գիշերը դժնի և օրը տանջող,  
Ապացույց՝ ահա վշտերս բոլոր,  
Քանզի ես քո մեջ, գոռոզ կայսրուհի,  
Տեսնում եմ հյոր, նենգ Տամորային,  
Մի՞թե չես եկել, որ մյուս ձեռքս էլ տանես նենգորեն:

### ՏԱՄՈՐԱ

Գիտցիր, դժբախտ մարդ, ես Տամորան չեմ,  
Ես բարեկամդ եմ, իսկ նա՝ Տամորան, թշնամին է քո,  
Գիտցիր, Վրեժն եմ, ինձ ուղարկել են սանդարամետից,  
Որպեսզի մտքիդ անգղը կրծող  
Հագենա լրիվ թշնամիներիդ վրեժխնդրությամբ,  
Իջիր, ողջունիր իմ հայտնությունը այս լույս աշխարհում,  
Չբուցիր ինձ հետ դու սպանության ու մահի մասին:  
Չկա այնպիսի մի խորունկ քարայր ու գաղտնի անկյուն,  
Չկա այնպիսի մի կույր մթություն, միգապատ հովիտ,  
Որտեղ արյունոտ սպանությունը կամ թե սոսկալի  
բռնաբարությունն  
Ինձ կարողանան խիստ ահաբեկել, ինձնից թաքնվել:  
Ես կշշնջամ նրանց ականջին իմ անունն ահեղ՝  
Վրեժխնդրություն,  
Եվ նա կստիպի չարագործներին ասրսափից դողալ:

ՏԻՏՈՍ

Վրեծը դո՞ւ ես, ուղարկել են քեզ,  
Որպեսզի տանջես թշնամիների՞ն:

ՏԱՄՈՐԱ

Այո՛, ցած իջի՛ր և ինձ ողջունիր:

ՏԻՏՈՍ

Բայց գալուց առաջ ծառայիր դու ինձ:  
Կանգնած են կողքիդ Բռնաբարությունն ու Սպանությունը.  
Յույց տուր ինձ գործով, որ դու Վրեժն ես,  
Դաշունիք նրանց կամ բզկտիր քո մարտակառքի տակ,  
Այնժամ ես կիջնեմ, կղառնամ կառքիդ կառապանն աչնիվ  
Եվ աշխարհի շուրջ քեզ հետ կջրջեմ:  
Գտիր դու երկու ընտիր նժույզներ՝ սև ինչպես սև սաթ,  
Որպեսզի քաշեն քո վրիժառու կառքն արագընթաց  
Եվ գտիր իրենց ոճրագործ որջում մարդասպաններին.  
Ու երբ քո կառքը դու բռնաավորես նրանց գլուխներով,  
Ես կիջնեմ քեզ մոտ ու քո կառքի հետ  
Կվապեմ, ինչպես մի հետին ստրուկ, բովանդակ օրը՝  
Արևածագից, երբ երկրի վրա Հելիոսն է ելնում,  
Մինչև մայրամուտ, երբ նա սուսվում է ծովի ջրերում:  
Ես կկատարեմ այս ծանր գործը օր-օրի վրա՝  
Մինչև կործանես Բռնաբարությունն ու Սպանությունը:

ՏԱՄՈՐԱ

Ինձացիր, նրանք իմ ծառաներն են, եկել են ինձ հետ:

ՏԻՏՈՍ

Բո ծառանե՞րն են, ինչպե՞ս են կոչվում:

ՏԱՄՈՐԱ

Բռնաբարություն և Սպանություն: Այսպես են կոչվում,  
Քանի որ նրանք պատժում են նրանց,  
Ովքեր այսպիսի հանցանք են գործում:

ՏԻՏՈՍ

Աստվա՛ծ իմ, ինչքա՛ն նման են նրանք կայսրուհու որդուց,  
Իսկ դու՛ կայսրուհուն: Բայց մենք երկրավոր, դժբախտ  
մարդիկ ենք.

Եվ մեր աչքերն են հաճախ սխալվում,  
Օ, բարի Վրեժ, գալիս եմ քեզ մոտ:  
Եթե մեկ ձեռքի ողջագուրանքով դու կգոհանաս,  
Ես կգամ քեզ մոտ, կողջագուրվեմ:

Իջնում է

ՏԱՄՈՐԱ

Խիստ պատշաճում է նրա խենթությանն այս որոշումը:  
Ինչով էլ նրա խելագար միտքը ես սնուցանեմ,  
Դարձյալ դուք պետք է ձեր նուրբ խոսքերով ինձ նեցուկ  
կանգնեք,

Քանզի լրջորեն նա հավատում է, որ ես Վրեժն եմ:  
Ես ներշնչելով ցնդած ծերունուն այդ հիմար միտքը,  
Կստիպեմ նրան, որ մարդ ուղարկի որդու ետևից  
Եվ ես պահելով նրան խնջուլքում՝  
Մի ակնթարթում կգտնեմ ինչ-որ խորամանկ միջոց,  
Որպեսզի ցրեմ խիստ փոփոխամիտ գորքը գոթերի  
Կամ զուցե նրանց դարձնեմ թշնամի այդ խենթ ծերուկին:  
Բայց նա գալիս է: Ես պետք է նորից իմ դերը խաղալ:

Մտնում է Տիտոսը

### ՏԻՏՈՒ

Չեր մեղքով այստեղ՝ մենության գրկում երկար ապրեցի,  
 Բարով եք եկել իմ տխուր տունը, ահե՛ղ Ֆուրիա,  
 Բարով եք եկել, Բռնաբարություն և Սպանություն,  
 Որքա՛ն նման եք դուք մեր կայսրուհուն ու նրա որդոց,  
 Չե՞ս պակասում է սև Մավրը միայն,  
 Մի՞թե դժոխքը չէր կարող ձեզ տալ նման սատանա,  
 Չէ՞ որ կայսրուհին, ինչքան ես գիտեմ,  
 Չէր կարող գնալ որևէ մի տեղ առանց այդ Մավրի:  
 Եթե կուզեիք, որ մեր կայսրուհին ճիշտ ներկայացվեր՝  
 Չե՞ս անհրաժեշտ էր նման սատանա:  
 Բայց ով էլ լինեք, բարով եք եկել, ի՞նչ պիտի անենք:

### ՏԱՄՈՐԱ

Ի՞նչ կուզենայիք, որ մենք անեինք:

### ԴԵՄԵՏՐԻՈՍ

Ցույց տուր ինձ, Տիտոս, մարդասպանին,  
 Եվ ես կպատժեմ այդ սրիկային:

### ՔԻՐՈՆ

Ցույց տուր ինձ, Տիտոս, բռնաբարողին,  
 Եվ ես կպատժեմ այդ սրիկային:

### ՏԱՄՈՐԱ

Ցույց տուր այն հապար սրիկաներին քեզ վիրավորող,  
 Եվ ես նրանցից քո վրեժը կառնեմ:

### ՏԻՏՈՒ

Փստրիք դու նրանց Հռոմի հանցավոր մայրերի վրա  
 Եվ երբ դու գտնես քեզ նման մի մարդ,

Բարի Սպանություն, սպանի՛ր նրան, նա մարդասպան է:  
 Գնա նրա հետ, երբ դու էլ տեսնես քեզ նման մեկին,  
 Բռնաբարություն, բռնաբարի՛ր նրան, բռնաբարողն է:  
 Գնա նրանց հետ, կայսրի պալատում  
 Կա մի թագուհի, նրան սևաթույր Մավրն է ուղեկցում,  
 Դու շատ հեշտությամբ կարող ես նրան քեզնով ձանաչել,  
 Նա ոտից գլուխ քո ճիշտ պատկերն է:  
 Աղաչո՛ւմ եմ քեզ, պատժի՛ր դու նրանց տանջալի մահով,  
 Քանզի տանջեցին նրանք ծերունուս և որդիներս:

### ՏԱՄՈՐԱ

Դու հրաշալի դաս տվեցիր մեզ և մենք այդ դասը լավ  
 կսովորենք,

Բայց բարի եղիր, դո՛ւ, Անդրոնիկոս,  
 Մի մարդ ուղարկիր երիցս խիպախ որդուդ ետևից,  
 Որ քաջ գործերին առաջնորդում է դեպի մեծ Հոսմ,  
 Եվ խնդրիր նրան, որ նա մասնակցի քո տան խնջույքին  
 Ու երբ նա կգա՝ կբերեմ այստեղ մեր կայսրուհուն՝  
 որդիների հետ,  
 Կբերեմ կայսրին, կբերեմ բոլոր թշնամիներիդ,  
 Նրանք ծնրադիր կաղերսեն քեզնից գթասրտություն,  
 Եվ կմեղմանա քո խիստ բարկացած սիրտը նրանցով,  
 Ի՞նչ կասես սրան, բարեգութ Տիտոս:

### ՏԻՏՈՒ

Մարկոս, եղբայր իմ, այժմ քեզ է կանչում դժբախտ Տիտոսը:

### Մտնում է Մարկոսը

Իմ ազնիվ Մարկոս, որդուս՝ Լուցիոսի ետևից գնա,  
 Կգտնես նրան քաջ գործերի մոտ,  
 Խնդրիր դու նրան՝ թող վերադառնա, հետը բերելով

Գործերի խիզախ սրբազաններից մի քանի հոգու-  
հնդրի որ նրան, որ արքը թողնի սահմանված տեղում  
եվ առա՛ կայսրը իր կայսրուհու հետ իմ տանն է հիմա,  
Թող նա շտապի: Այս ամենն արա իմ սիրուց դրված,  
Թող իմ խնդրանքը որդիս կատարի,  
Եթե հոր կյանքը թանկ է իր համար:

### ՄԱՐԿՈՍ

Ամեն ինչ կանեմ, շատ չանցած՝ ես տուն կվերադառնամ:

Գնում է

### ՏԱՄՈՐԱ

Այժմ գնում եմ, որպեսզի ես քո գործով պաղպղեմ,  
Տանելով ինձ հետ իմ ծառաներին:

### ՏԻՏՈՍ

Ինձ մոտ մնացեք, Բռնաբարություն և Սպանություն,  
Թե ոչ՝ իմ եղբորն ես ետ կկանչեմ  
Եվ իմ վրեժը կթողնեմ միայն Լուցիոսի վրա:

### ՏԱՄՈՐԱ

(անանձին՝ իր տղաներին)

Ի՞նչ կասեք, տղանե՛ր, դուք համաձայն եք նրա մոտ մնալ,  
Մինչև որ գնամ իմ կայսրին պատմեմ,  
Թե իր կայսրուհին կատակի տալով ինչպես թաքցրեց  
զավարությունը:

Դուք համբերությամբ տարեք ծերունու քմահաճույքը,  
Նրա հետ խոսեք շողոքորթելով,  
Մինչև որ նորից ես վերադառնամ:

### ՏԻՏՈՍ

(անանձին)

Ես ճանաչում եմ նրանց բոլորին,  
Թեև հիմարի տեղ են ինձ դրել,  
Բայց ես կբռնեմ նրանց բոլորին իրենց թակարդով  
Եվ դժոխային երկու շներին, և նրանց մորը:

### ԴԵՍԵՏՐԻՈՍ

(անանձին՝ Տամորային)

Գնա քո գործին և թող մեկ այստեղ:

### ՏԱՄՈՐԱ

Մնա՛ս բարով, Տիտոս, Վրեժը գնում է,  
Որպեսզի թակարդ գցի քո բոլոր թշնամիներին:

### ՏԻՏՈՍ

Ես չեմ կասկածում, դրա համար էլ, սիրելի Վրեժ, գնաս  
դու բարով:

Գնում է Տամորան

### ՔԻՐՈՆ

Ծերո՛ւկ, մեկ սաս, ի՞նչ պիտի անենք:

### ՏԻՏՈՍ

Ինձ մոտ ձեզ համար բավական գործ կա:  
Պուրլիոս, եկ այստեղ, Քայոս, Վալենտին:

Մտնում են Պուրլիոսը, Քայոսն ու Վալենտինը

### ՊՈՒՐԼԻՈՍ

Ի՞նչ եք հրամայում:

Ուղբեր են սրանք:

## ՊՈԻՔԼԻՈՍ

Կարծեմ, Քիրոնն ու Դեմետրիոսն են, կայսրուհու որդիք:

## ՏԻՏՈՍ

Մխավում ես դու: Նրանցից մեկը Սպանությունն է,

Մյուսի անունն է Բոնաբարություն,

Դրա համար էլ շղթայիր նրանց, ապնիվ Պուբլիոս:

Քայոս, Վալենտին, կապե՛ք ձեռքերը,

Դուք հաճախ էիք ինձանից լսում, թե ինչպես էի այդ պահն  
երպում

Եվ ես ապրեցի մինչև այդ պահը, շղթայեք նրանց,

Փակեք բերաններն, եթե սկսես նրանք բղավել:

Գում է

Պուբլիոսը և մյուսները հարձակվում են Դեմետրիոսի ու Քիրոնի վրա

## ՔԻՐՈՆ

Սարսե՛ք, սրիկանե՛ր: Այստեղ կանգնած են կայսրուհու  
որդիք:

## ՊՈԻՔԼԻՈՍ

Դրա համար էլ կարգադրված է ձեզ ձերբակալել:

Փակեք դուք նրանց բերաններն իսկույն,

Որպեսզի նրանք չասեն ոչ մի բան:

Իսկ շղթաները ամու՛ր են կապված:

Վերադառնում են Տիտոս Անդրոնիկոսը ձեռքին՝ մի դանակ և  
Լավինիան՝ կոնքով

Մտա եկ, Լավինիա, նայիր շղթայված թշւամիներդ:

Տղաներ, փակեք նրանց բերանը, թող նրանք լռեն,

Բայց թող իմ ատեղ բառերը լսեն:

Օ՛, ճիվա՛ղ Քիրոն ու Դեմետրիոս,

Այս վճիռ աղբյուրն աղտոտել եք դուք ձեր կեղտոտ տիղմով,

Այս գեղեցկափայլ ամուսնն եք խառնել ձեր ձմեռը ցուրտ,

Դուք սպանել եք նրա ամուսնուն,

Եվ այս նողկալի հանցանքի համար

Նրա եղբայրներին մատնել են մահվան,

Իմ ձեռքն եք կտրել, որ զվարճանաք,

Կտրել եք նրա երկու ձեռքերը, կտրել եք լեզուն

Եվ այն՝ որ լեզվից ու ձեռքից թանկ է՝ կուսությունն

անքիծ,

Անմարդկայնորեն իլել եք հավետ:

Ի՛նչ պիտի ասելիք, եթե թույլ տայի, որ դուք խոսեիք,

Գուցե ամոթից դուք չհայցեիք գթասրտություն:

Լսե՛ք, դահիճներ, թե ես ինչպես եմ ձեզ չարչարելու:

Իմ այս մեկ ձեռքով, որ բաշխել եք ինձ,

Ես պիտի կտրեմ ձեր կոկորդները,

Իսկ իմ Լավինիան կտրած ձեռքերով կոնքը կրոնի,

Որպեսզի ձեր սև արյունն հավաքի:

Գիտցե՛ք, ձեր մայրը իմ տանը ինձ հետ քե՛ֆ է սարքելու,

Իրեն կոչում է Վրեժխնդրություն, իսկ ինձ՝ խելագար:

Լսե՛ք, սրիկանե՛ր, ես պիտի սղամ ձեր ոսկորները

Եվ շաղախելով ձեր պիղծ արյան հետ՝ նրանցից պիտի

ես խմոր հուռեցնեմ

Եվ այդ խմորից ես պիտի եփեմ երկու կարկանդակ  
Չեր ամոթալի գլուխների համար,  
Եվ կպահանջեմ, որ այդ պտուսիկը՝ ձեր մայրը անտուրբ,  
Խժոյի հողի պես իր իսկ պտուղը:  
Ահա խնջույքը, որին կանչել եմ ձեր մորն անպամ,  
Ահա այն ճաշը, որ կհագեցնի նրա ստամոքսը:  
Օ, դուք ավելի դաժան վարվեցիք իմ դստեր հանդեպ,  
Քան թե վարվել են Փիլոմելի հետ,  
Եվ ես ավելի վրիժառու եմ, քան թե Գրոգնեն:  
Այժմ մտա բերեք ձեր կոկորդները: Մոտ եկ, Լավինիա,

*Կտրում է նրանց կոկորդները*

Արյունն հավաքիր: Երբ նրանք իրենց շունչը կփչեն,  
Ես կաղամ նրանց ոսկորները պիղծ,  
Կխառնեմ փոշին այս խիստ ատելի, կեղտոտ հեղուկին,  
Թող խմորի մեջ նրանց անարգված գլուխներն եփվեն:  
Եկեք, ինձ օգնե՛ք, որպեսպի խնջույքն ավելի արևոտ ու  
դաժան լինի,  
Քան թե խելահեղ կենտավորոսների խնջույքն ահարկու:  
Քարշ տվեք նրանց, ես խոհարարի դեր եմ խաղալու,  
Որպեսպի նրանց նախապատրաստեմ դիմախորելու իրենց  
մորն այստեղ:

*Գնում են՝ քարշ տալով դիակները:*

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Տխրոսի տան բակը: Սեղան է բացված  
Մտնում են Լուցիոսը, Մարկոսը և գոթերը, գերված Ա-  
հարոնի հետ

### ԼՈՒՑԻՈՍ

Հորեղբայր Մարկոս, ես անչափ գոհ եմ,  
Որ հայրս ուզում է ինձ նորից տեսնել այստեղ՝ Հռոմում:

### ԱՌԱՋԻՆ ԳՈԹ

Մենք նույնպես գոհ ենք ձակատագրի այս հանդիպումից:

### ԼՈՒՑԻՈՍ

Քարի հորեղբայր, ձերբակալիր այս բարբարոս մավրին,  
Այս անհագ վագրին, այս խիստ նպոյալ սև սատանային,  
Դու նրան չտաս ոչ մի կերակուր,  
Քանի դեռ նա չի կանգնել դեմ առ դեմ կայսրուհու առաջ,  
Որպեսպի նրա չար հանցանքները լրիվ մերկացվեն:  
Թող լավ թաքնվեն մեր հավատարիմ բարեկամները,  
Ես վախենում եմ, որ կայսրը մեր դեմ դավեր է նյութում:

### ԱՎԱՐՈՆ

Թող մի սատանա իմ ականջի մեջ նյուվք ջջնջա,  
Որ կարողանամ թափել իմ սրտում այսքան կուտակված  
չարության թույնը:

### ԼՈՒՑԻՈՍ

Կորի՛ր, կեղտոտ շուն, զվվելի ստրուկ:  
Տղաներ, օգնեք մեր հորեղբորը, որ տանի նրան:

*Գոթերը գնում են Սհարոնի հետ: Փողերը կայսրի մուտքն  
են ավելում: Փողեր: Մտնում են Սատուրնինոսը և Տանորան  
Էմիլիոսի, տրիբունների ու սենատորների հետ*

### ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Ի՞նչ եմ ես տեսնում, մի՞թե երկնքում կա ուրիշ արև:

ԼՈՒՑԻՈՍ

Ի՞նչ շահ, որ ինքդ ես քեզ արև կոչում:

ՄԱՐԿՈՍ

Հոտի մեծ կայսր և դու, Լուցիոս, թողե՛ք ձեր վեճը,  
Որը կարոտ է հանգիստ քննարկման:  
Սուրբ նպատակով խնշույք է սարքել Տիտոսն հոգատար,  
Թող խաղաղություն, միաբանություն, սեր ու բարություն  
լինի Հոտում,

Ուստի, խնդրում եմ ձեր տեղը գրավեք:

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Հաճույքով, Մարկոս:

*Բարձրասրինգներ*

*Բոլորը նստում են սեղանի շուրջը*

Մտնում է Տիտոսը խոհարարի հագուստով, սեղանին է դռ-  
նում կերակուրը: Հետո մտնում են Լավինիան, քողը երեսին,  
Կրտսեր Լուցիոսը և ուրիշներ

ՏԻՏՈՍ

Ողջո՛ւյն ձեզ, տեր իմ, ողջո՛ւյն նաև ձեզ, ահեղ թագուհի,  
Ողջո՛ւյն ձեզ, գոթեր, ողջո՛ւյն քեզ, Լուցիոս,  
Ողջո՛ւյն բոլորիդ: Թեև հարուստ չեմ մեր այս սեղանը,  
Բայց կհագնեմ ստամոքսներդ, խնդրեմ, ճաշակե՛ք:

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Ինչո՞ւ ես, Տիտոս, այսպես հագնվել:

ՏԻՏՈՍ

Ես հեռուել եմ, որպեսզի իմ տանն, ինչպես որ հարկն է,  
Հյուրասիրեն ձեզ ու մեր կայսրուհուն:

ՏԱՄՈՐԱ

Մենք նկատում ենք այդ բանը, Տիտոս:

ՏԻՏՈՍ

Կնկատեի՞ք, թե թափանցեիք սիրտը ձերունուս:  
Բայց ասա, տեր իմ, արդյոք, լա՞վ արեց Վիրգինիոսը,  
Երբ իր սեփական ձեռքով սպանեց հարապատ աղջկան այ՛ի  
բանի համար,

Որ խել էին նրա պատիվը և կուսությունը:

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Այո, իհարկե, լավ արեց, Տիտոս:

ՏԻՏՈՍ

Իսկ ինչո՞ւ, տեր իմ:

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Որպեսզի չապրեր նրա աղջիկը խայտառակության կնիքը  
դեմքին  
Եվ իր հայացքով շարունակաբար չտանջեր հորը:

ՏԻՏՈՍ

Այո, սլատճառը ծանրակշիռ է, խիստ արդարացի և  
նույնքան ուժեղ,  
Եվ նա կենդանի օրինակ է ինձ՝ դժբախտ ձերունուս,

Ուրեմն, Տիտոս, վարվիր ճիշտ այնպես,—  
Մեռի՛ր, Լավինիա, թող քեզ հետ մեռնի քո ամոթանքը,

*Սպանում է Լավինիային*

Ամոթանքիդ հետ թող մեռնեն քո հոր վշտերը բոլոր:

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Ի՞նչ արեցիր դու, չարագործ հրե՛ջ:

ՏԻՏՈՍ

Սպանեցի նրան, ում համար թափած իմ արցունքները ինձ  
կուրացրին:

Ես էլ դժբախտ եմ Վիրգինիոսի պես:

Եվ ես ունեի տաան հազար անգամ ավելի պատճառ,

Քան նա, որպեսզի այս սարսափելի գործը կատարեր:

Եվ ես կատարեցի:

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Ի՞նչ: Քո աղջկան բռնաբարե՞լ են: Ովքե՛ր են նրանք:

ՏԻՏՈՍ

Ճաշակեք տեր իմ, որ ուժ հավաքեք:

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Ինչո՞ւ սպանեցիր միակ աղջկադ:

ՏԻՏՈՍ

Ես չսպանեցի, այլ՝ նրանք՝ Քիրոնն ու Դեմետրիոսը,

Նրանք աղջկաս բռնաբարեցին, կորեցին լեզուն,

Այդ նրանք էին, որ իմ աղջկան այդպես տանջեցին:

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Թող նրանք իսկո՛ւյն մեզ ներկայանան:

ՏԻՏՈՍ

Մի՛ անհամբուսացեք: Նրանք այստեղ են՝ կարկանդակի  
մեջ,

Որ մեծ հաճույքով ճաշակեց նրանց մայրը անհագորդ,  
Կերավ պտուղը իր իսկ արգանդի:

Եվ սա ստույգ է, և սա ստո՛ւյգ է, վկա դաշույնս:

*Սպանում է կայսրուհուն*

ՍԱՏՈՒՐՆԻՆՈՍ

Մեռի՛ր, խելագար, քո այս նպովյալ արարքիդ համար:

*Սպանում է Տիտոսին*

ԼՈՒՑԻՈՍ

Կարո՞ղ են տեսնել որդու աչքերը արյունը իր հոր:

Արյան դիմաց արյո՛ւն, մեռի՛ր, չարագործ:

*Սպանում է Սատուրնինոսին: Մեծ իրարանցում: Լուցիոսը,  
Մարկոսը և մյուսները բարձրանում են պատշգամբը*

ՄԱՐԿՈՍ

Տխրադեմ արեր, քաղաքացիներ, որդիք Հռոմի,

Դուք որ ցովել եք թշնամությունից,

Ինչպես առնաշունչ հողմից հալածված թռչնի երամը,

Օ՛, ինձ թույլ տվեք ձեզ ուսուցանել,

Թե՛ ինչպես պետք է ցիրուցան եղած ցորենհասկերը

կապել մեկ խրձի

Եվ ինչպես ձուլել միմյանցից անջատ ձեռքն ու ոտքերը

մեկ ողջ մարմնի,

Որպեսզի իրեն չթունավորի վշտոտ Հռոմը,

Եվ նա, ում առաջ տերությունները ի ծուկն են իջնում,  
Ինչպես մի անհույս, խեղճ նավաբեկյալ,  
Իրեն չնաանի խայտառակ մահվան:  
Բայց եթե եղյամն ու խորշումները իմ ծեր տարիքի,  
Իմ փորձառության վկաներն ստույգ,  
Չեն կարող դրդել, որ դուք ինձ լսեք:

(Լուցիտսին)

Դու խոսիր, Հռոմի պնիվ բարեկամ,  
Ինչպես որ հնում մեր նախահայրը,  
Երբ հանդիսավոր լեզվով պատմում էր  
Սիրուց խիստ հիվանդ, տխուր Դիոդոսին  
Այն աղետալի գիշերվա մասին,  
Երբ հնարամիտ հույները առան Գրիամից Տրոյան:  
Պատմիր, թե ինչպես Սինուպը դյուրեց մեր ականջները  
Կամ ով ներս բերեց ճակատագրական մեքենան Տրոյա,  
այո, մեր Հռոմ,

Երկպառակտջական վերքեր բացելով Հռոմի կրծքին:  
Իմ սիրտը քար չէ և ոչ էլ պողպատ,  
Եվ ես չեմ կարող պատմել մեր բոլոր ծանր վշտերը,  
Քանզի հեղեղը իմ արցունքների  
Կխեղդի խոսքս նույնիսկ այն պահին,  
Երբ նա պետք է ձեր ուշադրությունն ավելի լարի  
Ու ձեր կրծքի տակ գույթ արթնացնի:  
Այստեղ է ջահել առաջնորդն Հռոմի և թող նա պատմի,  
Եվ նրա խոսքից մեր սիրտը պետք է տխուր հառաչի:

ԼՈՒՑԻՈՍ

Ուրեմն, իմացեք, իմ բարեկամներ,  
Այդ նրանք էին, նպովյալ Քիրոնն ու Դեմետրիոսը,

—148—

Որ սպանեցին եղբորը կայսրի,  
Այդ նրանք էին, որ մեր քրոջը բռնաբարեցին,  
Եվ նրանց դաժան հանցանքի համար մեր եղբայրների  
գուխը կտրեցին,

Ծաղրեցին մեր հոր արցունքները սուրբ  
Եվ ստորաբար կտրեցին նրա ձեռքը փառասանծ,  
Որ Հռոմի համար կռվեց քաջաբար,  
Ճամփեով նրա թշնամիներին դեպի գերեզման:  
Եվ ես, վերջապես, անմարդկայնորեն աքսորվել էի:  
Անուր փակեցին դարպասն իմ առաջ:  
Ես արտասովորով ապաստան գտա թշնամու տանը,  
Արցունքներիս մեջ նրանք խեղդեցին թշնամությունը,  
Բացեցին իրենց գիրկը իմ առաջ բարեկամի պես:  
Բայց դուք իմացեք, ես՝ աքսորյալս, դարձյալ պահեցի  
Հռոմն իմ արյամբ

Եվ նրա կրծքից ես թշնամության սուրը վանելով,  
Ուղղեցի դեպի իմ խիստ հոգնաբեկ մարմնի վրա:  
Ավա՛ղ, դուք գիտեք, որ ես չեմ սիրում պարծենկոտություն,  
Իմ սպիները, թեև համբաշունչ, բայց վկաներ են,  
Որ ճշմարտությամբ իմ խոսքն է լեցուն,  
Բայց կարծես փոքր-ինչ փորձեցի ցույց տալ արժանիքներս,  
Օ՛, ինձ ներեցեք, քանզի երբ կողքիդ չունես բարեկամ,  
Դու ստիպված ես ինքդ քեզ գովել:

ՄԱՐԿՈՍ

Այժմ իմ հերթն է խոսելու: Նայեք այս երեխային,  
Ցույց տալով երեխային, որ գրկել է ծառաներից մեկը  
Որ Տամորան է լույս աշխարհ բերել,

—149—

Կեղտուտ վիժվածքը անմաքուր Մավրի՝  
Գլխավոր սաղրիչն ու ստեղծողը այս աղետների:  
Այդ չարագործը դեռ կենդանի է, Տիտոսի տանն է,  
Նա կհաստատի, որ այս բոլորը ճշմարտությունն է:  
Այժմ դուք դատե՛ք՝ չէ՛ր կարող Տիտոսն իր վրեժն առնել,  
Տեսնելով այսքան խիստ անտանելի ու անպատմելի  
վիրավորանքներ,

Որոնցից մեկը չէր կարող կրել ոչ մի արարած:  
Այժմ ինացաք ճշմարտությունը: Ի՞նչ կասեք հիմա դուք  
հռոմեացիք,

Ո՞րն է մեր մեղքը, ցույց տվե՛ք նա մեզ,  
Եվ մենք՝ այստեղից խեղճ բեկորներս Անդրոնիկոսի,  
Ձեռք-ձեռքի տված՝ կնետվենք ներքև,  
Որպեսզի փշրենք մեր ուղեղները քարերի վրա  
Եվ մեր ողջ տոհմը ջնջվի հավիտյան երկրի երեսից:  
Խոսե՛ք, հռոմեացի՛ք, լոկ մի բառ ասե՛ք,  
Եվ Լուցիոսն ու ես, ձեռք-ձեռքի տված, մեկ վար կնետենք:

#### ԷՄԻԼԻՈՍ

Մոտ եկ, պատվարժան ով հռոմեացի,  
Եվ դու հեզորեն բեր մեր կայսրին, քանպի քաջ գիտեմ,  
Որ ժողովուրդը միաձայն կասի. «Թող այսպես լինի»:

#### ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐ

Կեցցե՛ Հռոմի մեր արքայական կայսր Լուցիոսը:

#### ՄԱՐԿՈՍ

(Ժառանգորդին)

Մտե՛ք Տիտոսի տունը վշտահար,  
Անհավատ Մավրին քարշ տվե՛ք այստեղ,

Որպեսզի պատժենք նրան սուկալի տանջահար մահով,  
Քանպի նա ապրեց չարագործ կյանքով:

Ժառանգորդ գնում են: Իջնում են Լուցիոսը, Մարկոսը և ուրիշներ

#### ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐ

Կեցցե՛ Լուցիոսը, կայսրը Հռոմի:

#### ԼՈՒՑԻՈՍ

Շնորհակալություն, ազնիվ, հռոմեացիք, ես կուզեի այնպես  
Երկիրը վարել, որպեսզի բուժվեն վերքերն Հռոմի  
Եվ ջնջվեն նրա տառապանքները,  
Բայց, բարի մարդիկ, ինձ տվե՛ք միջոց,  
Քանպի բնությունը մի ծանր պարտք է դնում ինձ վրա:  
Դուք մի կողմ անցե՛ք, մոտ եկ, հորեղբայր,  
Եվ հրաժեշտի արցունքով ցողիր մարմինն անկեղան:

#### Համբուրում է Տիտոսին

Օ՛, թող ընդունեն քո պաղ շուրթերը իմ տաք համբույրը,  
Այս արցունքների բյուր կաթիլները թող թափվեն արևոտ  
քո դեմքի վրա,

Ահա իսկական ու վերջին պարտքը քո ազնիվ որդու:

#### ՄԱՐԿՈՍ

Թող ես հատուցեմ շուրթերիդ վրա  
Արցունքն՝ արցունքով, համբույրն՝ համբույրով:  
Օ՛, եթե տուրքը այս արցունքների լինե՛ր անքանակ,  
Անհաշիվ ու մեծ՝ դարձյալ եղբայրդ քեզ կվճարե՛ր:

#### ԼՈՒՑԻՈՍ

Մոտ արի, տղա՛ս, մոտ արի և դու սովորիր մեզնից,  
Թե ինչպես պետք է արցունքներ հեղել:

Քո բարի պապը քեզ շատ էր սիրում,  
Քեզ օրորում էր ծնկների վրա, սեղմում իր կրծքին,  
Կուրծքը բարձ արած՝ դու քնում էիր նրա երգի տակ,  
Նա քեզ պատմում էր ոսկյա հեքիաթներ  
Եվ մանկությունդ լցնում երազով,  
Ահա թե ինչու դու որպես սիրող ու բարի կավակ,  
Թափիր մի քանի փոքրիկ կաթիլներ քո նուրբ գարունից,  
Քանզի բարեգութ մայր բնությունը այսպես է ուզում:  
Ընկերն ընկերոջ վիշտն է ամոքում,  
Դու հրաժեշտ տուր ու հանձնիր հողին մարմինը նրա,  
Սիրո տուրք տալով այս պահիվ մարդուց բաժանվիր  
ընդմիջտ:

#### ԿՐՏՍԵՐ ԼՈՒՑԻՈՍ

Օ՛, իմ պապ, իմ պապ, ես ամբողջ հոգով կուզեի մեռնել,  
Որպեսզի նորից դու աշխարհ գայիր,  
Իմ արցունքները չեն թողնում խոսել իմ խեղճ պապի հետ,  
Հեկեկանքներս խեղդում են, երբ որ բերանս եմ բացում:

*Մտնում են ծառաները Ահարոնի հետ*

#### Ա. ՀՌՈՍԵԱՏԻ

Անդրոնիկոսներ, բավ է վշտանաք,  
Դուք չարագործի վճիռն արձակեք,  
Որ պատճառն եղավ այս սարսափազդու բոլոր դեպքերի:

#### ԼՈՒՑԻՈՍ

Թող թաղեն նրա մարմինն հողի մեջ, գլուխն՝ հողից դուրս,  
Թող մնա այնտեղ ու կատաղությամբ ուտելիք խնդրի,  
Եվ եթե մեկը կարեկցի նրան, նա պետք է մեռնի

Այդ բանի համար: Սա մեր վճիռն է:  
Հսկե՛ք, որպեսզի նրա մարմինը հողի մեջ թաղվի:

#### ԱՀԱՐՈՆ

Օ՛, ինչո՞ւ լուռ եք, իմ ահեղ պայրո՛ւյթ ու կատաղությո՛ւն,  
Ես երեխա չեմ, որպեսզի ստոր իմ աղոթքներով  
Չղջամ իմ արած չար արարքները:  
Եթե ինձ ասոված ազատություն տար՝  
Տասն հազար անգամ ավելի դաժան բաներ կանեի  
Եվ եթե կյանքում ես բարություն եմ արել մի անգամ,  
Իմ ամբողջ սրտով պղծում եմ հիմա:

#### ԼՈՒՑԻՈՍ

Թող նախկին կայսրի բարեկամներից մի քանի հոգի  
Տանեն այստեղից մարմինը նրա  
Եվ դնեն դագաղն իր նախնիների գերեզմանոցում:  
Իմ ավնիվ հորը ու Լավինիային փակեք հայրական  
դամբարանի մեջ:

Գալով այդ անհազ, անկուշտ վագրուհուն՝ Տամորային նենգ,  
Պետք չէ ո՛չ թագման արարողություն, ո՛չ սզի պգեստ,  
Թող չղողանջեն պանգերը թաղման,  
Թող գազանները ու թռչունները հոշոտե՛ն նրան,  
Քանզի նա ապրեց գազանի կյանքով,  
Նա արժանի չէ ոչ մի գթության.  
Թող մեր վճիռը ի կատար ածեն նրա նկատմամբ,  
Որից ծնվեցին մեր վշտերն անհուն:  
Այս բանից հետո մենք կհաստատենք այնպիսի կարգեր,  
Որ էլ չցնցվի նման դեպքերից տերությունը մեր:

*Գնում են:*

**Որ նշավակեն իմ ավագությունն անարժանությամբ:**— Դեղինը ենթադրում է, որ Սատուրնինուր և կատի ունի իր երիտասարդ հասակը, որ ինքն անկարող է իր իրավունքները պաշտպանել: Պատանի է կոչում նրան և Տամիրան:

**Որքեմն, հակեք Կապիտոլիոսի մուտքը վեհաշուր:**— Հալանորեն, Բապիանոսի կողմնակիցներն արդեն փակել էին Կապիտոլիոսի մուտքը, որպեսզի իր հակառակորդները չկարողանան վեր բարձրանալ և զանգ գրավել:

**Թող արժանիքներն արդար ընտրությամբ փայլեն Հռոմում:**— Սատուրնինուր իր իրավունքները հիմնավորում է օրինական ժառանգությամբ, Բապիանուր ցանկանում է ընտրված լինել ազնվորեն, իր վաստակի համար:

**Պիոս անունով:**— Պիոս, լատիներեն նշանակում է բարեպաշտ:

**Բացեք դարպասը:**— Կապիտոլիոս տանող դռները:

**Ի ու մեծ պաշտպանն ես Կապիտոլիոսի:**— Հռոմեացիների գլխավոր աստված Յուպիտերը: Կոչ է անում Յուպիտերին՝ սրբազօծել իր տղաների թաղման ծիսակատարությունն իր ներկայությամբ, Անդրոնիկոսների ընտանեկան դամբարանում:

**Ստիքս:**— Ստորգետնյա թագավորությունն գետ, որի ափերին, համաձայն հնագույն հավատալիքների, թափառում էին հողիները սցեբան ժամանակ, քանի դեռ նրանց մարմինները հողին չէին հանձնված:

**Թողին անխնա վրեժն առնելու Թրակիա երկրի նեղ բռնակալից՝ հենց իր վրանում:**— Տրոյայի թագուհիներից Հեկտորի համում է Թրակիո թագավորի Պոլիմնեստրի աչքերը, քանի որ սա սպանել է նրա որդիներից մեկին:

**Սոլոն:**— Աթենական իմաստուն և օրենսդիր VII—VI դդ. մ.թ.ա.: Ըստ ավանդության, ենթադրվում էր, որ ճշմարիտ երջանիկ կարելի է հասնել միայն մտածներին, քանի որ նրանք ավելի քիչ են ենթակա ճակատագրի փոփոխությանը:

Սույն ծանոթագրությունները Եքսպիտի ամբողջական հրատարակությունների հիման վրա կազմել է Նշան Մարտչյանը:

**Այս սպիտակափայլ անքիծ թիկնոցը:**— Սպիտակ թիկնոց՝ պալիում էին հագնում Հռոմում որևէ կարևոր պաշտոնի կանգնիդատները:

**Ձեզ նոր հոգների փինը նեաելով:**— Նոր կառավարիչ ընտրելու անհրաժեշտության հոգները:

**Ճերուս:**— Ապոլլոնի անվանումներից մեկը:

**Կդառնան դապակն ու մայրը նրա պատանեկության:**— Տամիրան հիշեցնում է այն, որ ինքը շատ մեծ է Սատուրնինոսից և կարող էր մայր լինել նրան:

**Նա, ով ամենուր այդ կհաստատի, սակայն ոչ՝ այստեղ:**— Բայց ոչ այստեղ, եղբոր դիակի կամ հոր ներկայությամբ:

**Չէ՞ որ դու, Մարկոս, փորձեցիր զարկել իմ սաղավարտին:**— Այսպիսին՝ վիրավորանք հասցրեց:

**Հիշիր, թե ինչպես հույներն Ալաքսիս հանձնեցին հողին:**— Տրոյայի տակ հույները Լաերտի որդի Ոդիսևսի խորհուրդով հողին են հանձնում Ալաքսիս, որ կատաղության մոլուցքի մեջ ուզում է կոտորել Ալաքսիսը և ապա հուսահատության մեջ ինքնասպանություն է գործում:

**Մի՛ վախենաք դուր, շահել պատրիկներ և դու՛ Լավինիա:**— «Ջանեկներ» ասելով նա նկատի ունի Տիտոսի որդիներին:

**Միրո-օր:**— Իրավաբանական տերմին, նշանակում է օր, որ հատկացված է լինում հաշտարար համաձայնությունների:

**Քո կողքին կապեց մի սուր-խաղալիք:**— Պարելիս Ծեքսպիտի ժամանակի կավալերները իրենց գոտիներից բուտաֆորային սրեր էին կախում, որոնցով, իհարկե, անկարելի էր սրամարտել:

**Կին է՛ կարող ես ետևից քարշ գալ, // Կին է՛ կարող ես նրան տիրանալ:**— Մենք արդեն համոզվեցինք այս խոսքերին «Հենրի Չ»-ի առաջին մասում (V, 3), Հանի որ այս տողերը համոզիչում ենք նաև Գրիմի «Պլանետոմախիա»-ում (1585), ապա նկարավոր է, որ սա առում լինի:

**Նրանից մեծերն են Վուլկանի զարդերն հեգությամբ կրել:**— Չարդերը՝ եղջյուրներն են, քանի որ Վուլկանի կին Վեներան կապված էր Մարսի հետ:

**Փառքի սուճար:**— Կամ, որ համարյա նույնն է Համբալի, հների պատկերացմամբ՝ ամբողջովին կառուցված էր աչքերից, ականջներից և լեզուներից:

**Ես պետք է ձենե մի անգնբազանց սրիկալություն:**— Ամարոնի

թաղած ոսկին վերցված էր թագուհու զարդատուփից և անխորժու-  
թյունների աղբյուր կդառնար գանձողի համար:

**Թափառաշրջիկ արքայորդու հետ:** — Այսինքն՝ Հենաս. սրա սիրո  
պատմությունը Կարթագենի թագուհի Դիոնի հետ, որ կազմում է Տրո-  
յայի անկումից հետո նրա թափառումների ուշագրավ էպիզոդներից մե-  
կը, վերարտադրված է Վիրգիլիոսի «Հենեակաև»-ում:

**Սատուրն:** — Սատուրնի անվանումը հավատարիքների համաձայն, նը-  
րանք, ովքեր ծնվում են Սատուրն մոլորակի տակ, աչքի են ընկնում  
զգացումների ստանդոյանք, միևնույն Վեներա մոլորակի տակ ծնված-  
ների ջերմ են, կրթու:

**Օ՝ ո՛չ, Տամորս. նրանք Վեներայի նշանները չեն:** — Այսինքն՝ պի-  
րային ցանկությունը մատուղ նշաններ:

**Նրա Փիլոմելն իր լեզուն պետք է կորցնի այստեղ:** — Նկատի ունի  
Լավինիային: Փիլոմելի առաապելը, որի մասին շատ ակնարկներ կան  
«Տիտու Անդրոնիկոսում», Շեքսպիրին հաջանի է Օվիդիոսից և կապ-  
նում է հետևյալում: Փիլոմելին պատվագրվում է իր Պրոնկա քոռչ ա-  
մուսինը՝ Թրակիայի թագավոր Թերեոսը, և ապա կտրում է լեզուն, որ-  
պեսզի իր կատարած չարագործությունը գաղտնի մնա:

**Ակտեոն:** — Երիտասարդ որսորդ, որ ակամա ակամատու է լինում,  
թե ինչպես է Դիանան մերկանալով՝ լողանում իր հավերժահարսերի  
հետ: Ջայրացած աստվածուհին Ակտեոնին դարձնում է եղջերու, որից  
հետո նրան պատստոտում են սեփական շները:

**Ձեր սև քիմերցին:** — «Ռիսակակի» մեջ քիմերցիների մասին  
պատմվում է, թե նրանք ապրում են ծայրագույն Արևմուտքում, մի երկ-  
րամասում, որտեղ երբեք արևի ճառագայթներ չեն թափանցում: Պատ-  
մական ժամանակաշրջանում քիմերցիներ էին կոչում այն ժողովրդին,  
որ ապրում էր Տալիիկյան թերակղզում: Եվ սակայն ոչ մեկին և ոչ էլ  
մյուսին սևամորթ չէին պատկերացնում: «Սև» բառն այստեղ օգտագործ-  
ված է փոխաբերական իմաստով՝ լույսից զրկված, հոգով մուգը:

**Ինն սարսափազդու գեղձի բնից:** — Գեղձին համարվել է չարա-  
գուշակ ծառ, շատ հարմար ամեն տեսակ կախարդանքի համար: Տըն-  
կում էին գլխավորապես գերեզմաններում:

**Շամիրան:** — Նիկելի կիսադիցարանական թագուհի, ըստ ավան-  
դության, աչքի է ընկել ոչ միայն փիթյարի մտահղացումներով, այլև  
արտակարգ դաժանությանը ու ցանկապիությունը:

**Աղերսի նրան. գուցե կանացի գուրը շարժի:** — Այս խոսքերով  
նա խնդրում է Բիրոնին իր կողմից միջնորդել իր դաժան մոր ստաջ:  
Դրան Բիրոնը պատասխանում է:

**Ի՞նչ: Կամենում ես, որ ինքս ցույց տամ, թե ապօրինի զավա՞կ եմ:**  
— Այսինքն՝ հանդես բերելով գթասրտություն, ցույց կտար, որ ինքը  
Տամորսից հարսազատ որդին չէ:

**Արրուհու մատին կա մի թանկարժեք փապուն մատանի, // Որ լույս  
է տալիս այս մթին փոսին:** — Հոնանի կարծիքով, Շեքսպիրն այս-  
տեղ նկատի ունի կարմիր նուաքար, որին վերագրվում էր խավարի  
մեջ լույս տալու կարողություն:

**Այսպես գիշերով լուսինն էր փապուն Պիրամի վրա, // Երբ նա  
պառկած էր՝ իր սիրած կույսի արյամբ շաղախված:** — Օվիդիոսի «Մե-  
տամորփոզներ»-ում պատմվում է Պիրամի և Թիսբեի սիրո պատմու-  
թյունը: Գալով ժամադրավար, Թիսբեն հանդիպում է աղուծի և փախ-  
չում է նրանից, թողնելով իր քողը, որ անխապես ինչ-որ մեկին հոշո-  
տած աղուծը գզգզում է և արյունոտում իր մուռթով: Ժամադրության  
զգալով մի փոքր ուշ, Պիրամը նկատում է քողը և որոշելով, որ իր սի-  
րեցյալը մեռած է, սրով ինքնասպան է լինում: Վերադարձած Թիսբեն,  
տեսնելով Պիրամի դիակը, նույնպես ինքնասպան է լինում:

**Այնքան զարշեփ, որքան Կոցիտի երսկը մթին:** — Հունական դի-  
ցարամության մեջ Կոցիտը բացի ու հասաչանքների գետ է ստորգետ-  
նյա թագավորությունում:

**Ընկնում է փոսը:** — Բլիխնուսն ընկնում է նույն փոսը, որտեղ գրա-  
նելում էր Անարոնի թողած ոսկին և հասիանոսի դիակը:

**Տիտոս գտավ, ինքն էլ վերցրեց:** — Դելիուսի նկատառումով, այս  
մասամբ հավատում է Անարոնի ու Տամորսի անխնական պայմանա-  
վորվածությանը, ըստ որի նա պետք է վեճի բունվեր Բասիանոսի հետ,  
իսկ որդիները պետք է օգնեին նրան: Այստեղ նա նույնիսկ նամակ է  
ցած գցում, որպեսզի Անդրոնիկոսը գտնի և ապա հանձնի իրեն:

**Տիտան:** — Այստեղ՝ Օլիմպոսի աստվածներից մեկը, որ մարտնչում  
է խավարի դեմ:

**Եվ կնրափեր ձերքերի նման:** — Ձերքեր շունը, որ պահպանելիս է  
լինում հանդերձյալ աշխարհի (դժոխքի) մուտքը, Օրփեոսի քաղցրա-  
լուր երգի տակ ննչում է, նրան հնարավորություն տալով կնոջը հան-  
դիպելու համար մտնելու դժոխք:

Ինչո՞ւ ստիպել, որ Էնեսար վերստին պատմի, // թե ինչպես այրվեց չքնաղ Տրոյան: — Հիշեցնել դժբախտ Լալիմիային ձեռքերի մասին, նույնն է թե հարկադրել Էնեսաին կրկնելու պատմությունը Տրոյայի կործանման մասին:

**Աղջիկս ասում է. որ ինքը ուրիշ խնիչք չի խմում. // Բացի իր վշտի հորդ արցունքներից: —** Լալիմիայի տառապանքները ածիկ են ասես, որի շնորհիվ այտերի արցունքները նրա համար փոխվում են ընկելիքի:

**Այո, Կորնելիան իր որդիների... և «Օրատորը» Մարկ Տուլլիուս: —** Կորնելիան Գրակոս եղբայրների մայրն է, որ դատախազական է ներանց մեջ անձնուրաց հայրենասիրություն և սեր ժողովրդի նկատմամբ: Տուլլիուսը՝ Մարկոս Տուլլիոս Ցիցերոնն է: Նրա «Օրատոր» անունով գիրքը նվիրված է հռետորական արվեստին:

**«Մետամորֆոզները» Օվիդիոսի: —** Շեքսպիրի ծանոթությունը Օվիդիոսի կյանքին ու ստեղծագործությանը վկայում են նաև «Միտո անպատուղ հիգները», «Ինչպես կուզեք», «Անասնձ կնոջ սանձահարումը», «Հեղինի Վեցերորդ», մասն էրորդ:

**Նայիր, թոռնիկս, գրքի էջերն է նա թերթում արագ: —** Ոմանք նշում են թվացող անհարկության վրա, ձեռքերը կտրած Լալիմիան թերթում է գրքի թերթերը: Բաց նա, հավանորեն զրկվել է թևերի թաթերից և այժմ նրանց մնացորդներով կարող է կաշել գրքին: Անա թե ինչու Տիտոսը տղային հրամայում է օգնել նրան:

**Տղաս՝ դու հռոմեացի Հեկտորի հույսը: —** Ինչպես որ տրոյացի Հեկտորի համար հույս էր նրա մանկահասակ որդի Աստիանաքը, այնպես էլ «հռոմեական Հեկտոր»՝ Լուցիոսի համար ապավին է հանդիսանում նրա մատաղահաս որդի Լուցիոսը:

**Ինչպես որ երդվեց ջանել Բրուտոսը, // Լուկրեցիայի հոր և ամուսնու հետ: —** Յունիոս Բրուտոսը հոր և Լուկրեցիայի պատվազրկված ամուսնու հետ երդվում է նրա վրեժը լուծել: Անխնայության համաձայն, դրա հետևանքը լինում է թագավորական իշխանության տապալումը և հանրապետության հաստատումը Հռոմում 509 թ. մ. թ. ա.:

**Հուսիսի քամին ցիրուցան կանի այս ավազները, // Ինչպես Սիրիի թերթերը մզում...: Լեզենդար «Սիրիի գրքերը», որոնք իբր թե պարունակում էին գուշակություններ Հռոմի հետափոխ ապագայի մասին, քուրմերի հսկողության տակ պահվում էին Կապիտոլիումում: Ավելի ուշ նրանք անհայտացան ստեղծվածային հանգամանքներում:**

**Մարկոս, դու հսկիր այս խելագարին: —** Չհասկանալով Տիտոսի նախորդի խոսքերի դառն սարկազմը, Մարկոսը որոշում է, որ նա վերջինից ցնորված է:

**Իր եղբոր առաջ վիրավորեցի տրիբուն Մարկոսին: —** Ակնարկ այն դեպքերի մասին, որոնք պատկերված են երրորդ արարվածի առաջին տեսարանում:

**Եվ նա հերքում է բոլոր գույները: —** Ահարոնն ուզում է ասել, որ նա գույներ չի կարող ծածկվել ոչ մի գույնով:

**Օ՞, դավաճան գո՛ւն: —** Նեգրի համար ապիտակամորթի կարմրելու սովորությունը խորթ մի բան էր և տվյալ դեպքում շատ անհարմար կլիներ Ահարոնի նման մի խարդախի համար:

**Ես ու իմ տղան կհասնենք այստեղ՝ ձեր քամու դիմաց: —** Ահարոնը չի վառահոմ Տամորացի որդիներին, ուստի և ուզում է իմանալ նրանց մտադրությունը:

**Եվ հասնեք ուղիղ երկրի կենտրոնը: —** Գունելու համար Աստրեալին, որ այլևս երկրի վրա չէ:

**Վիրավոր Տուլլը այնպիսի հարված հապրեց Խոյին, // Որ սրա երկու եղջյուրն էլ ընկան ուղիղ պալատ: —** Մարկոսը ձևացնում է, թե երկրի վրա ընկած նետերն ընդունում է իբրև համաատեղության իր պոկած փշրանքները:

**Ես համոզեցի, որ հայրդ կտրեց իր ձեռքի մեկը: —** Ակնարկում է այն ստոր խարդախանքը (III, 1), որի շնորհիվ համոզում է Տիտոսին, թե իր կտրած ձեռքի համար արքան կների նրա որդիներին:

**Մտնում են Տամորան, Գեմետրիոսն ու Քիրոնը զգեստները փոխած: —** Հետագա տողերից պարզ է դառնում, թե ինչպես են նրանք հագնված. նրանք ներկայացնում են Վրեժ, Սպանություն և Բռնություն:

**Հեղինա: —** Արևի անխանումներից մեկը:

**Ավելի դաժան, // Քան թե խելանեղ կենսավրուսների խնջույքն ահարկու: —** Լապիֆեների թագավոր Պրիֆեստի ամուսնական խնջույքին իբրև հյուրեր հրավիրվում են նաև կենսավրուսները, որոնք, հարբելով, ցանկանում են ստեանգել հարսին, բայց գլխովին կտորվում են:

**Մի՞թե երկներս կա ուրիշ արև: —** Տեսնելով Լուցիոսին, Սատուրնիմոսը դրանով ուզում է ասել, մի՞թե Հռոմում իրենից բացի մի այլ տիրակալ էլ կա:

---

**Վիլյամ Շեքսպիր**  
**ՏԻՏՈՍ ԱՆԴՐՈՆԻԿՈՍ**  
Ողբերգություն

**Вильям Шекспир**  
**ТИТ АНДРОНИК**  
Трагедия  
(На армянском языке)  
Издательство «Советакан грох»,  
Ереван, 1983

Խմբագիր՝ **Գ. Գ. Խաչատրյան**  
Նկարիչ՝ **Վ. Բ. Մանդակունի**  
Գեղ. խմբագիր՝ **Վ. Ա. Հարությունյան**  
Տեխ. խմբագիր՝ **Մ. Է. Ծանձապանյան**  
Վերստուգող պրագրիչ՝ **Ա. Ա. Ասրյան**

ИБ № 3916

Հանձնված է շարվածքի՝ 17.08.82.: Ստորագրված է տպագրության՝  
26.11.82: Ֆորմատ՝ 70×108<sup>1/32</sup>: Թուղթ՝ տպագրական № 3: Տառատե-  
սակ՝ «Մեղացականյան»: Տպագրություն՝ քարձր: 7,0 պպմ. տպ. մամ.:  
4,95 հրատ. մամ.: Պատվեր՝ 1639: Տպարանակ՝ 10.000: Գինը՝ 45 կոպ.:  
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տեղյան 91:

Издательство «Советакан грох», Ереван—9, ул. Торяна 91.  
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի անտարի գոր-  
ծերի պետական կոմիտեի Արտաշատի շրջանային տպարան:  
Арташатская районная типография Госкомитета по делам изда-  
тельств, полиграфии и книжной торговли Арм. ССР.

45 Կ.

«Ռոմեոսկան  
գրող»